Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

Լ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ, ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Երևան 2001

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր **Ա. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ**

ԼԱՎՐԵՆՏԻ ԱՇՈՏԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ - Ամերիկայի Միացյալ Նահանգները, հայոց ցեղասպանության դատապարտումը և թուրքական հակազդեցությունը, 113 էջ:

1. ԱՄՆ-Ի ՊՐԵԶԻԴԵՆՏՆԵՐԸ, ԿՈՆԳՐԵՍԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ

Առաջին աշխարհամարտի սկզբից ևեթ Ամերիկայի Միացյալ Նահանգները իրենց դրսևորեցին որպես միջազգային խաղաղության համար պայքարող մի երկիր, որը դեմ էր Գերմանիայի հեգեմոնիստական ձգտումներին, օգնում էր Անտանտին, թեև շահագրգռված չէր վերջինիս հզորացմամբ:

1916թ. սեպտեմբերին ամերիկյան պաշտոնական շրջանների ակտիվ միջամտությամբ կազմակերպվեց «Հայերի օգնության կոմիտեն»:

1916թ. փետրվարի 9-ին և հուլիսի 18-ին ԱՄՆ-ի Սենատը ընդունեց թիվ 12 բանաձևը, որով միջնորդում էր ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին՝ հատուկ օր սահմանել հայերի օգնության հիմնադրամներին հանգանակության միջոցով ամերիկացիների կարեկցանքը արտահայտելու համար:

Բանաձևը արձանագրել է՝

«... Նկատի ունենալով, որ պատերազմի մեջ ներգրավված երկրներում այժմ կան մի քանի հարյուր հազարավոր սննդի, հագուստի և օթևանի կարիք ունեցող հայեր,

Նկատի ունենալով, որ նրանցից շատերը ելնելով պետության պատերազմի մեջ գտնվելու հանգամանքից, ստիպված էին թողնել իրենց տները և ունեցվածքը՝ զրկված լինելով տարրական կարիքները հոգալու հնարավորությունից, որը պատճառ էր դառնում քաղցի, հիվանդությունների և անասելի տառապանքների,

Նկատի ունենալով, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների ժողովուրդը ցավով ընկալել է այս բազմաթիվ մարդկային էակների սարսափելի իրավիճակը և գրկաբացորեն պատասխանել է նրանց օգնության խնդրանքին, երբ էլ որ նման խնդրանք հասել է նրանց՝

Ուստի և Սենատը որոշում է (Ներկայացուցիչների պալատի համաձայնությամբ).

Ելնելով այն ողբերգությունից, դժբախտությունից և տանջանքներից, որոնցով տառապում են այս մարդիկ, Միացյալ Նահանգների նախագահին հարգալից խնդրվի օր սահմանել, որի ընթացքում այս երկրի քաղաքացիները կարող են իրենց կարեկցանքը արտահայտել հանգանակություն կատարելով պատերազմող երկրներում այժմ բացված հայ օգնության հիմնադրամներին»[1]:

[1] The Armenian Genocide. Documents and Declarations 1915-1995, Compiled with an Introduction by Harut Sassounian, Los Angeles, 1995, p. 16.

1916թ. օգոստոսի 31-ին Վաշինգտոնում ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնը հանդես եկավ մի առանձին հայտարարությամբ, որտեղ ասվում էր՝

«... Ուստի և ես վստահ եմ, որ Միացյալ Նահանգների ժողովուրդը կոժանդակի այս մարդկանց, որոնք հարված են ստացել պատերազմից, սովից և հիվանդություններից:

Այժմ, դրա համար, ես, Վուդրո Վիլսոնս՝ Միացյալ Նահանգների Նախագահը, ելնելով Սենատի արված առաջարկությունից և Կոնգրեսի խնդրանքից 1916թ. հոկտեմբերի 21-ի շաբաթ և հոկտեմբերի 22-ի կիրակի օրերը նշանակել եմ իբրև օրեր, որի ժամանակ Միացյալ Նահանգների մարդիկ կարող են իրենց ցանկացած հանգանակությունը կատարել՝ օգնելու սիրիացի և հայ հալածված ժողովուրդներին:

Հանգանակությունները կարելի է ուղղել Վաշինգտոն, Հայկական Կարմիր խաչին, Կոլումբիայի դաշնային շրջան, որտեղից հոգ կտանեն դրանց ճիշտ բաշխումը:

Իբրև սույնի վկայություն, ես մեկնում եմ իմ ձեռքը և կոչ եմ անում Միացյալ Նահանգներին հաստատել այն»[2]:

1918թ. սկզբներին արդեն հավաքվել էր տասնմեկ միլիոն դոլար և մեծ քանակությամբ ապրանքներ:

1917թ. փետրվարի 3-ին ԱՄՆ-ը խզեց դիվանագիտական հարաբերությունները Գերմանիայի հետ:

1917թ. ապրիլի 2-ին հանդես գալով ամերիկյան կոնգրեսում, նախագահ Վ. Վիլսոնը հայտարարեց. «Մենք ուրախ ենք պայքարելու վերջնական խաղաղության համար ամբողջ աշխարհում և ժողովուրդների ազատության համար, ներառյալ գերմանական ժողովուրդը, մեծ և փոքր երկրների իրավունքների համար՝ ամենուրեք ընտրելու կյանքի իրենց ուղին... Մենք պայքարում ենք միայն մարդկանց իրավունքների համար»[3]:

1917թ. ապրիլի 6-ին ԱՄՆ-ը պատերազմ հայտարարեց Գերմանիային և հակառակ պատերազմող դաշնակիցների պահանջին, պատերազմ չհայտարարեց Թուրքիային:

Հանդես գալով 1917թ. դեկտեմբերի 4-ին կոնգրեսում, ԱՄՆ-ի նախագահը հայտարարեց, որ «մենք հույս ունենք թուրքական կայսրության ժողովուրդների համար ապահովել իրավունք և հնարավորություն՝ իրենց կյանքը դարձնելու անվտանգ, իսկ իրենց ճակատագիրը՝ ապահով ագրեսիաներից ու անարդարությունից, օտարերկրյա արքունիքների ու կուսակցությունների կարգադրություններից»:

1917թ. դեկտեմբերի 22-ին Վ. Վիլսոնը հատուկ հանձնարարական է տալիս կառավարությանը՝ ուսումնասիրել Հայաստանի հետագա ճակատագրի հետ կապված դաշնակից պետությունների կարծիքը և այդ կապակցությամբ մշակել ԱՄՆ-ի դիրքորոշման հիմնական ուղղությունները:

Հանձնարարականում ասվում էր. «... մենք պետք է ապահովենք հայերի ինքնավարությունը ոչ միայն արդարության և մարդկության սկզբունքներից ելնելով, այլև թույլ տալ Փոքր Ասիայում վերակազմավորել այն միակ ազգը, որն ընդունակ է կանխելու թուրքերի տնտեսական մոնոպոլիզացիան գերմանացիների կողմից... Անհրաժեշտ է թուրքական տիրապետությունից ազատագրել ճնշված ժողովուրդներին: Սա նվազագույն դեպքում նշանակում է Հայաստանի ինքնավարություն և Պաղեստինի, Սիրիայի, Միջագետքի, Արաբիայի պաշտպանությունը քաղաքակիրթ պետությունների կողմից»[4]:

1918թ. հունվարի 8-ին հրապարակվեց նախագահ Վ. Վիլսոնի տասնչորս կետերից բաղկացած հայտարարությունը, որոնցից տասներկուերորդը վերաբերում էր հայերին:

Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն, որի կազմի մեջ էին ընդգրկված կոնգրեսի անդամներ, հոգևորականներ, բարեգործներ և ձեռնարկատերեր, համառորեն պաշտպանում էր Հայաստանի անկախության գաղափարը: 1918թ. կոնգրեսական Էդուարդ Լիթլը կոնգրես ներկայացրեց միացյալ թիվ 336 բանաձևը, որի նախագծում ասվում էր. «հայ ժողովուրդն իրավունք ունի ազատ և անկախ լինելու, ելք ունենալով դեպի ծով և տերը լինելու այն քրիստոնեական մշակույթի, որի համար նրա զավակները նահատակվեցին: Արարատի հանրապետությանը (Երևանի կառավարություն) պետք է տալ համընդհանուր ճանաչում»[5]:

Բանաձևի այս նախագծին երկու ամիս անց, դեկտեմբերի 10-ին հաջորդեց սենատոր Հենրի Կաբոտ Լոջի կողմից սենատին ներկայացված թիվ 378 բանաձևը, որտեղ առաջարկվում էր Սենատին կարծիք հայտնել, որ «... Հայաստանը, ներառյալ Թուրքահայաստանի վեց վիլայեթներն ու Կիլիկիան, Ռուսաստանը, պարսկական, աղրբեջանական նահանգների հյուսիսային մասի գավառները

---

[2] Նույն տեղում, էջ 22:

[3] Хрестоматия по истории международных отношений, стр. 348-349.

[4] Richard Hovanissian, The Alles and the Armenia, 1915-1918, "Journal of Contemporary History", 1968, vol. 3, № 1, p.p. 145-168.

[5] R. Hovanissian, նույն տեղում:

պետք է անկախ լինեն և ամերիկյան օրենսդիր մարմինը հուսով է, որ Խաղաղության կոնգրեսը միջոցներ կձեռնարկի Հայաստանին օգնելու և անկախ հանրապետություն ստեղծելու համար»[6]:

1920թ. ապրիլի 23-ին ԱՄՆ-ի կառավարությունը ճանաչեց Հայաստանի անկախ Հանրապետության կառավարությունը, առանց կանխորոշելու Հայաստանի, սահմանները:[7]

1918-1920թթ. ամերիկյան կառավարության կողմից հայանպաստ գործունեություն ծավալելու արդյունքում 1920թ. մայիսի 13-ին Միացյալ Նահանգների Սենատը ընդունեց թիվ 359 բանաձևը, որտեղ ասվում էր.

«Նկատի ունենալով, որ Սենատի արտաքին հարաբերությունների ենթակոմիտեի կողմից կազմակերպված լսումների վկայություններով հստակորեն հաստատվեցին զեկուցումները կոտորածների և այլ դաժանությունների հավաստի լինելու մասին, որից տառապել է հայ ժողովուրդը,

Նկատի ունենալով, որ Միացյալ Նահանգների ժողովուրդը խորապես ազդված է այժմ Հայաստանում ծավալված անպաշտպանության, սովի և դժբախտության ողբալի պայմաններից, ուստի և

Որոշեց, որ Միացյալ Նահանգների Սենատը սույնով դիմում է Հայաստանի ժողովրդին՝ ի սրտե շնորհավորելով Հայաստանի Հանրապետության անկախության առթիվ առանց կանխագծված հարաբերական տարածքային սահմանների,

Որոշեց, որ Միացյալ Նահանգների Սենատը հույս է հայտնում, որ հայ ժողովուրդը կարող է շուտով ձեռք բերել կայուն կառավարություն, անհատների ազատությունների և իրավունքների անհրաժեշտ պաշտպանություն...»[8]:

1920թ. մայիսի 24-ին պրեզիդենտ Վիլսոնը դիմեց կոնգրեսին, առաջարկելով համապատասխան լիազորություններ տալ իրեն՝ Հայաստանի մանդատը ստանձնելու և այնտեղ զորք ուղարկելու համար: Պրեզիդենտի ուղերձում նշվում էր, որ ամերիկյան ժողովուրդը մեծ համակրանք է տածում հայ ժողովրդի նկատմամբ և իր կարեկցանքն է հայտնում նրան:

Չմերժելով Հայաստանին օգնելու անհրաժեշտությունը, սենատորների ճնշող մեծամասնությունը դեմ արտահայտվեց Հայաստանի մանդատը վերցնելու Վիլսոնի առաջարկին:

1920թ. օգոստոսի 10-ին Սևրի պայմանագրի ստորագրումը մի պահ մեղմեց բոլոր կրքերը:

1921թ. արևմտյան պետությունները սկսեցին բանակցություններ վարել Թուրքիայի կառավարության հետ նույն պայմանագիրը վերանայելու կապակցությամբ:

Թուրքիան բացահայտ մերժելով բոլոր առաջարկությունները, ստիպեց դաշնակից պետություններին ընդհանրապես մոռացության տալ Հայկական հարցը:

Ավելին, 1923թ. օգոստոսին ԱՄՆ-ը Թուրքիայի հետ կնքեց բարեկամության և առևտրական պայմանագիր:

Թուրքիայի Հանրապետությունը օգտագործելով դիվանագիտական և տնտեսական կապերը փաստորեն հիմնականում կարողացավ կանխել բոլոր այն միջոցառումները, որոնք վերաբերում էին Հայոց ցեղասպանությանը, ձգտելով այն դարձնել մոռացված հիշողություն:

*
* *

Երկարատև պայքարի ընթացքում, որը շարունակվում է մինչև այսօր, Միացյալ Նահանգների կոնգրեսի Ներկայացուցիչների պալատին չհաջողվեց հաղթանակի հասնել:

Դեռևս 1975 թվականին, երբ ողջ հայությունը պատրաստվում էր ապրիլի 24-ին նշել Մեծ եղեռնի վաթսունամյակը, ապրիլի 8-ին ԱՄՆ-ի կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը բանաձև ընդունեց (թիվ 148) 1975 թվականի ապրիլի 24-ը «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման ազգային օր» հայտարարելու մասին: Բանաձևը մերժվեց:

1978թ. մայիսի 16-ին ԱՄՆ-ի նախագահ Ջիմի Քարտերը հայտարարեց, որ «... Ընդհանուր առմամբ աշխարհում չգիտեն, որ 1916թ. նախորդած տարիներին ստույգ քայլեր կատարվեցին ողջ հայ ժողովրդին ոչնչացնելու համար, որը, հավանաբար, որևէ խմբի հետ երբևէ կատարված ամենամեծ ողբերգություններից մեկն էր: Եվ որևէ Նյուրնբերգյան դատավարություն տեղի չունեցավ»:

1981թ. ապրիլի 22-ին Մեծ եղեռնի հիշատակի օրվա նախօրյակին ամերիկահայերին ուղղված իր ուղերձում ԱՄՆ-ի նախագահ

---

[6] Նույն տեղում:

[7] Գալուստ Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Երևան, 1999, էջ 208-237:

[8] The Armenian Genocide. Documents and Declarations 1915-1995.

Ռոնալդ Ռեյգանը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ ասվում է՝ «Ինչպես վաղօրոք կատարված հայկական ցեղասպանությունը, ապա դրան հետևած Կամբոջայի ցեղասպանությունը և այլ բազմաթիվ ժողովուրդների բազմաթիվ կոտորածները, Հոլոքոստի դասերը երբեք չպետք է մոռացվեն»:

Սրան հետևած թուրքական կառավարության ակտիվ միջամտությունը կասեցրեց Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը կոնգրեսի կողմից:

Նահանջելով սկզբունքային դիրքորոշումից և ընդառաջելով Թուրքիային, ԱՄՆ-ը նույնիսկ կատերգորիկ քայլերի դիմեց ընդդեմ ամերիկահայությանը:

1982թ. ԱՄՆ-ի պետական քարտուղարությունը հրատարակեց մի փաստաթուղթ, որտեղ հրապարակավ հայտարարվում էր, որ «... 1915թ. պատմական փաստերը Փոքր Ասիայում հայ ժողովրդի դեմ կատարված Մեծ ոճիրի կապակցությամբ որոշակի չեն և ԱՄՆ-ի պետական քարտուղարությունը չի վավերացնի կարծեցյալ փաստերը»:

Ամերիկահայությունը զայրույթով ընդունեց պաշտոնական շրջանների այդ անպատասխանատու հայտարարությունը: Կեղծարարության դիմած ԱՄՆ-ի պետական քարտուղարությունը ստիպված հանդես եկավ հայտարարությամբ, պարզաբանելով, որ փաստաթղթում ներկայացված տեսակետները վերջնական չեն և կարող են վերանայվել:

1984թ. սեպտեմբերի 10-ին ԱՄՆ-ի կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը կրկին անգամ ընդունեց բանաձև (թիվ 247) և պահանջեց կառավարությունից 1985թ. ապրիլի 24-ը հայտարարել «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման ազգային օր»:

Բանաձևը ազդարարում էր, որ «Ամերիկայի Միացյալ Նահանգների Կոնգրեսի գումարմամբ Սենատի և Ներկայացուցիչների պալատի կողմից որոշվեց 1985թ. ապրիլի 24-ը սույնով սահմանել «Մարդու կողմից մարդու-նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման ազգային օր», և Միացյալ Նահանգների նախագահին հանձնարարվում և խնդրվում է հայտարարություն անել՝ կոչելով Միացյալ Նահանգների ողջ ժողովրդին դիտել այդ օրը իբրև ցեղասպանության բոլոր զոհերի հիշատակի օր, հատկապես մեկ և մեկուկես միլիոն հայերի նախնիների, որոնք զոհ դարձան 1915-ից 1923թթ. Թուրքիայում կատարված ցեղասպանությանը, ի հիշատակի որոնց աշխարհի բոլոր հայերը և նրանց բարեկամները նշում են այդ օրը»:

Այդ նույն տարում ԱՄՆ-ի Սենատ ներկայացվեց թիվ 241 բանաձևը, որը կոչ էր անում կառավարությանն արտաքին քաղաքականության ծրագրման և իրականացման ընթացքում հաշվի առնել Հայոց եղեռնի հիշողությունը: Բանաձևը քննարկվեց և ընդունվեց Սենատի արտաքին գործերի հանձնաժողովի կողմից, սակայն հետագայում կառավարության ճնշման տակ այն կասեցվեց:

1985թ. ԱՄՆ-ի կոնգրեսի Ներկայացուցիչների պալատ ներկայացվեց թիվ 192 բանաձևը, որը պահանջում էր կառավարությունից 1985թ. ապրիլի 24-ը երկրում հայտարարել որպես «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման ազգային օր»: Բանաձևը քննարկվեց, սակայն մերժվեց ձայների մեծամասնությամբ:

Նույն բովանդակությամբ բանաձև (թիվ 102) ներկայացվեց ԱՄՆ-ի Սենատ և նույնպես մերժվեց:

1987թ. ԱՄՆ-ի Սենատ ներկայացվեց թիվ 241 բանաձևը, որը պահանջում էր կառավարությունից արտաքին քաղաքականության իրականացման ընթացքում հաշվի առնել Հայոց եղեռնի իրողությունը: Սակայն այն մերժվեց: Նույն բովանդակությամբ բանաձև (թիվ 247) ներկայացվեց ԱՄՆ-ի կոնգրեսի Ներկայացուցիչների պալատ և կրկին ձայների մեծամասնությամբ մերժվեց: Թուրքական կառավարությունը նոր թափ հաղորդեց հակահայկական քարոզչությանը, փորձելով ամեն կերպ հերքել Մեծ եղեռնի փաստը, ջանալով ապացուցել, որ հայերը ոչ թե Ցեղասպանության, այլ քաղաքացիական պատերազմի զոհեր են: Թուրքական կառավարությունը պաշտոնապես դիմելով ԱՄՆ-ի կառավարությանը, պահանջեց զերծ մնալ հետագա քայլերից, հայտարարելով, որ պատրաստ է բացել թուրքական արխիվների դռները և հրապարակել փաստեր, որոնք կապացուցեն հավասարապես տուժած հայերի և թուրքերի տառապանքների մասին:

Կրկին անգամ ընդառաջ գնալով Թուրքիային, ԱՄՆ-ի պետական քարտուղարությունը, Պաշտպանության նախարարությունը և Ազգային անվտանգության խորհուրդը համատեղ հանդես եկան, դիմելով կոնգրեսին ձեռնպահ մնալ բանաձևերի ընդունումից նկատի ունենալով այն կարևոր հանգամանքը, որ կապակցությունն ԱՄՆ-ի և Թուրքիայի, որպես համախոհների դաշինքը, ու սկիզբ կդրվի հայկական նոր ահաբեկչությանը:

Ոչ միայն հայերը, այլև միջազգային հանրությունը հուսախաբ եղան: ԱՄՆ-ի հայկական համայնքը սակայն չնահանջեց: Սկսվեց պայքարի մի նոր ժամանակաշրջան:

1988թ. Ամերիկայի Հայկական Համագումարը հանդես եկավ նոր նախաձեռնությամբ, դիմելով Սենատին և ԱՄՆ-ի պրեզիդենտությանը համար ընտրարշավի ելած երկու հիմնական թեկնածուներին՝ Բուշին և Դուկակիսին:

Ռեյգանի վարչակարգի անհանդուրժող և անորոշ կեցվածքից դժգոհ հայերը մեծ հույսեր կապեցին Բուշի և Դուկակիսի հետ, որոնք պատասխանելով հայերի կոչին, փաստորեն քաջալերեցին նրանց:

Ապագա պրեզիդենտ Ջորջ Բուշը իր պատասխանում հայտարարեց, որ պետք է «ընդունել Օսմանյան կայսրության վերջին օրերին հայ ժողովրդի դեմ կատարած ցեղասպանության փորձը, հիմնվելով վերապրողների, գիտնականների, ինչպես նաև ԱՄՆ-ի այդ օրերի ներկայացուցիչների վկայությունների վրա: Մենք, ամերիկացիներս, մեր կառավարությունը, Բուշի վարչակարգը երբեք թույլ չենք տա, որպեսզի քաղաքական ճնշումները պատճառ դառնան չդատապարտելու մարդկության հանդեպ գործված ոճիրները: Ես միանում եմ կոնգրեսին՝ հիշելու համար այդ հանցրվանի զոհերին»:

Հայկական Համագումարի հետ սերտ համագործակցությունն սկսեց դրսևորել սենատոր Ռոբերտ Դոուլը, Մեծ եղեռնի 75-րդ տարելիցը նշելու պատրվակով 1989թ. բանաձևի նախագիծ ներկայացնելով կոնգրեսին:

Ի տարբերություն կոնգրեսին ներկայացված նախորդ բանաձևերի, Ռ. Դոուլը զգուշորեն փորձեց մեղմել ներկայիս Թուրքիայի պատասխանատվությունը, հիմնավորելով, թե իբր ցեղասպանությունը կատարվել է նախքան Թուրքիայի հանրապետության կազմավորումը, ուստի ներկա թուրքական կառավարությունը պատասխանատվություն չի կրում անցյալի համար:

Ռ. Դոուլը բանաձևի այդ նախագիծը ներկայացրել էր 1988թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած երկրաշարժի առթիվ Հայաստան կատարած այցելությունից անմիջապես հետո: 1989թ. սեպտեմբերին Դոուլի կողմից ներկայացված բանաձևը հակահայկական մի նոր ալիք բարձրացրեց թուրքական կառավարական շրջաններում:

Թուրքիայի ղեկավարները բացահայտ հանդես գալով ներկայացված բանաձևի դեմ, ամերիկյան գործարարներին նախապես զգուշացրեցին, որ բանաձևի ընդունման դեպքում միանգամայն այլ բնույթ կընդունեն ամերիկա-թուրքական հարաբերությունները:

Համերաշխություն դրսևորելով Թուրքիայի նկատմամբ, Իսրայելի կառավարությունը ԱՄՆ-ում գտնվող հրեական կազմակերպություններին գաղտնի կոչ արեց պայքարել բանաձևի ընդունման

դեմ, որն առիթ դարձավ հրեա պաշտոնյաների կողմից հակաքարոզչություն ծավալել հայկական բանաձևի դեմ:

Սենատոր Հովարդ Մեցենբաումը, որը մինչև Իսրայելի միջամտությունը հաճախ բարձրակոչ ճառերով հանդես էր եկել Հայոց ցեղասպանության օգտին, Սենատի դատական հանձնաժողովում հանդես բերելով մեկ այլ դիրքորոշում, փորձեց բանաձևի նախագծի բնագրում «ցեղասպանություն» բառը փոխարինել «ողբերգական իրադարձություններ» արտահայտությամբ, նույնիսկ կասկածանքի տակ դնելով 1915թ. տեղի ունեցած իրադարձությունները: Սակայն սենատոր Մեցենբաումը անսպասելի և լուրջ դիմադրության հանդիպեց սենատորներ Բայդընի, Սայմընի և Քենեդիի կողմից, որը լայն արձագանք ստացավ:

Թուրքիան չհապաղեց դիմել վճռական քայլերի, սպառնալով Սենատին:

Պետական դեպարտամենտը շտապ Վաշինգտոն հրավիրեց Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Մորթոն Աբրամովիչին՝ խորհրդակցելու համար: Հայկական Համագումարը ամերիկյան սենատորներին տրամադրեց տարբեր երկրներից բերված լրացուցիչ արխիվային վավերագրեր:

Հակահայկական և հակաթուրքական քարոզչական պայքարի ընթացքում ավելի քան վաթսուն սենատորներ համաձայնվեցին քվեարկել հօգուտ հայկական բանաձևի:

Զգալի դեր խաղացին Կալիֆորնիայի նահանգապետ Ջորջ Դյուքմեջյանը և հայ կոնգրեսական Չարլզ Փաշայանը, որոնք լծվելով հակաքարոզչական պայքարին Սպիտակ տանը փորձում էին համոզել հանդես գալ միմիայն ճշմարտացի դիրքերից:

1990թ. փետրվարի 20-ին և 27-ին կրկին քննարկվեց բանաձևի ընդունման հարցը: Թուրքամետ սենատոր Ռոբերտ Բըրդը (Արևմտյան Վիրջինիայի նահանգ) հանդես եկավ հայտարարությամբ, որ պատրաստ է ամեն ինչ անելու բանաձևի ընդունումը ձախողելու համար: Սենատոր Ռ. Բըրդի կողմնակիցները բացահայտ թուրքամետ դիրք գրավելով, փորձում էին ապացուցել, որ տուժող կողմը ոչ միայն հայերն էին, այլև բոլոր այն դժբախտ ժողովուրդները, որոնք ներգրավվել էին Առաջին համաշխարհային պատերազմի մեջ, որ ներկայիս ԱՄՆ-ի և Թուրքիայի շահերը պահանջում են չընդունել բանաձևը, և ընդհանրապես բանաձևից դուրս հանել «ցեղասպանություն» բառը, որը պետք է փոխարինվի ողբերգություն արտահայտությամբ: Որոշ սենատորներ ուղղակի առաջարկում էին դադարեցնել քննարկումները, քանի ամբողջովին չեն ուսումնասիրել

Օսմանյան արխիվային նյութերը, որոնց հիման վրա միայն կարելի է հանգել ճիշտ եզրակացության:

Սենատոր Դավիթ Բորնը սենատորների ուշադրությունը հրավիրեց սկզբունքային մի խնդրի վրա, որը առնչվում է ՆԱՏՕ-ի երկրների հետ Թուրքիայի ունեցած քաղաքական և տնտեսական հարաբերությունների հետ, կոչ անելով մերժել բանաձևի ընդունումը:

Սենատորներ Դոուլը, Փրեսլերը, Դեկոնչինին, Քեննեդին, Քերին, Լաութենբուրգը, Լևինը, Բայդենը, Սայմընը, Վիլսոնը, Փելը, Սարբանեսը և Բրեդլին պահանջում էին բանաձևում պահպանել «ցեղասպանություն» բառը, իրենց ելույթներում հիմնավորելով 1915թ. տեղի ունեցած դեպքերը որպես ցեղասպանություն: Քննարկումների ընթացքում Դոուլը, նահանգապետ Դյուքմեջյանը, կոնգրեսական Փաշայանը և Հայկական համագումարի ներկայացուցիչները որոշեցին փոխզիջումների գնալ, սակայն բանաձևի բնագրում պահպանելով «ցեղասպանություն» բառը: Փաստորեն այդ զիջողության էությունը կայանում է նրանում, որ խմբագրված և փոփոխված նոր բանաձևը օրենքի ուժ չուներ և չէր պահանջում ԱՄՆ-ի պրեզիդենտի ստորագրությունը: Սենատորների զգալի մասը պաշտպանելով Ռոբերտ Բըրդի առաջարկությունը զիջումներ չանելու կապակցությամբ, 1990թ. փետրվարի 27-ին տապալեցին բանաձևի ընդունումը:

1990թ. ապրիլի 20-ին ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը հանդես եկավ ամերիկահայերին ուղղված հայտարարությամբ, որտեղ ասվում էր, որ հայերի «... պատմությունը ընթացել է բազում ողբերգությունների միջով և արձագանք գտել նրանց հավատի, նրանց տոկունության և նրանց ուժի մեջ: Այս ողբերգությունները, ներառյալ նաև 1988թ. երկրաշարժը և հայերի 1915-1923թթ. սարսափելի կոտորածները, որոնք տեղի ունեցան Օսմանյան Կայսրության կառավարիչների կողմից: Միացյալ Նահանգները միջազգային դիվանագիտության և մասնավոր ջանքերի օգնությամբ հատուցեց մարդկության դեմ ոճրագործության զոհերին:

... Կոտորածների 75-ամյակին ես կցանկանայի միանալ հայերին և բոլոր ժողովուրդներին, որոնք 1990թ. ապրիլի 24-ը ընդունում են իբրև հայ ժողովրդի 1,5 մլն-ից ավել զոհերի հիշատակի օր: Ես կոչ եմ անում բոլոր ժողովուրդներին աշխատել՝ կանխելու մարդկության հանդեպ ապագայի յուրաքանչյուր անմարդկային գործողություն և իմ 1988թ. հունիսին արտահայտված բառերով ես ցույց եմ տվել իմ խոր զգացմունքները հայ ժողովրդի և այն տառապանքների հանդեպ, որ նրանք կրել են»:

1994թ. ապրիլի 24-ին նմանատիպ մի ուղերձով հանդես եկավ ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինտոնը, որտեղ ասվում էր. «Այս նշանավոր օրը ես միանում եմ աշխարհի բոլոր հայերին՝ հիշելու համար Օսմանյան կայսրությունում 1915թ. կոտորածների զոհերին: Այս ողբերգության արդյունքները հիմնովին վերաբերում են նաև մեզ և մենք միասին սգում ենք բազում անմեղ կյանքերի կորուստը»:

1995թ. մարտի 23-ին ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատ ներկայացվեց թիվ 47 բանաձևը, որտեղ արձանագրված էր՝

«Նկատի ունենալով, որ Թուրքիայի հանրապետության նախորդ՝ Օսմանյան կայսրության կառավարության կողմից 1915-1923թթ. կազմակերպված ցեղասպանությանը զոհ գնացին հայ ժողովրդի մեկից-մեկուկես միլիոն նախնիները,

Նկատի ունենալով, որ յուրաքանչյուր ապրիլին կոնգրեսի անդամները միանում են Միացյալ Նահանգների ողջ ամերիկահայ համայնքին՝ նշելու հայկական ցեղասպանության հիշատակի օրը, և

Նկատի ունենալով, որ հայերի հանդեպ կատարված դաժանությունների հետևողական հիշատակումով և բացահայտ դատապարտումով կոնգրեսը օգնել է բարձրացնել Միացյալ Նահանգների ժողովրդի դիմադրությունը յուրաքանչյուր և բոլոր տեսակի ցեղասպանությունների հանդեպ, ուստի

Ներկայացուցիչների պալատը (Սենատի համաձայնությամբ), որոշում է

1. Կոնգրեսը միանում է ամերիկահայ համայնքին՝ հարգելու Հայկական ցեղասպանության զոհերի հիշատակը.

2. Հարկ է, որ Միացյալ Նահանգները հորդորի Թուրքիայի Հանրապետությանը, անհրաժեշտ բոլոր քայլերը ձեռք առնելու,1915-1923թթ. Օսմանյան կայսրությունում հայ բնակչության հանդեպ կատարված դաժանությունները ճանաչելու և նշելու համար»:

1996թ. մայիսի 15-ին ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի միջազգային հարաբերությունների հանձնախմբի նախաձեռնությամբ վերջին քսան տարիների ընթացքում առաջին անգամ կոնգրեսում տեղի ունեցան լսումներ Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության պատմական փաստի ճանաչման խնդրի շուրջ: Անկասկած այդ խնդրի քննարկումը կարևոր իրադարձություն էր ոչ միայն եղեռնի ճանաչման, այլև Հայաստանի և Թուրքիայի ներկայիս հարաբերությունների ձևավորման առումով:

Ամերիկյան կոնգրեսին ներկայացվեց մի բանաձև, որը Թուրքիային կոչ է անում ճանաչել Հայոց եղեռնը: Այդ բանաձևը պաշտպանում էին 165 կոնգրեսական, և միջազգային հարաբերություններ-

րի հանձնախումբը իր քննարկումների ընթացքում հույսեր էր փայփայում բանաձևի ընդունման խնդրում:

Սակայն ցավով պետք է նշել, որ նույն օրը, երբ կոնգրեսի դահլիճներից մեկում փորձագետները կարծիք էին հայտնում ցեղասպանության պատմական իրողության շուրջ, պետական դեպարտամենտի խոսնակ Գլեն Դևիսը լրագրողներին հայտնեց, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների արտաքին գործերի նախարարությունը հավանություն չի տալիս կոնգրեսի կողմից եղեռնը ճանաչելու նախաձեռնությանը, քանի որ այն մի շարք կարևոր հարցերում կխանգարի Թուրքիայի հետ ԱՄՆ-ի համագործակցությանը, ինչպես նաև բացասական ազդեցություն կարող է ունենալ հայ-թուրքական հարաբերությունների հետագա բարելավման վրա:

ԱՄՆ-ի արտաքին գործերի նախարարությունը գտնում էր, որ ԱՄՆ-ը լիովին ըմբռնում է հայ ժողովրդի կրած տառապանքները, բայց կոնգրես ներկայացված բանաձևը համարում է ոչ տեղին և նպատակահարմար:

Չնայած ԱՄՆ-ի կոնգրեսը օրակարգ չմտցրեց հանձնաժողովի առաջարկությունը, այնուհանդերձ մի բան պարզ էր, որ այն իրենց իսկ կոնգրեսականների կողմից դեռևս համարվում էր խիստ հրատապ մի հարց, որից նրանք հրաժարվել չէին ցանկանում:

1997թ. ապրիլի 8-ին ԱՄՆ-ի կոնգրեսականներ Ջորջ Ռադանովիչը և Դեյվիդ Բոնիերը կոնգրեսին ներկայացրեցին օրենսդրական նախագիծ, կոչ անելով հատուկ բանաձև ընդունել Հայոց ցեղասպանությունը դատապարտելու մասին: Ներկայացված բանաձևում մասնավորապես առաջարկվում է արձանագրել՝

«ա. կոնգրեսը ամերիկահայության հետ հարգում է Հայկական ցեղասպանության զոհերի հիշատակը.

բ. ԱՄՆ-ը պետք է Թուրքիային ստիպի, որպեսզի վերջին կատարի բոլոր պատշաճ քայլերը՝ Օսմանյան կայսրության կողմից հայ բնակչության դեմ 1915-1923թթ. գործադրված բռնությունները ճանաչելու և դատապարտելու համար»:

1997թ. ապրիլի 22-ին ԱՄՆ-ի Սենատի հայկական համախմբման դահլիճում նշվեց հայոց Մեծ եղեռնի 82-րդ տարելիցը, որը կազմակերպել էր սենատոր Ջեկ Ռիդի, կոնգրեսականներ Ջոն Նոլենբերգի, Մարտին Նիհրնի, Դեյվիդ Բոնիերի և Ջորջ Ռադանովիչի մասնակցությամբ ստեղծված հանձնախումբը:

1997թ. ապրիլի 22-ին ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնը հանդես եկավ հայտարարությամբ,որտեղ ասվում էր.

«Ամեն տարի Հիշատակի օրը մենք միանում ենք ամերիկահայերին և աշխարհով մեկ սփռված հայկական համայնքներին, հանդիսավորությամբ հիշելով 20-րդ դարի պատմության ամենասև էջերը՝ անթիվ հայերի սպանդը Օսմանյան կայսրությունում 1915-1923 թվականներին: Մենք հիշում ենք այդ սարսափելի ժամանակների զոհերին՝ մոտ մեկ ու կես միլիոն անմեղ մարդկանց, որոնց ճակատագիրն էր տեղահանությունը և մահը:

Հայ ժողովուրդն արժանապատվորեն դիմակայեց այդ ողբերգությանը: Չկորցնելով իրենց ավանդույթներն ու հավատը, հայերը հարակայուն ու բարգավաճող համայնքներ հաստատեցին աշխարհով մեկ: Միացյալ Նահանգները մեծապես շահել են բազմաթիվ ամերիկահայերի ունեցած ներդրումներից, որոնք առաջնային դեր են խաղացել մեր ազգային կյանքի բոլոր բնագավառներում:

Տասնամյակներ շարունակ ամբողջ աշխարհի հայերը վառ պահեցին անկախ Հայաստանի տեսիլքը, և 1991 թվականին այդ երազանքը իրականություն դարձավ: Այսօր Հայաստանն ազատ և ինքնիշխան պետություն է՝ կենդանի հուշարձանը նրանց, ովքեր սպանվեցին 82 տարի առաջ, և վերջնական երաշխիքը, որ այդպիսի ողբերգությունը երբևէ չի կրկնվի:

Պահպանելու համար պատմական իրողությունը՝ ազատ Հայաստանի լինելիության փաստը, մենք պետք է կրկնապատկենք մեր ջանքերը՝ խաղաղություն և կայունություն հաստատելու կովկասյան տարածաշրջանում: Այդ խաղաղության ոգով է, որ Հիշատակի օրվա կապակցությամբ բոլոր հայերին ես փոխանցում եմ իմ ամենաջերմ մաղթանքները»:

Միացյալ Նահանգների Կոնգրեսը 1998թ. ապրիլի 22-ին հարգեց Թուրքիայում հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը: Ներկայացուցիչների պալատի ավելի քան 40 անդամներ մասնակցեցին Կապիտոլում կայացած Կոնգրեսի հատուկ բաց նիստին, որին մասնակցել են նաև Սպիտակ տան, պետքարտուղարության, ազգային անվտանգության խորհրդի ներկայացուցիչներ, Վաշինգտոնում հավատարմագրված Հայաստանի, Հունաստանի, Կիպրոսի, Ուկրաինայի, Ռուսաստանի դեսպանները, տեղի հայ համայնքի ներկայացուցիչներ: «Այսօր Միացյալ Նահանգների Կոնգրեսը իր հարգանքի տուրքն է մատուցում մարդկության դեմ հրեշավոր հանցագործություններից մեկի՝ 1915-1923թթ. Օսմանյան Թուրքիայում հայտնի ցեղասպանության զոհերի հիշատակին», բացելով նիստն ընդգծել է կոնգրեսական Ֆրենկ Փալոունը: «Մենք նմանվում ենք անբարոյական ցինիկների, երբ մեր ռազմավարական դաշնակիցն ենք համարում մի երկիր, որը հրաժարվում է իրեն մեղավոր ճանաչել այդ աղա-

ղակող հանցագործության իրականացման մեջ», իր հերթին ասել է կոնգրեսական Ջոն Փորտերը: «Հարգելով հայերի ցեղասպանության զոհերի հիշատակը, մենք չպետք է մոռանանք, որ այսօր հայ ժողովուրդը Լեռնային Ղարաբաղում կանգնած է այդ ողբերգության կրկնության վտանգի առաջ», հայտարարել է կոնգրեսական Ջիմ Մակ Գովերը:

«Հայոց ցեղասպանության փաստի պատշաճ ձևով ճանաչումն ու նշումը ոչ միայն բարոյական հրամայական է, այլ նաև բխում է Միացյալ Նահանգների ազգային շահերից: Այդ դեպքում ԱՄՆ-ը կդիտվի անկողմնակալ և ազնիվ միջնորդ Լեռնային Ղարաբաղի խաղաղության գործընթացում», ասված է կոնգրեսական Սթիվ Ռոթմանի կողմից ապրիլի 21-ին նախագահ Քլինթոնին ուղղված նամակում:

Կոնգրեսականը Քլինթոնից պահանջում է ուժեղացնել Կովկասում խաղաղության հաստատմանը նպատակաուղղված ԱՄՆ-ի կառավարության ջանքերը՝ ակտիվ դեր ստանձնելով Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության փաստի ժխտման դեմ: «Որպես ազգ մենք թանկ ենք վճարում Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ժխտմանը մասնակցություն ունենալու համար: Ցեղասպանության ժխտման մեղսակցությունը ցանկացած պատճառներով և ցանկացած ժամանակ, պարզապես անընդունելի է մարդու իրավունքների պաշտպանության առաջնորդ հանդիսացող ԱՄՆ-ի համար», ասված է նամակում:

ԱՄՆ-ի Ջորջիայի նահանգի Սենատը հատուկ բանաձև ընդունեց «Հօգուտ 1915-1923թթ. Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանության ճանաչման և մեկուկես միլիոն հայերի զանգվածային կոտորածի կազմակերպիչների դատապարտման»: 1999 թվականի փետրվարի 8-ին սենատոր Վան Սթրիթի կողմից նահանգի բարձրագույն օրենսդիր մարմին ներկայացված բանաձևում ասվում է.

«Հիշատակի տուրք մատուցելով և գլուխ խոնարհելով Եղեռնի զոհերի առջև, ճանաչելով ապրիլի 24-ը որպես 1915-1923թթ. հայերի ցեղասանության հիշատակի օր և նշելով, որ

- մեկուկես միլիոն հայ տղամարդիկ, կանայք և երեխաներ զոհ գնացին Օսմանյան կայսրության երիտթուրքական կառավարության կողմից 1915-1923թթ. իրագործված սրբապիղծ եղեռնին:

- հայերի ցեղասպանությունն ու հայ ժողովրդի կոտորածը բնորոշվել են որպես 3000-ամյա պատմություն ունեցող զարգացած ու բարձր քաղաքականություն բոլոր հետքերը ոչնչացնելու փորձ:

- մինչև օրս հրաժարվելով ճանաչել եղեռնը՝ Թուրքիայի կառավարությունը շարունակում է անտագոնիստական քաղաքականություն վարել հայ ժողովրդի և մարդկության պատմության մեջ նրա արժանի տեղի նկատմամբ:

- հավերժ հիշելով և բացահայտորեն դատապարտելով հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ոճրագործությունները՝ Ջորջիայի նահանգի քաղաքացիները չափազանց դյուրազգաց են վերաբերում մշտական զգոնության անհրաժեշտությանը՝ ապագայում նման ոճրագործություններ թույլ չտալու նպատակով:

- այդ ցեղասպանության 84-րդ տարեդարձի ճանաչումը վճռական նշանակություն ունի ապագայում նոր ցեղասպանություններ թույլ չտալու և այդ սարսափազդու իրադարձություններին առնչվող հանցագործությունների հարցում մարդկանց լուսավորելու համար:

- Ջորջիայի նահանգում բնակվում է ավելի քան 500 հայ ընտանիք, և նահանգի հայազգի քաղաքացիները, առաջատար դիրքեր զբաղեցնելով գործարար աշխարհում, գյուղատնտեսության, գիտության և կառավարման ոլորտներում, մեծ ավանդ են ներդրել նահանգի զարգացման գործում:

Ջորջիայի նահանգի Սենատը միանում է հայկական համայնքին, տուրք մատուցելով այդ եղեռնի զոհերի հիշատակին ողջ աշխարհում, և 1999 թվականի ապրիլի 24-ը ճանաչում է որպես 1915-1923թթ. հայերի ցեղասպանության հիշատակի օր:

- կոչ է անում Ջորջիայի նահանգի քաղաքացիներին գլուխ խոնարհել այդ դաժան տարիներին զոհված մեկուկես միլիոն հայերի հիշատակի առջև:

- Սենատի քարտուղարությանը հանձնարարում է այդ բանաձևի համապատասխան պատճենը հանձնել Ատլանտայի հայկական անկախ մշակութային ասոցիացիային»:

1999թ. մարտի 17-ին Հարավային Կարոլինայի Սենատը որոշում ընդունեց 1999թ. ապրիլի 24-ը Հարավային Կարոլինայի կողմից որպես 1915-1923թթ. Հայոց ցեղասպանության հիշատակի օր սահմանելու մասին:

Սենատի որոշման մեջ ասվում է.

«Նկատի ունենալով, որ մեկուկես միլիոն հայ տղամարդիկ, կանայք և երեխաներ 1915-1923թթ. դարձան Օսմանյան կայսրությունում երիտթուրքերի կառավարության կողմից կազմակերպված վայրագ ցեղասպանության զոհը,

Նկատի ունենալով, որ հայկական ցեղասպանությունը և հայ

ժողովրդի ջարդը դիտվել են որպես 3000 տարվա բարգավաճ և ազնվական քաղաքակրթության բոլոր հետքերի ոչնչացման փորձ,

Նկատի ունենալով, որ հայկական ցեղասպանության ժխտումը ներկա թուրքական կառավարության կողմից շարունակում է հակազդել հայ ժողովրդին, կապված պատմության մեջ իրենց արդարացի տեղին,

Նկատի ունենալով, հաճախ հիշատակվող և անարգել կատարված բռնությունները հայերի հանդեպ, Հարավային Կարոլինան մեծապես կարևորում է ապագայում նմանատիպ բարբարոսություններից խուսափելու համար մշտական զգոնության անհրաժեշտությունը,

Նկատի ունենալով, որ այդ ցեղասպանության ութսունչորսերորդ տարելիցի ընդունումը վճռական քայլ է հետագա ցեղասպանությունների դեմ պայքարելու և մարդկությանը լուսաբանելու այդ ահարկու դեպքերին առնչվող գազանությունների մասին,

Նկատի ունենալով, որ Հարավային Կարոլինան հարյուրավոր հայ ընտանիքների բնակավայրն է,

Նկատի ունենալով, որ հայ համայնքի առաջատար գործողությունը գործարարության, գյուղատնտեսության, ակադեմիայի, կառավարության և արվեստի ոլորտներում մեծապես նպաստել է մեր նահանգի բարգավաճմանը,

Ուստի՝

Ներկայացուցիչների պալատի կողմից հավանության արժանացած, Սենատը որոշում է,

Որ Գլխավոր Ասամբլեիայի անդամները ճանաչում են 1999թ. ապրիլի 24-ը որպես «1915-1923թթ. Հայկական ցեղասպանության օր Հարավային Կարոլինայի կողմից», հարգում են այդ դաժան ժամանակներում զոհված մեկուկես միլիոն հայ նահատակների և ամբողջ աշխարհում ցեղասպանության զոհերի հիշատակը:

Հարավային Կարոլինա, Կոլումբիայի Սենատ, 1999թ. մարտի 17»

Ամերիկացի կոնգրեսական Ջեյմս Ռոգանը պաշտպանելով կոնգրեսի անդամներ Ռադանովիչի, Բոնիորի և Փալոունի ներկայացրած օրինագիծը 1915-1923թթ. Օսմանյան Թուրքիայում Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին, ելույթ ունենալով ներկայացուցիչների պալատի նիստի ժամանակ՝ հայտարարել է, թե Ամերիկան, որին հավատարմորեն ծառայում են հայազգի քաղաքացիները, պարտավոր է ճանաչել և դատապարտել Օսմանյան Թուրքիայի կառավարության կողմից XX դարում մարդկության դեմ իրականացված

առաջին ոճրագործությունը: «Թուրք բարբարոսների ձեռքից հրաշքով ազատված հայերը դեռևս հիշում են, թե ինչպես էին այրում իրենց տները, բռնաբարում իրենց քույրերին ու մայրերին, սպանում երեխաներին... Այդ հիշողությունները երևակայության արգասիք չեն, այլ՝ զարհուրելի իրողություն, որը մինչև այժմ հետապնդում է հազարավոր մարդկանց» ընդգծել է Ջեյմս Ռոգանը:

ԱՄՆ-ի կոնգրեսը հարգանքի տուրք մատուցեց 1915-1923թթ. Օսմանյան Թուրքիայում հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Ապրիլի 21-ին Կապիտոլիումի Ռոսկե դահլիճում կայացավ Հիշատակի հատուկ արարողություն, որին մասնակցեցին Կոնգրեսի երկու պալատների անդամներ, Հայաստանի, Հունաստանի, Կիպրոսի, Ուկրաինայի և Ռուսաստանի դեսպանությունների ներկայացուցիչներ, ԱՄՆ-ի հայկական կազմակերպությունների ղեկավարներ ու Ամերիկայի հայկական համայնքի ներկայացուցիչներ:

Ներկայացուցիչների պալատի 29 անդամներից 7 սենատորներ հավաքվածների առջև հանդես եկան հատուկ ուղերձով, որում դատապարտեցին հայ ժողովրդի ցեղասպանությունը և այն միջազգայնորեն ճանաչելու կոչ արեցին:

Գլենդեյլի (Կալիֆորնիայի նահանգ) քաղաքային խորհուրդը ապրիլի 24-ը հայտարարեց Սգո օր՝ 1915-1923թթ. Օսմանյան Թուրքիայում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, և որոշում կայացրեց այդ օրը քաղաքում բոլոր պետական դրոշները խոնարհելու մասին: Գլենդեյլի քաղաքագլուխ Գինգեր Բրեմբերգը հանդես եկավ հատուկ դիմումով, որում դատապարտեց երիտթուրքերի և քեմալականների կողմից իրագործված հայ ժողովրդի ցեղասպանությունը՝ կոչ անելով Գլենդեյլի բոլոր քաղաքացիներին հարգանքի տուրք մատուցել այդ ոճրագործության ավելի քան մեկուկես միլիոն զոհերի հիշատակին:

Նշենք, որ Կալիֆորնիայի նահանգի ասամբլեան ապրիլի 24-ը հռչակել է Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանության, Սումգայիթում հայերի կոտորածի և Բաքվի վայրագությունների զոհերի հիշատակի օր:

1999թ. ապրիլին մի նոր նախաձեռնությամբ հանդես եկան ԱՄՆ-ի կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի վաթսուն անդամներ, որոնք իրենց ստորագրությունը դրեցին Ներկայացուցիչների պալատում ժողովրդավարների խմբակցության ղեկավար Դեյվիդ Բոնիորի, կոնգրեսականներ Ֆրենկ Փալոունի, Ջոն Էդվարդ Պորտերի, Ջորջ Ռադանովիչի և Ջեյմս Ռոգանի կողմից կոնգրեսին ներկայացրած հայերի ցեղասպանության դատապարտմանը նվիրված

օրենքի նախագծի տակ:

Կոնգրեսի կողմից օրենքի նախագծի ընդունման դեպքում ԱՄՆ-ի պրեզիդենտը պարտավոր է ի մի բերել Միացյալ Նահանգների արխիվներում հայերի ցեղասպանությանը վերաբերող արխիվային նյութերը և փաստագրական տվյալները՝ Ներկայացուցիչների պալատի միջազգային հարաբերությունների կոմիտեի, ԱՄՆ-ի Ողջակիզման զոհերի հիշատակի թանգարանին և Հայաստանի Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին հանձնելու համար:

Ներկայացված նախագիծը դեռևս չի քննարկվել:

Ապրիլի 19-ին Սպիտակ տանը 1915թ. հայոց ցեղասպանության տարելիցի առթիվ հրապարակվեց նախագահ Բիլ Քլինթոնի հայտարարությունը: ԱՄՆ-ի նապագահն այդ հայտարարության մեջ չի օգտագործում ցեղասպանություն բառը: Նա պարզապես հայերին վշտակցելու անվան տակ Օսմանյան կայսրության և Կոսովոյի միջև զուգահեռներ է անցկացնում, որպեսզի հնարավոր լինի արդարացնել ՆԱՏՕ-ի ագրեսիան ընդդեմ Հարավսլավիայի: Ավելին, Քլինթոնը, Հայաստանը Եվրաատլանտյան համագործակցության մեջ ներքաշելու պատրաստակամությամբ, փորձում է ընդգծել Անդրկովկասում ամերիկյան շահերով առաջնորդվելու անհրաժեշտությունը:

Փաստորեն Քլինթոնի հայտարարությունը ընդհանրապես վշտակցության հետ այնքան կապ ուներ, որքան 1915թ. ցեղասպանության հարցի միջազգային շահարկումները՝ դրա միջազգային ճանաչման հետ:

2. ԱՄՆ-Ի ԿՈՆԳՐԵՍԻ ԹԻՎ 398 ԲԱՆԱՁԵՎԸ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Ամերիկահայ երկու գործիչներ ակտիվ մասնակցություն են բերել Միացյալ Նահանգների նախագահի թեկնածու Թեքսասի նահանգապետ հանրապետական Ջորջ Բուշ կրտսերի ընտրարշավի ֆինանսավորման գործում:

Այդ գործիչներից մեկն է հայտնի գործարար, Հայ ամերիկայն բիզնեսմենների խորհրդի անդամ, Դետրոյթի բնակիչ Էդգար Հակոբյանը: Մյուս գործարարը՝ Վազգեն Սեդրակյանը իրավաբան է, բնակվում է Նյու Յորքում, ծագումով լիբանանահայ է:

Իր համախոհներին ուղղված նամակում Ջորջ Բուշ կրտսերը 2000 թվականի փետրվարի 20-ին գրել է.

«Շնորհակալություն, որ հետաքրքրվում եք իմ ընտրարշավի ամերիկահայերի մտահոգությունների հետ կապված հարցերով:

Քսաներորդ դարն ապականված է եղել աներևակայելի դաժան պատերազմներով, զանգվածային սպանություններով և ցեղասպանություններով: Պատմությունն արձանագրել է, որ անցած դարաշրջանի այդ բոլոր դաժանությունների առաջին կրողը եղել է հայ ժողովուրդը: Հայերը ենթարկվել են ցեղասպանական այնպիսի մի արշավի, որն անըմբռնելի է և պահանջում է բոլոր պարկեշտ մարդկանցից, որ հիշեն և ճանաչեն ընդհանրապես մարդկության դեմ գործված արյունալի ոճրագործությունների դարաշրջանում կատարված սարսափելի այդ ոճրի փաստերն ու դասերը: Նախագահ ընտրվելու դեպքում վստահեցնում եմ, որ որպես ազգ պատշաճորեն կճանաչենք հայ ժողովրդի ողբերգական տառապանքը:

Հայկական սփյուռքն ու Հայաստանի անկախ հանրապետությունը հայ ժողովրդի անընկճելի ոգու վառ վկայություններն են:

Այս նոր դարաշրջանում Մ. Նահանգները պարտավոր է ակտիվորեն պաշտպանել Կովկասի բոլոր ազգությունների անկախությունը՝ խոստանալով շրջանային տարածայնությունների խաղաղ կարգավորում և տարածաշրջանի տնտեսական վերելք: Հայաստանում ժողովրդավարության զարգացումը, օրինականության հաստատմանն ու համբերատար բաց հասարակության կառուցմանը նպաստող ամերիկյան օժանդակությունը խիստ կենսական է և իմ լիակատար պաշտպանությունն է վայելում: Քաջալերվում եմ Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունների միջև վերջին շրջանում կատարված քննարկումներից: Միացյալ Նահանգները պետք է ակտիվորեն աջակցի տարածաշրջանում խաղաղության հաստատ-

մանը և ցանկանա հանդես գալ որպես միջնորդ: Բայց ի վերջո խաղաղության շուրջ պետք է բանակցեն և կարողանան պահպանել այն շահագրգիռ կողմերը: Երկարատև խաղաղությունը կարող է հաստատվել միայն նրանց շահերից բխող համաձայնագրերից:

Ես գնահատում եմ Մ. Նահանգներին տրված ամերիկահայ համայնքի նպաստը, ամերիկահայ համայնքը հավատի և ընտանիքի արժեքներին հավատարիմ մնալու օրինակ է ծառայել ցարդ և, հավատացած եմ, այդպիսին կշարունակի մնալ ապագայում:

Անկեղծորեն

ՋՈՐՋ ԲՈՒՇ»

2000թ. ապրիլի 12-ին Միացյալ Նահանգների Ներկայացուցիչների տան ավելի քան 40 անդամներ շարք ելույթներով ոգեկոչեցին Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակը: CSPAN-ով ուղիղ եթեր հեռարձակված ելույթները կազմակերպել էր կոնգրեսի հայկական հարցերի հանձնախումբը՝ համանախագահներ **Ֆրենկ Փալոնի և Ջոն Փորթերի** նախաձեռնությամբ: Հանձնախումբը մշակել էր թիվ 398 բանաձևը, որը Միացյալ Նահանգների նախագահին կոչ էր անում Հայոց ցեղասպանության շուրջ համապատասխան նյութեր և ուսումնասիրություն ապահովել արտգործնախարարության և արտաքին կապերի ծառայությունների բոլոր պաշտոնյաների համար: Թե ինչու է դա կարևոր, կոնգրեսական **Էդ Ռոյսը** պարզաբանում էր այսպես, «Քանզի մենք ցանկանում ենք ավելի լավ հասկանալ, թե ի՞նչ է ցեղասպանությունը, որտեղ էլ այն սպառնա տեղի ունենալ: Մենք ցանկանում ենք, որպեսզի բոլոր պաշտոնյաները հասկանան ցեղասպանության բնույթի ու ծագման մասին»:

Ահա քաղվածքներ մի խումբ կոնգրեսականների ելույթներից:

Ֆրենկ Փալոն. Մինչ այսօր Թուրքիան մերժում է ճանաչել մարդկության դեմ գործած զանգվածային հանցանքը, որ իրագործվել է իր վերահսկողության տակ գտնվող տարածքում, թրքական ազգայնականության անունից: Թուրքիան ոչ միայն ժխտում է ցեղասպանության փաստը, այլ նաև ագրեսիվ ջանքեր է գործադրում պատմության այլընտրանքային և սուտ տարբերակ ներկայացնելու համար՝ այդ նպատակով Միացյալ Նահանգներում մեծ գումարներ և լոբբինգի միջոցներ գործի դնելով:

Ջոն Փորթեր. Հայերը աչալուրջ կմնան երաշխավորելու, որպեսզի նման ողբերգություն այլևս չկրկնվի: Միացյալ Նահանգները ևս պետք է կարելին անի այս ուղղությամբ՝ ներառյալ պարզ հայտարարությունը Հայոց ցեղասպանության մասին:

Մենք Թուրքիային լավություն չենք անում՝ վերջինիս ինքնաքաբեության հնարավորություն տալով, իսկ մեզ երեսպաշտ ենք դարձնում, չհայտարարելով, թե ինչ է կատարվում Թուրքիայում այսօր:

Ջորջ Ռադանովիչ. Մենք պարտականություն ունենք ամերիկացիներին կրթել և տեղեկացնել Հայոց ցեղասպանության մասին: Իբրև կոնգրեսականներ, մենք պետք է վստահեցնենք, որ ցեղասպանությունը հիշվում, և մարդկային ողբերգությունն այլևս չի կրկնվի:

Ջոն Սուինի. Ես Թուրքիայի կառավարությանը կոչ եմ անում ընդունել Հայոց ցեղասպանության ողջ պատասխանատվությունը: Անցյալի վերքերը բուժելու համար Թուրքիան նախ պետք է ընդունի նախկին ղեկավարների գործողությունների պատասխանատվությունը: Մենք ոչինչ չենք կարող անել կյանք տալու զոհերին, սակայն մենք կարող ենք հարգել բոլոր նրանց, ովքեր կորցրին իրենց տները, ազատությունը, կյանքը, տեղի ունեցածի դասերն ուսուցանելով:

Աննա Էշու. Մերժել, թե ցեղասպանություն է տեղի ունեցել, նշանակում է ստվեր գցել այն արժեքների վրա, որի համար պայքարում է մեր մեծ պետությունը:

Բրեդ Շերման. Ժամանակն է, որ Թուրքիան ճանաչի ցեղասպանությունը, քանի որ միայն այդպես նրանք կարող են վեր կանգնել դրանից: Գերմանիայի կառավարությունը բավականին հեռատես էր՝ ընդունելով հրեաների հոլոքոստը, քանի որ այդպիսով նա մյուս պետությունների հարգանքը վայելեց իր արդարամտության համար: Թուրքիան պետք է հետևի Գերմանիայի օրինակին, այլ ոչ թե Ամերիկայի համալսարաններում ամբիոններ գնի՝ պատմությունը մերժելու համար:

Ռոբերտ Մենենդեզ. Ես շարունակելու եմ պատասխանատու համարել Թուրքիայի և Ադրբեջանի կառավարություններին՝ իրենց անցյալի և ներկայի գործողությունների համար: Միացյալ Նահանգների նախագահը պետք է 1,5 միլիոն հայերի սիստեմատիկ և նպատակաուղղված բնաջնջման հիշատակին իր ամենամյա հայտարարություններում իրողությունն անվանի ցեղասպանություն:

Գարի Ակերման. Ես այսօր այստեղ եմ միայն մեկ նպատակով, ոգեկոչելու 85 տարի առաջ հայ ժողովրդի մեկ երրորդ մասի զոհերի հիշատակը: Մերժել այս իրողությունը՝ նշանակում է ևս մեկ անգամ սպանել նրանց:

Մաթյու Մարթինեզ. Ժամանակն է, որպեսզի Միացյալ Նահանգների նախագահը մի կողմ թողնի դիվանագիտական նրբությունները ու Թուրքիայի զգացողությունը և ուղիղ խոսի հայ ժողովրդի ու աշխարհի հետ: Ցեղասպանությունը միակ բառն է, որ ար-

դարացիորեն համընկնում է մեկ ու կես միլիոն հայերի հիշատակին: Մարդիկ, որ նպատակաուղղված սպանվում էին՝ նրանց աշխարհի երեսից վերացնելու մշակած ծրագրին համապատասխան:

2000թ. հունիսի սկզբերին Ամերիկայի հայկական կազմակերպությունների կոալիցիան ԱՄՆ միջազգային հարաբերությունների պետական կոմիտեին կոչ արեց օրակարգ մտցնել 20-րդ դարի սկզբին Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանության ճանաչման վերաբերյալ բանաձևի քվեարկությունը (H. RES. 398):

Վերջին ժամանակներս հայերի ցեղասպանության վերաբերյալ բանաձևի ճանաչման առնչությամբ կոնգրեսի աջակցությունը շարունակում էր ուժեղանալ: Ավելի քան 100 քաղաքական գործիչներ գլխավորում են այդ շարժումը և օրինագծի քվեարկությունն օրակարգ մտցնելն արագացնելու նպատակով գնալով ավելի ուժեղ ճնշում գործադրեցին Միջազգային հարաբերությունների պետական կոմիտեի վրա: Այդ բանաձևը, որի հեղինակները հանրապետական Ջորջ Ռադանովիչը և դեմոկրատ Դեվիդ Բոնիորն են, նվիրված է հայերի ցեղասպանության ճանաչմանը: Մասնավորապես, այն երկրի նախագահին կոչ է անում ապրիլի 24-ի իր ամենամյա ելույթների ժամանակ ցեղասպանությունը բնութագրել որպես «ցեղասպանություն», ինչպես նաև միջազգային հարաբերությունների հետ գործ ունեցող ԱՄՆ-ի կառավարության բոլոր աշխատողներին կոչ է անում ծանոթ լինել հայերի ցեղասպանության փաստին:

Կոնգրեսին ուղղված նամակում H. RES. 398 կոմիտեն նշել է, որ այդ բանաձևը «Կոնգրեսի փորձն է ճանաչելու այս հազարամյակում առաջին ցեղասպանությունը: H. RES. 398-ի ընդունումը ոչ միայն կաջակցի հայերին, այլ նաև կհավաստի, որ էթնիկական հողի վրա կատարվող խտրականությունը, ցեղասպանությունը չպետք է աննկատ մնան»:

H. RES. 398 կոմիտեն առաջատար հայկական կազմակերպությունների կոալիցիա է, որոնք միավորվել են օրինագծին աջակցելու համար: Կոնգրեսականներ Ռադանովիչի և Բոնիորի հետ բանաձևի աջակցությամբ հանդես են եկել նաև Կոնգրեսի հայկական խմբի համանախագահներ Ֆրենկ Փալոունը, Գարրի Ակերմանը և ուրիշներ:

H. RES. 398 բանաձևը հանդիպեց Քլինթոնի վարչակազմի և թուրքական կառավարության ընդդիմությանը: National Journal-ում տպագրված հոդվածի համաձայն, Թուրքիայի դեսպանը, լոբիստների ղեկավարներ Բոբ Լիվինգսթոնը և Ջերալդ Սոլոմոնը մի շարք ազդեցիկ քաղաքական գործիչների հետ հանդիպումների ժամանակ

փորձել են համոզել վերջիններիս, որ այդ բանաձևն անընդունելի է և կարող է վնասել թուրք-ամերիկյան հարաբերություններին:

Պետդեպարտամենտի խոսնակը մարտի 27-ի ճեպազրույցում հանդես եկավ H. RES. 398 բանաձևի ընդունման դեմ: H. RES. 398 կոմիտեն մայիսի 1-ին նամակ ուղարկեց ԱՄՆ պետքարտուղար Մադլեն Օլբրայթին՝ խնդրելով պարզել պետդեպարտամենտի դիրքորոշումը բանաձևի առնչությամբ, բայց այդպես էլ ոչ մի պատասխան չստացավ:

Հայոց ցեղասպանության ճանաչման օրինագծի շուրջ հրապարակումները հեղեղեցին Թուրքիայի լրատվամիջոցները: Թուրքիայի պետնախարար Աբդյուլհալուք Մեհմեդ Չայը սեպտեմբերի 13-ին թուրքական զանգվածային լրատվական միջոցների հետ հանդիպման ժամանակ ցեղասպանության օրինագծի ընդունումը հավանական չհամարեց: Չայը մասնավորապես նշել է. «ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ դժվար թե այդքան հեշտությամբ փոփոխություններ լինեն: Անցյալում հայերի հետ պատահած միջադեպերին միայն հայերի աչքով չպետք է նայել: Օսմանյան վիճակագրությունը ցույց է տալիս, որ 1914 թվականին այստեղ ապրելիս են եղել 1 մլն. 100 հազար հայեր: 1,5 մլն. հայերի կոտորածի շուրջ պնդումներն հիմնովին սխալ են»: Թուրք պետնախարարը նշել է, որ տեղի ունեցածը եղել է ստիպողական տարագրություն և ոչ թե ցեղասպանություն:

Չայը նաև Հայաստանին մեղադրել է Քրդական բանվորական կուսակցության հետ կապեր ունենալու մեջ: Նա նշել է, որ Հայաստանը օժանդակել է Քրդական բանվորական կուսակցությանը, որի գործունեության հետևանքներով զոհվել է 30000 մարդ: Տխուր ավանդույթի համաձայն, Թուրքիայի մեղադրանքները մնացին առանց հիմնավորումների:

Թուրքական «Միլիեթ»-ի ամերիկյան թղթակցի կարծիքով, Ներկայացուցիչների պալատի Միջազգային հարաբերությունների և մարդու իրավունքների կոմիտեի կողմից օրինագիծն անկասկած կընդունվի, որից հետո այն կփոխադրվի Արտաքին հարաբերությունների կոմիտե: Վերջինիս կողմից օրինագծին հավանություն տալու դեպքում օրինագծի վերջնական ընդունումը հավանական է դառնում: Թերթը նաև նշում է, որ Քլինթոնի վարչակազմը չի աջակցում այս օրինագծին:

«Զաման» ազգայնական օրաթերթը գրում է, որ մոտ օրերս Թուրքիայի արտգործնախարար Իսմայիլ Ջեմը հանդիպելու է ԱՄՆ պետքարտուղար Օլբրայթի հետ և խոսելու է ցեղասպանության ճա-

նաչման անթույլատրելիության մասին: «Ռադիկալ» և «Ենի շաֆաք» թերթերը տեղեկատվություն են հաղորդում ԱՄՆ հայկական կազմակերպությունների դեմ ծավալված «պատերազմի» մասին: «Թուրք-ամերիկյան հանձնաժողով» կազմակերպության նախագահ Լինքոլն Մակքարդին նամակ է հղել Ներկայացուցիչների պալատի նախագահ Դենիս Հասթերթին, որում նշել է, թե օրինագծի ընդունումը մեծ հարված կհասցնի թուրք-ամերիկյան հարաբերություններին: Ուղերձում նշվում է, որ Անկարան մոտ ապագայում մտադիր է 20 մլրդ. դոլարի գնումներ կատարել ռազմական և շուրջ 5 մլրդ. դոլարի գնումներ էներգետիկ ոլորտում, մինչդեռ ցեղասպանության ճանաչումը կտապալի ԱՄՆ-ի այս հայտամրցույթները շահելու հնարավորությունը: Այդ կազմակերպության անդամներն են «Բոինգը», «Սիկորսկի էյրքրաֆթը», «Ջեներալ դայնեմիքսը», «Ջեներալ էլեքթրիքը» և այլ խոշոր ամերիկյան ընկերություններ:

Թուրք-հայկական գործարար կապերի զարգացման հանձնաժողովի նախագահ Քաան Սոյաքը «Թըրքիշ դեյլի նյուզ»-ին տված հարցազրույցի ժամանակ նշել է, որ Թուրքիայի իշխանությունները պետք է բանակցեն հայկական լոբբիի հետ և ոչ թե առճակատման գնան: «Ակնհայտ է, որ ԱՄՆ-ի հայկական լոբբին շատ ուժեղ է: Թուրքիայի համար դժվար է պայքարել դրա դեմ: Ես միշտ ասել եմ, որ Թուրքիայի կառավարությունը պետք է փորձի համաձայնության գալ հայերի հետ: Թե հայերը և թե՛ թուրքերն այսօր միանգամայն հակասական դիրքորոշումներ ունեն, բայց ես հավատում եմ, որ նրանք փոխըմբռնման կհասնեն, եթե սկսեն բանակցել այս հարցի շուրջ»: Դիվանագիտական աղբյուրները թերթին տեղեկացրել են, որ Թուրքիան պատրաստ է բանակցություններ սկսել Հայաստանի հետ, եթե Հայաստանը դադարեցնի Թուրքիայի դեմ ծավալած արշավը:

«Սաբահ» թերթը հավելում է, որ օրինագծի հաստատումից հետո հայությունը մտադիր է բարձրացնել նյութական փոխհատուցման հարցը: «Միաժամանակ կստեղծվի իրավական հիմք ճնշումն ուժեղացնելու համար», գրում է «Սաբահը»:

Սեպտեմբերի 21-ին ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի Միջազգային հարաբերությունների և մարդու իրավունքների ենթահանձնաժողովը հավանություն է տվել Հայոց ցեղասպանության վերաբերյալ Կոնգրեսի N 398 բանաձևին: Այն ընդունվեց՝ դրա օգտին ենթակոմիտեի նախագահ Քրիս Սմիթի, կոնգրեսականներ Սինթիա Մակքինեի և Բրեդ Շերմանի փաստարկների հիման վրա:

Քվեարկությանը նախորդեցին դրանից մեկ շաբաթ առաջ

չորս և կես ժամանոց լսումները, որտեղ, բացի ԱՄՆ Ներկայացուցիչները պալատի անդամներից, ելույթ ունեցան նաև ցեղասպանության ուսումնասիրությունների ասպարեզում մասնագետներ, պրոֆեսորներ Ռոջեր Սմիթը՝ Վիլյամ և Մերի քոլեջից և Պերդյուի համալսարանից Ռոբերտ Մելսոնը, որոնք Մեծ եղեռնի վերաբերյալ պատմական փաստեր ներկայացրեցին:

398 բանաձևը սահմանում է Միացյալ Նահանգների դիրքորոշումը Հայոց եղեռնի վերաբերյալ, մասնավորապես.

«Կոչ է անում Միացյալ Նահանգների նախագահին՝ ապահովելու մարդու իրավունքների հարցերով զբաղվող ամերիկյան դիվանագետների կրթական ծրագրերի շրջանակներում Հայոց եղեռնի վերաբերյալ ուսուցումը:

Կոչ է անում Միացյալ Նահանգների նախագահին Ապրիլի 24-ի իր ամենամյա ելույթում հստակորեն բնութագրել Հայոց եղեռնը որպես ցեղասպանություն»:

Այս բանաձևը ներկայացված էր Ներկայացուցիչների պալատի անդամներ Ջորջ Ռադանովիչի և Դեվիդ Բոնիորի կողմից, և հովանավորված 140 այլ կոնգրեսականների կողմից: Այս ամիս ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի խոսնակ Դեննիս Հասթերթը կոնգրեսական Ջեյմս Ռոգանի և մի խումբ ամերիկահայ գործիչների հետ հանդիպման ընթացքում հայտարարել է, որ դա իր մտադրությունն էր՝ 398 բանաձևը քննարկման ներկայացնել պալատում:

Սեպտեմբերի 27-ին թուրքական «Ջումհուրյեթ» թերթը հրատարակեց «Խեղաթյուրում են պատմությունը» խորագրով մի հաղորդագրություն, որտեղ ասվում է, որ Օսմանյան և Գերագույն սպայակույտի ռազմական, պատմական ու ռազմավարական հետազոտությունների գլխավոր վարչության արխիվներում գտել են նյութեր, ուր նշվում է, որ 1916-1917թթ. հայազգի Հանքարձում Բոյաջյանը և նրա հրամանատարության տակ գտնվող զինյալները Անատոլիայում կոտորել են 500 հազար թուրք: Պատմաբան Ջեզմի Յուրքսևերը «Անատոլու Աժանսը» լրատվական գործակալությանը տրված հայտարարության մեջ ցեղասպանության օրինագծի ընդունումը որակել է որպես «պատմության խեղաթյուրում» և ասել. «իրականում կոտորվածները թուրքերն են, այս ճշմարտությունը փաստաթղթերով ապացուցվել է բազմաթիվ հետազոտողների կողմից»: Նշելով, որ թուրքերին կոտորելու հայերի նախագիծը բերված է օսմանյան արխիվի N=234 նյութում, ուր կա քարտեզ: Յուրքսևերն ասել է. «արխիվում տեղ գտած նյութերի մեջ անձնական գործերի համաձայն պարզ է դառնում, որ Ադանայի Քոզան սանջակի Հաշին (Սայիմ Բեյի) գյուղահա-

մայնքում ծնված հայազգի Համբարձում Բոյաջյանն է ցեղասպանության ամենագլխավոր պատասխանատուն»:

Համբարձում Պոյաճյանը, որը մեր ժողովրդին հայտնի է Մեծն Մուրադ անունով, ծնվել է 1867թ. Հաճընում: Նա ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչներից էր, Հնչակյան կուսակցության ղեկավարներից: 1894-ի օգոստոսին ձերբակալվել էր Սասունում, նետվել Բաղեշի բանտը, ապա աքսորվել Տրիպոլի: 1905-ին փախել է բանտից և բնակություն հաստատել Եվրոպայում: 1908-ի երիտթուրքական հեղաշրջումից հետո վերադարձել է Թուրքիա, ընտրվել ազգային երեսփոխան և օսմանյան խորհրդարանի անդամ: 1915-ի ապրիլին Կ. Պոլսում ձերբակալվել է և հայ մյուս մտավորականների հետ աքսորվել է Կեսարիա, որտեղ ռազմական ատյանը դատապարտել է նրան մահվան և դաժանաբար խոշտանգելուց հետո 1915թ. հուլիսի 30-ին կախաղան է բարձրացվել: Ականատեսները պատմում են, որ կախաղանի այնի առջև Մեծն Մուրադը ծնկաչոք աղոթել է, ասելով՝ «Տե՛ր ներիր նրանց, որովհետև նրանք չգիտեն, թե ինչ են գործում»:

Պատմությունը հերքական անգամ նենգափոխող պատմաբան Ջեմզի Յուրքսևերը հավանաբար ծուլացել էր ծանոթանալ ռազմական ատյանի փաստաթղթերի հետ, կամ ուղղակի իր ծառայությունը մատուցել է նենգափոխելով իրականությունը, քանի որ 1915թ. կախաղան բարձրացված Համբարձում Բոյաճյանը չէր կարող 1916-1917թթ. Անատոլիայում կոտորել 500 հազար թուրքերի:

Սեպտեմբերի 27-28-ին Վաշինգտոնում ԱՄՆ Կոնգրեսի գրադարանի Մեդիսոնի անվան մասնաշենքում տեղի է ունեցել «Հայոց ցեղասպանության ամերիկյան արձագանքը» խորագրով համաժողով: Համաժողովը անց է կացվել Կոնգրեսի գրադարանի և Հայկական ազգային ինստիտուտի հովանու ներքո:

Համաժողովի բացումը կայացել է Հոլոքոստի զոհերի հիշատակի թանգարանում, որտեղ ողջույնի խոսքով հանդես են եկել թանգարանի տնօրեն Իրվինգ Գրինբերգը և Հայկական ազգային ինստիտուտի նախագահ Ռոբերտ Գալուստյանը:

Համաժողովի հիմնական զեկուցողը Օքսֆորդի համալսարանի պրոֆ. Մարտին Գլիբերտն էր: Զեկուցումներով հանդես եկան նաև Ռիչարդ Հովհաննիսյանը, Վահագն Դադրյանը, Ջեյ Վինթերը (Քեմբրիջի համալսարան), Լեո Ռիբաֆեն (Ջորջ Վաշինգտոնի անվան համալսարան), Ջոն Քուփերը (Վիսկոնսինի համալսարան), Լլոյդ Ամբրոշիուսը (Նեբրասկայի համալսարան), Թոմաս Լենարդը (Կալիֆորնիայի համալսարան) և ուրիշներ:

Համաժողովի աշխատանքներին մասնակցել է նաև ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Արման Կիրակոսյանը:

Սեպտեմբերի 28-ի ուշ երեկոյան ԱՄՆ Կոնգրեսի միջազգային հարաբերությունների հանձնաժողովը քննարկեց նախորդ շաբաթ իր ենթահանձնաժողովի կողմից ընդունված Հայոց ցեղասպանության թիվ 398 բանաձևը: Թվում էր, թե քննարկմանը կհետևի քվեարկությունը, և բանաձևը կարժանանա նաև հանձնաժողովի հավանությանը:

Հանձնաժողովում բանաձևի ընդունման հավանականությունն անչափ մեծ էր, որն անասելի մտահոգություն էր պատճառում Թուրքիայի քաղաքական շրջանակներին: Բանաձևի ընդունման մասին կարծիքը համարելով տիրապետող, թուրքական հեռուստատեսությունը, փաստորեն, դառնում էր այդ մտահոգության արտահայտիչը:

Բանաձևի քննարկման հետաձգումը, սակայն, գերազանցեց բոլոր ենթադրությունները: Սեպտեմբերի 29-ի առավոտյան այդ մասին նույն հեռուստատեսությամբ հաղորդվեց, որ նիստի նախօրյակին ամերիկյան իշխանություններն Անկարայում ԱՄՆ նորընծա դեսպան Ռոբերտ Փիրսոնին Նյու Յորք են կանչել: Վերջինի անակնկալ ելույթը լուրջ ներգործություն է ունեցել հանձնաժողովի անդամների վրա: Այդ ընթացքում Կալիֆորնիայի սենատոր, դեմոկրատ Թոմ Լանթոսն ու Ինդիանայից հանրապետական Դեն Բըրթոնը բանաձևի ոճը մեղմելու փորձեր են կատարել: Լանթոսը, որը Կոնգրեսում Հոլոքոստից միակ վերապրողն է, առաջարկել է բանաձևում ներառել ցեղասպանությունն ընդհանրապես: Թեև դրանք մերժվեցին հանձնաժողովի կողմից, բայց և այնպես սուր բանավեճերի տեղիք տվեցին, որոնց արդյունքում բանաձևի առնչությամբ որոշման կայացումը հետաձգվեց հաջորդ շաբաթ: Միակ քվեարկությունը կայացավ կոնգրեսական Թոմ Թանկրեդոյի առաջարկի վերաբերյալ՝ բանաձևում ոչ թե այժմյան Թուրքիայի, այլ Օսմանյան կայսրության անունը նշելու կապակցությամբ:

Թուրքական աղբյուրները նշում են, որ բանաձևի քննարկման հետաձգմանը, բացի դեսպան Փիրսոնի անակնկալ ելույթից, նպաստել են նաև պետքարտուղար Մադլեն Օլբրայթի կոչը հանձնաժողովի անդամներին ու թուրքական կառավարության ճնշումները Վաշինգտոնի վրա: Թուրքիայի տեսանկյունից, սակայն, կարևորը բանաձևի մեղմացումը չէ, այլ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի օրակարգից դրա դուրսմղումը:

Ահա թե ինչու արտգործնախարար Իսմայիլ Ջեմը, արձա-

գանքելով բանաձևը մեղմացնելու փորձերին, հայտարարեց, թե դրանք իրենց չեն հետաքրքրում, ապա իսկույն ավելացրեց. «Բայց բանաձևը մեզ անհանգստացնում է»:

Ինչ վերաբերում է բանաձևի քննարկումը հետաձգելու փաստին, ապա սա էլ, ըստ ամենայնի, Թուրքիայի ազգային անվտանգության խորհրդին չէր հետաքրքրում: Հակառակ դեպքում թուրքական թերթերը «հակազդեցության ծրագրին» չէին անդրադառնա, ոչ էլ վերոհիշյալ խորհուրդը դա կմտցներ սեպտեմբերի 29-ի նիստի օրակարգում:

Դա փաստորեն ԱՄՆ-ի Կոնգրեսի մարդու իրավունքների և միջազգային հարաբերությունների ենթահանձնաժողովի կողմից Ցեղասպանության օրինագծի ընդունմանն ի պատասխան ձեռնարկվելիք միջոցառումների ծրագիր է: «Ջումհյուրիեթը» սեպտեմբերի 29-ին նշեց այդ ծրագրի մշակմանը թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբի, վարչապետի ապարատի և արտգործնախարարության անմիջական մասնակցության մասին:

«Հակազդեցության ծրագիրը» ենթադրում է Հայաստանի, հայկական սփյուռքի և ԱՄՆ-ի դեմ ուղղված մի շարք հակաքայլեր: Այսինքն՝ ծրագիրը երեք ուղղություններով էր իրագործվել: Ըստ «Ջումհյուրիեթի», գլխավոր շտաբը հակված է հակազդեցությունը գլխավորապես դրսևորել Հայաստանի նկատմամբ՝ խնայելով ԱՄՆ-ին, իսկ կառավարությունը ճիշտ հակառակն է պնդում:

Համենայն դեպս, ազգային անվտանգության խորհրդի նիստը որոշեց. փակել H-50 օդային միջանցքը հայկական ինքնաթիռների առջև, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում և այլ երկրներում ուժեղացնել հակաքարոզչությունը, սահմանափակել Ինջիռլիքի ռազմաբազայից օգտվելու ամերիկացիների իրավունքները, միջոցներ ձեռնարկել Իրաքի հետ դիվանագիտական հարաբերությունները վերականգնելու համար:

Վերոհիշյալ միջոցառումների բնույթի բոլոր հիմքերը տալիս են ենթադրել, որ դրանք ոչ այնքան Հայաստանի, որքան ԱՄՆ-ի դեմ էին ուղղված: Գաղտնիք չէ, որ H-50 միջանցքից հայկական ինքնաթիռների հետ օգտվում են նաև ադրբեջանական ու թուրքական ինքնաթիռները: Ընդ որում՝ ավելի քան հաճախակի, իսկ օդային կամուրջը Թուրքիային ուղղակիորեն Ադրբեջանի հետ կապող միակ ուղին է: Այլ կերպ՝ փակել միջանցքը նշանակում է ինքնակամ երկարացնել այդ ուղին:[1]

Սեպտեմբերի 28-ին թուրքական «Ակտուալ» ամսագիրը հրատարակեց մի հարցազրույց, որը կրում էր «Հայերի դեմ օգտագործվել է հատուկ կազմակերպություն» խորագիրը: Հարցազրույցի նախաբանում ամսագրի թղթակիցը գրում է, որ նախագահ Սեզերը պատասխանելով Հայաստանի նախագահ Քոչարյանի քննադատությանը՝ ցանկացել է, որպեսզի «պատմությունը թողնվի պատմաբաններին»:

Թուրքիայի հայերի պատրիարք Մութաֆյանը նույնպես պահանջել է, որպեսզի «թուրք և հայ պատմաբանները այս խնդիրը լուծեն փոխադարձ երկխոսությամբ և երրորդ երկրի խորհրդարանները չօգտագործեն այն»: Այդ կապակցությամբ թղթակիցը զրուցում է թուրք պատմաբաններ՝ պրոֆեսոր Մեթե Թունչայի և պրոֆեսոր Էդհեմ Էլդեմի հետ:

«***Հարց*** – Ի՞նչ կասեք հայերի ցեղասպանության հարցը պատմաբաններին թողնելու մասին նախագահ Սեզերի պատասխանի վերաբերյալ:

Մեթե Թունչայ - Ես վաղուց ի վեր այդ համոզմունքին եմ: Սակայն այն պատմաբաններին չհանձնողների և իրենց մենատիրության մեջ պահել ցանկացողների շարքում են հատկապես Թուրքիայի Արտաքին գործերի նախարարությունը, իսկ այնուհետև՝ Կրթական բարձրագույն մարմինը: Պետական շրջանակները ոչ թե ցանկանում են այն հանձնել պատմաբաններին, այլ համոզում են ճիշտ հակառակ ուղղությամբ:

Հարց - Անկարան կարո՞ղ է արդյոք ընդունել, որ միայն պատմաբաններին է խոսք պատկանում:

Պատասխան - Դա մենք ամեն դեպքում չենք կարող տեսնել: Համոզված չեմ, որ այսպիսի թեժ պայմաններում պատմաբաններն էլ կարողանան ի հայտ բերել ճշմարիտ մի բան: Այս խնդրի վրա անձամբ աշխատել եմ, սակայն որքան կարդացել եմ, հայերի կողմից էլ աշխատությունները տարբերվում են: Որքան էլ խելոք լինի մարդը, որոշ ժամանակ անց նրա միտքը զգացմունքայնության հետևանքով հանգում է իրականությունից զերծ ծայրահեղության: Այդ իսկ պատճառով ոչ թուրք, ոչ հայ պատմաբանը չեմ կարծում, թե կարող է հան-

[1] Հակոբ Չաքրյան, Հետաձգվեց հայոց ցեղասպանության բանաձևի քննարկումը. սակայն դա թուրքերին չի բավարարում, «Ազգ», 30 սեպտեմբերի, 2000թ.:

գել սառնասիրտ և օբյեկտիվ եզրակացության:

Հարց – Լավ, իսկ այդ դեպքում ի՞նչ է լինելու:

Մեթե Թունչայ - Այս խնդրում մեզ ամենաշատ հետաքրքրողը Թուրքիայում ապրող հայերն են: Ոմն նախարար դրանից հետո եթե ներողություն էլ խնդրի, որպես ծանր վիրավորանք կարող էր նշել, որ «Օջալանը հայկական ծագում ունի»: Այն, որ հայ լինելը վատ իմաստ է կրում իր մեջ, ըստ էության հայտարարվում է պաշտոնական ուղիներով: Ձեզ մի պահ զգացեք Թուրքիայի քաղաքացի հայ և միանգամից կտեսնեք, թե ինչպիսի դժվարություն է դա:

Հարց – Որպես պատմաբան ձեր կողմից գրված աշխատությունները ապացուցո՞ւմ են ցեղասպանությունը:

Մեթե Թունչայ - Դա ասելու համար անհարժեշտ է մանրակրկիտ աշխատել պատմության վրա: Անհրաժեշտ է աշխատել այն ուղղությամբ, թե 1915թ. առաջին չորս ամիսներին որտեղ, ինչ մեծության դեպքեր են եղել: Երբ օսմանցիները պատերազմում էին ռուսների հետ, ռազմաճակատի թիկունքում կարող էին որոշ ապստամբություններ լինեին և հայտարարվեր «ժամանակավոր օրենք»: Այդ որոշման համաձայն բանակի հրամանատարներին լիազորություններ է տրվել որոշ մարդկանց երկրի մի մասից մյուս մաս ուղարկելու համար: Սակայն այդ օրենքն ամբողջությամբ օգտագործվել է հայերի դեմ: Չի սահմանափակվել գլխավորապես միայն երկրի արևելյան շրջաններով: Ասում են, որ նման բան չի արվել Ստամբուլում ու Իզմիրում, սակայն ոչնչացվել են համայնքի բոլոր առաջադեմ մարդիկ ու պատգամավորները:

Հարց – Տեղահանելու միջոցո՞վ:

Մեթե Թունչայ - Ոչ, տեղահանելու միջոցով չէ: Սպանելու միջոցով: Հրամանի համաձայն մի շրջանի հայերին Սիրիա ուղարկելու համար, ժանդարմերիայի տրամադրության տակ առնելով, հանձնում էին այլ շրջանի հրամանատարին: Անկասկած դրա մեջ շատ ճիշտ, առողջ բնավորությամբ մարդիկ կային: Նրանք երես չէին տալիս «Հատուկ կազմակերպության» անդամներին: Հանձնված հայերն էլ արդեն որքանով որ ողջ-առողջ մնացել էին, այնքանով էլ հանձնվել են մյուսներին: Արդյունքում պայմանականորեն Սիրիա գնացող մի զանգված կար: Սակայն որևէ փաստաթուղթ չկա, որ օսմանյան խորհրդարանի որոշ անդամներ Ադանա են գնացել իրենց կամքով: Շատ հավանական է նրանց հավաքել են և ոչնչացրել: Հատուկ կազմակերպությունը 1914թ. ռազմական դրության հետ կապված կիսալեգալ մի կազմակերպություն էր և նրանում շատ կամավորներ են եղել: Նրանց նշանակալի մասը Բալկաններից գաղթած փախստականներ էին (մուհաջիրներ): Իսկ Արևելքում հայերի հետ ընդհարվելու համար վաղուց ի վեր օգտագործվում էին քրդերը:

Հարց - Դուք որևէ բան գիտե՞ք գույքի բռնագրավման մասին:

Մեթե Թունչայ - Այդ ուղղությամբ հատուկ չեմ աշխատել, սակայն որքան կարդացել եմ, նման բան չեմ հանդիպել: Փախստական հայերին ոմանք Թուրքիայի Հանրապետության հիմնադրումից հետո գալով և անշարժ գույքի վկայականները ցույց տալով, տեր էին կանգնում իրենց գույքին և դրանից անմիջապես հետո Թուրքիա այդ հայերի մուտքը ապահովող անվտանգության աշխատակիցների դեմ դատական գործ հարուցում: «Պարոն 5 տոկոս» մականունով ճանաչված Գյուլբեկյանն օսմանյան հայ է: Զգալով, որ վրա է հասնում Երկրորդ համաշխարհային պատերազմը Գյուլբեկյանը ցանկացել էր գալ Թուրքիա՝ ասելով, որ այն իր «հայրենիքն» է: Ասում են, որ նրան անգամ թույլ չի տրվել գալ և իր կորցրած գույքին տիրանալ: Բարկանալով՝ նա հեռանում է Պորտուգալիա: Ներկայումս պորտուգալիայում Գյուլբեկյանի անվան մշակույթանին կենտրոն կա, եթե այդ կենտրոնը Թուրքիայում լիներ, կարող էր բացել մեծ Վերածնունդի ճանապարհ:

Հարց – Կառավարության արխիվը երկար ժամանակ փակ էր այն պատճառով, որ անցանկալի փաստաթղթե՞ր կայն այնտեղ:

Մեթե Թունչայ - Արխիվների հետ կապված մերոնք մեծ վախի մեջ են: Դրա համար ասելով, որ պետք չէ «վնասակար» բաներ ձեռքի տակ անցնեն, նախապես այնտեղ են ուղարկվել թոշակի անցած սպաների: Կարծում եմ որ այդ վախը անօգուտ է: Ամեն դեպքում կարող է շատ քիչ փաստաթուղթ գտնվել, ինչը կապացուցի ցեղասպանությունը: Քանի որ հավանաբար դրանք ամբողջությամբ բանավոր կերպով տրված հրամաններ են եղել և դրանց կարևոր մասը տարածվել է Հատուկ կազմակերպության ներքին գրագրությամբ:

Այնուհետև թղթակիցը դիմել է պրոֆ. Էլդեմին:

Հարց - «Պատմությունը թողնենք պատմաբաններին», հայկական հարցը միայն պատմակա՞ն հարց է:

Է. Էլդեմ – Ըստ էության հնարավոր չէ միանալ նախագահի խոսքին: Ասում եմ ըստ էության, քանի որ այս հարցը քաղաքական բախման բնագավառ է: Եթե ցանկանում ենք բացահայտել այս խնդրի իրողությունը, ունենալ լուրջ փաստաթղթեր, անկասկած անհրաժեշտ է այս խնդիրը թողնել պատմաբաններին: Սակայն չեմ կարծում, որ այդ պատմաբաններն այս խնդրի կապակցությամբ նոր բաներ ասելու համար լուրջ տեղեկություններ ունեն, քանի որ հեշտ չէ ձեռք բերել դրա հետ կապված փաստաթղթեր: Այ իսկ պատճա-

ռով, պատմաբաններին թողնելը պետք է հասնակալ որպես այդ խնդրում պատմաբանների աշխատանքների շնորհիվ բացահայտված արդյունքի գնահատական: Սակայն դա չպետք է հասկանալ, որ պատմաբանները դատարանի նման վճիռ են կայացնելու և լուծելու են այս խնդիրը: Ճիշտ չի լինի պատմաբաններին դնել այդպիսի դրության մեջ: Կարծում եմ, պատմության տեսանկյունից դժբախտություններ կլինեն, եթե պատմաբանը դիտվի որպես դատավոր կամ իշխանավոր:

Հարց – Ըստ էության բողոքներ են եղել նախագահի հասցեին: Դրանք այսպիսի բնույթ կրող բողոքներ են՝ «Դա այնպիսի լուրջ գործ է, որ պետք չէ պատմությունը պատմաբաններին թողնել»:

Է. Էլդեմ – «Պատմությունը պատմաբաններին թողնելու» միտքը կարող եմ մասնակիորեն կիսել, քանի որ պատմաբանն էլ է մարդ և սխալներ է կատարում: Սակայն այսպիսի խնդիրներում անհրաժեշտ է միմյանցից տարբերել գիտակից ու անգիտակից սխալները: Վստահաբար ինչ-որ բան եղել է: Գաղթ եղել է, կոտորած եղել է: Պատմական տեսանկյունից հետաքրքիր դեպքերը նրանք են, թե ինչու են եղել, ինչպես են զարգացել: Պատմական տեսանկյունից հիմնական խնդիրը հետևյալն է, որ ինչպես հայկական, այնպես էլ թուրքական կողմում ճնշում կա ավտոգրաքննադատությունից գրաքննադատություն փոխվող արշավի հետևանքով: Սպասում են, որ պատմաբանը դրան կողմ հանդիսանա:

Հարց – Ձեր կողմից հետազոտված արխիվներում որևէ տեղեկություն կա՞ այն մասին, թե 1914-1918թթ. բանկերից ում գումարներն են հանել: Օրինակ՝ հայերի կողմից բանկերից գումար հանելու ծավալը կտրուկ մեծանո՞ւմ է:

Է. Էլդեմ – Այդպիսի բան կա: Սակայն պատճառը տարբեր է: 1914թ. վերջին վերացվեց թղթադրամի փոխարկելիությունը ոսկով: Ուստի յուրաքանչյուրը հարձակվել է ոսկու վրա, այսինքն փողը բանկից հանելով, պահել են: Անմիջապես հետո սկսվում է երկրից ոսկե դրամի սարսափելի արտահոսք, քանի որ երիտթուրքերի տնտեսական քաղաքականությունը անհաջողության էր մատնված և այդ իրավիճակը տակնուվրա էր անում շուկան:

Հարց - Այսինքն ասում եք, որ ուղղակիորեն գաղթի հետ կապ չունի...

Է. Էլդեմ – Հաստակ կապ չեմ կարող ստեղծել: Գաղթի հետևանքով կարող են փողերը հանվել, սակայն այդ բացահայտելու համար անհրաժեշտ է շատ ավելի ընկղմվել մանրամասների մեջ: Քանզի դա չեմ արել, որևէ բան չեմ կարող ասել:

Հարց – Լավ,իսկ կարելի՞ է ասել, որ Օսմանյան Բանկից վարկեր վերցրած հայերը խափվել են, քանի որ պետությունը բռնագրավել է նրանց ունեցվածքը:

Է. Էլդեմ – Գաղթի հրամանը արձակելուց հետո բանկում որոշ ցնցումներ եղել են, քանի որ գաղթողների շարքերում եղել են նաև բանկիրներ: Բանկը ջանում էր նրանցից ազատվել և հիմնականում դա հաջողվում էր: Նաև պարտապան հաճախորդներ կային: Բանկն էլ տեսնելով, որ վերջիններս գաղթում են, ձգտում էր առգրավել նրանց ունեցվածքը: Սակայն բանկին դա անել այնքան էլ չէր հաջողվում:

Հարց – Որպես պատմաբան հայկական հարցի կապակցությամբ ո՞րն է ձեր տեսակետը:

Է. Էլդեմ – Որպես պատմաբան գտնում եմ, որ այդ ժամանակաշրջանում տեղի է ունեցել մի դրամա ամենածանր իմաստով: Դա միանշանակ է: Դա քաղաքական հարց չէ, մարդկային և պատմական իրադարձություն է: Քաղաքական կողմը ինձ չի հետաքրքրում, ճիշտ չեմ համարում, որ պատմաբանները այդ կողմը քաշվեն: Սակայն չեմ կարծում նաև, որ անհրաժեշտ է բացահայտել այդ դեպքերի էությունը և չափերը: Եթե նույնիսկ համարենք, որ երկու կողմերն էլ ծանր դառնություններ են ապրել, վերջում հայ բնակչության մեծ մասը դառնություն է տեսել և կարծում եմ, որ ինչպես գաղթը, այնպես էլ կոտորածը մեծ չափերի է եղել: Ավելի լավ կլինի, խնդրի ուսումնասիրությունը, ինչպես ասել է նախագահը, եթե ամբողջությամբ թողնվի պատմաբաններին...»:

ԱՄՆ Կոնգրեսի միջազգային հարաբերությունների հանձնաժողովը որոշում ընդունեց հայերի ցեղասպանության ճանաչման հարցի քվեարկությունը հետաձգել մեկ շաբաթով:

Այդ հարցի առնչությամբ վերոհիշյալ հանձնաժողովում սեպտեմբերի 28-ին կայացած լսումները տևեցին մոտ չորս ժամ: Այնուամենայնիվ, բանաձևի ընդունման կողմնակիցներին այդպես էլ չհաջողվեց միջազգային հարաբերությունների հանձնաժողովի անդամներին համոզել լսումներից անմիջապես հետո բանաձևի առնչությամբ քվեարկություն անցկացնել: Արդյունքում որոշվեց քվեարկությունն անցկացնել հաջորդ շաբաթ:

«398 բանաձևի ընդունումը տվյալ պահին հակասում է ԱՄՆ շահերին, քանի որ այն կվնասի թուրք-ամերիկյան հարաբերություններին», - լսումների ընթացքում հայտարարեց Կալիֆորնիայի նահանգից կոնգրեսական, դեմոկրատ Թոմ Լանթոսը: Նրա կարծիքով տվյալ պահին Միացյալ Նահանգները չեն կարող թույլ տալ փչացնել

հարաբերություններն Անկարայի հետ, «չէ, որ Թուրքիայում՝ Ինջիռլիկում, գտնվում է ՆԱՏՕ-ի ռազմական բազան»:

Թուրքիայի շահերը պաշտպանեցին նաև ԱՄՆ Կոնգրեսի մի շարք այլ ներկայացուցիչներ: Այսպես, արտասահմանի հայկական սփյուռքի մի շարք զանգվածային լրատվության միջոցների տեղեկությունների համաձայն, պաշտոնական Անկարայի ներկայացուցիչները մոտ 1,8 մլն դոլար են վճարել կոնգրեսականներ Բոբ Լիվինգսթոնին, Ջերալդ Սոլոմոնին և Սթիվեն Սոլացին, որպեսզի նրանք պաշտպանեն իրենց շահերը Կոնգրեսում:

Դրանից բացի կոնգրեսականների առջև հանդես եկավ Թուրքիայում ԱՄՆ դեսպան Ռոբերտ Փիրսոնը: Կոնգրեսի կողմից տվյալ բանաձևի ընդունման դեպքում «կհաջորդի Թուրքիայի խիստ բացասական արձագանքը, ինչը սպառնում է փչացնել ոչ միայն թուրք-ամերիկյան հարաբերությունները, այլև էլ ավելի բարդացնել Թուրքիայի և հարևան Հայաստանի հարաբերությունները», - հայտարարել էր ԱՄՆ դիվանագետը:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 22-ին կայացած լսումների ժամանակ ԱՄՆ Կոնգրեսի միջազգային հարաբերությունների հանձնաժողովի միջազգային կապերի և մարդու իրավունքների ենթահանձնաժողովը քվեարկել էր 1915-ին Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանության ճանաչման 398 բանաձևի ընդունման օգտին, որից հետո բանաձևը գտնվեց միջազգային հարաբերությունների հանձնաժողովի վարույթում:

Նախատեսվում էր ԱՄՆ Կոնգրեսի կողմից բանաձևի ընդունման դեպքում ԱՄՆ Պետդեպարտամենտի աշխատակիցները կանցնեն «1915 թ.-ին Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանության և նրա հետևանքների հարցի» շուրջ կրթական դասընթացներ: Բացի դրանից, ապրիլի 24-ի իր ամենամյա ելույթում «Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը հայերի զանգվածային սպանությունները պետք է բնորոշի որպես ցեղասպանություն»: Փաստորեն, փորձագետների կարծիքով, դա նշանակում էր ԱՄՆ օրենսդիր մարմնի կողմից Օսմանյան Թուրքիայի պաշտոնական իշխանությունների կողմից հայ ժողովրդի ցեղասպանության փաստի ճանաչում:

Հոկտեմբերի 1-ին թուրքական «Ենի Բինյըլ» («Նոր հազարամյակ») օրաթերթում «Ինչի՞ մասին ենք խոսում մենք» խորագրի ներքո լույս տեսավ թուրք հայտնի մտավորական, սոցիոլոգ և հասարակական գործիչ Թաներ Աքչամի հոդվածը, որը ստորև ներկայացնում ենք ամբողջովին (տես *«Ազգ», 11 հոկտեմբերի 2000թ.*):

«Ես ամաչում եմ մարդկային ցեղին իմ պատկանելությունից:

Վերջին մի քանի օրերին հետևելով Միացյալ Նահանգների Կոնգրեսի կողմից Հայկական ցեղասպանության քննարկումների առթիվ թուրքական արձագանքներին, առաջին զգացումը, որ ապրում եմ, ամոթն է:

Փորձում եմ հասկանալ հիստերիան, կատաղի հարձակումները, սպառնալիքները, լկտիությունները և այլն: Գուցե այս բոլորը հնարավոր լինի բացատրել: Բայց այն, ինչ ամենատարօրինակ է թվում ինձ, թեմայի այսպես կոչված «ռացիոնալ» քննարկումներն են: Այստեղ կարծես մի խաղ է խաղացվում, որտեղ յուրաքանչյուր կողմ փորձում է խորապես վերլուծել հետագա մարտավարությունները ու քայլերը: «Ցեղասպանության» գնդակը գտնվում է մեջտեղում, և մենք խաղ ենք «խաղում»: Իսկ «գնդակը», որին հարվածում ենք, 800 հազար մահացած մարդիկ են (որոնք սպանվել են այդ օրերին):

Ես ամաչում եմ: Որովհետև նրանք, ովքեր քննարկում են հարցը, կամ գաղափար չունեն ինչի մասին են խոսում, կամ էլ զուրկ են մարդկային տարրական զգացումներից: Ուրիշ բացատրություն չեմ գտնում: Ցանկանում եմ հիշեցնել: Նույնիսկ եթե քանակի և պատճառների մասին վիճենք, միևնույն է, փաստ է, որ ըստ օսմանյան պաշտոնական վիճակագրության, 800 հազար մարդ է սպանվել: Այո, պարոնայք, մենք խոսում ենք 800 հազար մարդկանց մասին, որոնք մահացել են, որոնք սպանվել են: Իսկ եթե չեք ընդունում այդ թիվը, առնվազն եկեք ընդունենք այն թիվը, որը մենք վերջին տարիներին նվազեցնելով հասցրել ենք 300 հազարի:

Հասկանո՞ւմ եք՝ ինչ եք անում կամ ինչի մասին եք խոսում: Ալի Սամիի անվան մարզադաշտը 35-40 հազար հանդիսատես է տեղավորում: Պատկերացրեք, որ տասն անգամ այդ մարզադաշտը լցնենք և դատարկենք: Հասկանո՞ւմ եք, այդքան մարդ մահացել է, սպանվել է: Մենք խոսում ենք այդ մարդկանց ճակատագրի մասին: Պարոնայք, մեկ հոգու մահվան մասին անգամ խոսելիս մենք տխրում ենք: Եկեք այժմ քննարկենք հարցը ձեր մտքում եղած թվաքանակի տեսանկյունից: Մենք խոսում ենք 300 հազար մարդկանց մահվան մասին, և նույնիսկ եթե ընդունենք, որ մահվան դեպքերը տեղի են ունեցել ըմբոստության կամ առողջական պայմանների բերումով, ապա եկեք վերստին կարդանք, թե ինչ եք գրում դուք, վերստին դիտարկենք, թե ինչ եք քննարկում և ասում այդ 300 հազար մարդկանց մահվան առնչությամբ: Մի՞թե այդ բոլորը սրտխառնուք չի առաջացնում: Մի՞թե չեք ցանկանում սրտներդ թափել: Մի՞թե չեք ամաչում մարդկանցին ցեղին ձեր պատկանելությունից:

Հայկական հարցի քննարկումներն անցկացնելու մեր ձևը

երևան է հանում մեր երկրում գոյություն ունեցող գլխավոր խնդիրը, մենք շատ հեռու ենք կոտորած քննարկելու կարողությունից: Մենք նույնիսկ չունենք կոտորած դատապարտելու բարոյական հիմքերը: Չունենք նաև նման ողբերգական իրադարձությունների հանդեպ անհրաժեշտ վիշտ զգալու բարոյականությունը, որը պարտադիր է քննարկումների ընթացքում: Տեսեք, թե ինչեր են գրվել: Նույնիսկ նրանց հաշվարկներով՝ 300 հազար մարդկանց մահը ողբերգություն է, բայց մի տող անգամ չի նշված, որ եղելությունը արժանի է տխուր զգացումների: Տխրության նշույլ անգամ չկա: Իրականում նրանք զանգակներով պարելու եզրին են: Ո՞րն է բարոյական կշիռն այն ամենի, ինչ գրված է: Դուք որևէ բան տեսնո՞ւմ եք «մի քանի դավաճաններ, որոնք փորձում էին քայքայել մեր կառավարությունը, մահացան տեղահանության ընթացքում: Դրանում ի՞նչ դատապարտելի բան կա» նախադասություններից բացի: Կամ «ոչինչ էլ չի պատահել, բայց նույնիսկ եթե պատահել է, ապա դրանում հայերն են մեղավոր» տողից բացի: Եվ կամ «մենք դարձյալ նույն բանը կանենք, եթե հանգամանքները կրկնվեն» արտահայտությունից բացի:

Ինչ դիրք էլ բռնենք, եթե ցանկանում ենք մի քայլ առաջ գնալ, եկեք չմոռանանք, որ մենք խոսում ենք հարյուր հազարավոր մարդկանց մահվան մասին: Եթե կարողանանք այս մտածողությանը համապատասխան մտածելակերպ ձևավորել մեզ մոտ և որդեգրել այն բարոյականությունը, որը դատապարտում է կոտորածները, պիտի տեսնենք, որ այդ նույն մարդիկ, որոնց վերագրում ենք հարձակումները մեզ վրա, սկսելու են խոսել մեզ հետ: Մեր ներկա գործելակերպով պարզապես ցույց ենք տալիս, որ արժանի ենք մեր դեմ եղած քննադատություններին: Կոտորածներ գործելը կամ կոտորածի պատճառ դարձած իրավիճակների ստեղծումն ամաչելու բաներ չեն: Եթե անհրաժեշտ է, կատարվում են դրանք: Այս մտածողությա՞մբ ենք մենք ցանկանում տեղ գրավել արդի աշխարհում: Այո՞:

Պարոնայք, այն, ինչ անում ենք, մի խոսքով անբարոյական է:

Ցանկանում եմ ընդգծել երեք կետ «ցեղասպանության հարցի» շուրջ:

Առաջին: Նկատել եմ, որ թերթերի շատ այունակագիրներ հանկարծ այս հարցի մասնագետներ են դարձել: Բայց այն, ինչն ինձ իրոք տխրեցնում է, այն է, թե ինչպե՞ս են նրանք անամոթաբար թոզ փչում՝ առանց նույնիսկ հարցնելու. «Իսկ ի՞նչ ճշմարտություն է թաքնված այս հարցի ետևում, գուցե հարցնեմ և իմանամ»: Հավատացեք ինձ, այն ամենը, ինչ նրանք ներկայացնում են որպես

«պատմական փաստ» և «խորը գիտելիքների արդյունք», ոչ այլ ինչ է, քան տգիտության անիմաստ պտուղ: Եթե անհրաժեշտ է, բերեմ մի օրինակ. նրանք պնդում են, թե «հայերը միայն տեղահանվել են Արևելյան Անատոլիայից» (Գյուների Չիվաոլլուն նույնիսկ ավելի հեռուն է գնում՝ ավելացնելով կենտրոնական Անատոլիան): Այս բառերն ամբողջովին անհեթեթություն են: Այն, ինչ հիմք չունի, պարզապես հորինվում է: Քյոթահիա, Աֆիոն, Ուշաք, Բուրաս, Էդիրնե, Թեքիրտաղ, Բալիքեսիր, Բոլու և այլն: Այս թեմայի վերաբերյալ նույնիսկ երկու-երեք գիրք թղթատելով կարելի է իմանալ, որ հայերը տեղահանվել են Անատոլիայի բոլոր քաղաքներից: Եվ եթե հետաքրքրությունից դրդված մեկն ու մեկը թերթի Թուրքական Հանրապետության կառավարության փաստաթղթերը, անպայման բավարար նյութ կգտնի այնտեղ: Դրանցում հստակ ասված է, որ հայերը տեղահանվել են Անատոլիայի բոլոր վայրերից:

Երկրորդ: Թվաքանակի վերաբերյալ մի բան կա, որ պետք է իմացվի: Ազնվորեն ասած՝ վիճելն այս հարցի շուրջ ճիշտ չէ: Ի՞նչ ենք ցանկանում ապացուցել: Ի՞նչ տարբերություն՝ 1,5 միլիո՞ն են եղել զոհերը, թե՞ 300 հազար: Եթե 1,5 միլիոնը չափազանցություն է, կարելի՞ է արդարացված համարել 300 հազարի սպանությունը: Քանի որ այդ ժամանակվա թվերն այնքան էլ վստահելի չեն, դժվար է պաշտոնական որևէ բան ասել, բայց գոնե կարելի է այդ մասին խոսելիս հղում կատարել Օսմանյան կառավարության կամ Թուրքական Հանրապետության զինվորականության հրատարակած պաշտոնական թվերին: Այդ ձևով ասվածն ավելի լրջորեն կնդունվի:

1918թ. դեկտեմբերին ներքին գործերի նախարար Մուսթաֆա Արիֆը հանձնախումբ է կազմում՝ որոշելու համար պատերազմի ժամանակ սպանված հայերի քանակը: 1919-ի մարտի 14-ին այդ հանձնախումբը հայտարարում է, որ սպանված հայերի թիվը 800 հազար է: Հայտարարությունն անում է (այդ ժամանակվա) ներքին գործերի նախարար Ջեմալ բեյը: Հետագայում այս թիվը տարբեր առիթներով հրապարակավ նշում են նաև շատերը, որոնց թվում Մուստաֆա Քեմալը (Աթաթուրքը): 1928-ին թուրքական զինվորականությունը Առաջին աշխարհամարտի զոհերի վերաբերյալ գիրք է հրատարակում՝ թարգմանված ֆրանսերենից: Լեյտենանտ-գնդապետ Նիհատի հրատարակած այս գրքում Թուրքիային վերաբերող թվերը փոխված են: Համաձայն թուրքական զինվորականության տվյալների, Առաջին աշխարհամարտի ընթացքում «800 հազար հայեր և 200 հազար հույներ մահացան տեղահանման հետևանքով կամ աշխատանքային բրիգադներում»: Այս թվերը ներկայացնող Յ. Հ. Բայուրն ասում է.

«Ըստ մեր ունեցած պաշտոնական աղբյուրների, այս թվերը ճիշտ են» (Յ. Հ. Բայուր, Թուրքական հեղափոխության պատմությունը, հատոր 3, մաս IV, էջ 787): Այլ խոսքով, մեր պաշտոնական աղբյուրների համաձայն, սպանվածների թիվը 800 հազար է: Եվ դա վերաբերում է միայն 1914-1918 թվականներին:

Երրորդն այն է, թե հայերին սպանելու հրաման տրվե՞լ է, թե՞ ոչ: Այստեղ էլ փաստաթղթերի տեսքով ապացույցներ կան, հակառակ իթթիհադականների փորձերի՝ պատերազմից անմիջապես հետո ոչնչացնելու արխիվները. կամ գողանալու փաստաթղթերը: 1919-1922թթ. Ստամբուլում կայացած զինվորական տրիբունալի նիստերի ժամանակ մի քանի հեռագրեր և փաստաթղթեր են կարդացվել և ականատեսների վկայություններ լսվել: Այդ փաստաթղթերից շատերը հետագայում հրատարակվել են Օսմանյան կառավարության պաշտոնական տեղեկագրերում (Թաքվիմ-ի-վեկայի) և մի շարք այլ թերթերում: Գերմանական, ավստրիական, ամերիկյան և բրիտանական արխիվներում եղած փաստաթղթերը համընկնում են օսմանյան արխիվներում եղածներին:

Այստեղ ուզում եմ առանձնացնել մի փաստաթուղթ, որը երևի պատահականորեն է մուտք գործել արխիվների վարչության հրատարակած մի գրքում: Վերնագրված է «Հայերը օսմանյան կառավարության փաստաթղթերում (1915-1920թթ.)»: Հունիսի 29-ին (հուլիսի 12-ին) ներքին գործերի նախարարը կողավորված հեռագիր է ուղարկում Դիարբեքիր, որում ասվում է. «Դիարբեքիրից Մարդին տեղահանված հայ և այլ քրիստոնյա փոքրամասնություններից 700-ը գիշերով տարվել է քաղաքի արվարձանները և ոչխարների նամն մորթվել»: Նշվում է, որ 2000 հոգի այս ձևով սպանվել է: Նաև նշվում է. «Եթե անմիջական և որոշակի միջոցառումներ ձեռք չառնվեն, վախ կա, որ ամբողջ քրիստոնյա բնակչությունը կոտորվի»: Հեռագիրն ավարտվում է հետևյալ նախադասությամբ. «Եթե հայերի դեմ գործադրված քաղաքականությունը կիրառվի նաև մյուս քրիստոնյա փոքրամասնությունների հանդեպ, վատ հետևանք է թողնելու ամբողջ հասարակության վրա: Որևէ բան, որ սպառնում է հատկապես քրիստոնյաների կյանքին, պետք է դադարեցվի»: Փաստաթուղթը չափազանց անկեղծ է և հիշեցնում է, որ հայերի հանդեպ կիրառվող քաղաքականությունը և նրանց կոտորելու ձևերը պետք է անհապաղ դադարեցվեն և չգործադրվեն այլ քրիստոնյաների հանդեպ: Թուրքական հանրապետության պաշտոնական օրգաններից մեկը հրատարակում է նման մի փաստաթուղթ, որի վերլուծությունը թողնում եմ Շյուքրու Էլեկդարին և Գյունդուզ Աքքանին»[2]:

Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի Արտաքին գործերի ենթահանձնաժողովը սեպտեմբերի 21-ին ընդունեց «Հայկական ցեղասպանության» մասին բանաձևի նախագիծը:

Հոկտեմբերի 3-ին Ներկայացուցիչների պալատի Միջազգային հարաբերությունների կոմիտեն քննարկելով բանաձևի նախագիծը, այն ընդունեց ձայների մեծամասնությամբ (թեր՝ 24, դեմ՝ 11, ձեռնպահ՝ 2): Քվեարկության առաջ ելույթով հանդես եկավ Թուրքիայի Ազգային ժողովի հինգ հոգուց բաղկացած պատվիրակության ղեկավար Մեհմետ Ալի Իրթեմչելիքը, որը հայտարարեց, որ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը, կամ էլ մեկ այլ մարմին իրավունք չունի այս հարցի կապակցությամբ որևէ որոշում ընդունել:

Հարցի քննարկումը, որը տևեց երկու ժամից ավելին, վեր հանեց թուրքամետ ամերիկյան պատգամավորների մի խմբի, որն ամեն կերպ ջանում էր քննարկումից հանել հարցը: Առանձնապես մեծ էին կոնգրեսական Թոմ Լանթոսի ճիգերը, որը հատկապես շեշտում էր այն հանգամանքը, որ օրինագծին դեմ են ԱՄՆ-ի Արտաքին գործերի դեպարտամենտը և Պաշտպանության նախարարությունները, մշտապես դեմ են արտահայտվել ԱՄՆ-ի նախկին նախագահները, որ նախագահ Քլինթոնը արդեն իսկ յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ին հայտնում է իր ցավակցությունը 1915թ. դեպքերի կապակցությամբ: Կոնգրեսական Թոմ Լանթոսին իր պաշտպանության տակ վերցնելով Ներկայացուցիչների պալատի Տեղեկատվության հանձնաժողովի նախագահ Փորթեր Կոսը փորձեց ներկաներին ապացուցել, թե ինչ բացասական հետևանքներ կունենա օրինագծի ընդունումը և չպետք է վշտացնել թուրք ժողովրդին: Հակադրվելով կոնգրեսական Կոսին, կոնգրեսական Կելտենսոնը իր ելույթում նշեց, որ «Տեսեք, Գերմանիայի կառավարությունը ընդունեց ցեղասպանությունը և ԱՄՆ-ի հետ շարունակում է գործել: Այս օրինագիծը չընդունելով, մենք ապագայում պատմական վտանգավոր մի պատգամ ենք տալիս: Թուրքական կառավարությունը այս պատմական իրողությունը պետք է ճանաչի և դեպի առաջ նայի»: Անմիջապես ձայն խնդրելով Թուրքիայի ներկայացուցիչ Իրթեմչելիքը հայտարարեց. «Դուք խոսում եք ցեղասպանության մասին: Սակայն այն ունի իր գինը: Այս աշխարհում տեղի է ունեցել ընդամենը մեկ ցեղասպանություն և գի-

[2] Երկուսն էլ Թուրքիայի դեսպաններն են եղել:

տեք թե որն էր այն: Ձեր ասած ցեղասպանությունը տեղի չի ունեցել և թուրք ազգը այդ պնդումը երբեք չի ընդունի: Պատմությունը գրվում է փաստաթղթերով: Օսմանյան արխիվները բաց են, իսկ հայկական արխիվները ոչ»:

Ելույթ ունենալով նիստում, օրինագծի հեղինակներից կոնգրեսական Ջորջ Ռադանովիչը խիստ քննադատության ենթարկեց Իրթեմչելիքին և եզրափակելով իր խոսքը ասաց. «Օրինագիծը ոչ Թուրքիայի Հանրապետությանը ցեղասպանությունը ընդունել տալու նպատակ ունի, ոչ էլ Ամերիկան այսօրվա Թուրքիայից որևէ բան պահանջելու ցանկություն ունի»:

Թուրքական մամուլը մանրամասներ է հաղորդում Ներկայացուցիչների պալատի Միջազգային հարաբերությունների կոմիտեում ցեղասպանության ճանաչման բանաձևին նվիրված քննարկումների վերաբերյալ:

Հոլոքոստի ականատես, կոնգրեսական Թոմ Լանթոսը 10 այլ ներկայացուցիչների հետ ընդդիմացել է օրինագծին: Օրինագծի հեղինակներից Ջորջ Ռադանովիչը հանդես է եկել ցեղասպանության թեման ԱՄՆ դիվանագետների կրթական ծրագրերում ներառող հոդվածը օրինագծից հանելու օգտին: Նիստի ժամանակ ելույթ են ունեցել 25 ներկայացուցիչներ, որոնցից 15-ը կողմ են արտահայտվել օրինագծի վավերացմանը:

Հանրապետական Թոմ Թաներդոն առաջարկել է օրինագծում ներառել մի կետ, որով ներկայիս Թուրքիայի իշխանությունները և թուրք ժողովուրդը պատասխանատու չեն համարվում Հայոց ցեղասպանության համար: Թոմ Լանթոսն իր հերթին հանդես է եկել ցեղասպանության և էթնիկական զտումների զոհ դարձած 175 միլիոն մարդկանց հիշատակի օր սահմանելու նախաձեռնությամբ, որում սակայն մեղավոր պետությունների անունները չպետք է նշվեն: Թուրքական մամուլը նշում է նաև, որ օրինագծի ընդունման շանսերը բավական մեծ են:

Թուրքիայում գոյություն ունի ցավոտ երեք հարց. դա քրդական հիմնախնդիրն է, իսլամականացման դեմ պայքարը և այն, ինչ տեղի է ունեցել հայերի հետ Օսմանյան կայսրության գոյության վերջին տարիներին:

Հայոց ցեղասպանությունը դատապարտողները և նրանց կողմնակիցները պնդում են, որ ծրագրված կերպով սպանվել է առավել քան մեկ միլիոն մարդ: Թուրքիան պնդում է, որ զոհերի թիվը չի գերազանցում 300 հազարը, բացի այդ, հայերի ծրագրված ցեղասպանություն չի իրականացվել:

Կոնգրեսի՝ Միջազգային հարցերի հանձնաժողովը համաձայնել է հայերի տեսակետների հետ, ինչը զայրացրել էր Անկարային: Թուրքիայի կառավարությունը հայտարարել է, թե պատրաստվում է իրականացնել մի շարք պատասխան միջոցառումներ: Չի բացառվում, որ սահմանափակվի Թուրքիայի տարածքում տեղաբաշխված ամերիկյան ռազմական հենակայաններից իրականացվող թռիչքների քանակը, բայց առավել հավանական է այն, որ Անկարան քայլեր կձեռնարկի Երևանի դեմ:

Սահմանակից Թուրքիայի և Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերություններ դեռևս հաստատված չեն:

Անկարան հասկացնել է տվել, որ եթե բանաձևի ընդունումը հետագայում ևս առաջընթաց ունենա, ապա կավելացվեն պատասխան միջոցառումների քանակը ԱՄՆ-ի և Հայաստանի դեմ: Թուրքական իշխանություններն առայժմ են որոշակիացրել, թե հետագայում ինչ քայլերի են դիմելու:

Կոնգրեսի միջազգային հարաբերությունների հանձնաժողովում հոկտեմբերի 3-ին Հայոց ցեղասպանության վերաբերյալ օրինագծի ընդունումից հետո Թուրքիայի Արտաքին գործերի նախարարությունը հանդես եկավ հայտարարությամբ, ուր մասնավորապես նշվում էր, թե «... Օրինագծում ներառվածը չի համապատասխանում պատմական իրողություններին: Այն, որ Ներկայացուցիչների պալատի կողմից օրինագծի ընդունումը բասացաբար կանդրադառնա Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների կարգավորման և Կովկասում խաղաղության հաստատման նախաձեռնությունների վրա և առանձնապես լրջորեն կանդրադառնա Թուրքիա-ԱՄՆ հարաբերությունների վրա, մենք հայտնել ենք սեպտեմբերի 21-ին նախարարության հայտարարությունում: Ինչպես երևում է, մեր այդ ուղերձները դեռևս հարկ եղած կերպով չեն ընկալվել: Ներկայացուցիչների պալատի անդամները շարժվելով ընդունվելիք որոշումների հնարավոր անդրադարձների գիտակցությամբ, պետք է լավ կշռադատեն այս վերջին զգացումը, որպեսզի հաղթանակի ողջամտությունը»:

Հոկտեմբերի 3-ի երեկոյան Թուրքիայի Հանրապետության նախագահ Սեզերը հեռախոսազրույց ունեցավ ԱՄՆ-ի նախագահ Քլինթոնի հետ: Այդ հեռախոսազրույցի վերաբերյալ Թուրքիայի նախագահի մամուլի ծառայության կողմից արված հայտարարության համաձայն Սեզերը շեշտել է Կոնգրեսում օրինագծի անցկացման դեմ ԱՄՆ-ի վարչակազմի ջանքերի մոբիլիզացման և արդյունավետության մեծացման անհրաժեշտությունն ու խնդրել է Քլինթոնին

անձնական մասնակցություն ցուցաբերել այդ գործում:

Հոկտեմբերի 4-ին տարբեր հայտարարություններով հանդես եկան նաև Թուրքիայի տարբեր կուսակցական ղեկավարներ, պետական նախկին պաշտոնյաներ ու գիտնականներ: Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի նախկին նախագահ և արտգործնախարար Հիքմեթ Չեթինը հայտարարել էր. «Այս խնդրին անհրաժեշտ է մոտենալ սառնասրտորեն և խուսափել ծայրահեղ ու հապճեպ հակազդեցություններից: Թուրքիան պետք է շարունակի իր իրավացիության պաշտպանությունն ու բացատրությունը: Կարծում եմ, որ սրանից ամենաշատ վնաս է կրելու Հայաստանը»:

Թուրքական զանգվածային լրատվության միջոցները հոկտեմբերի 5-ին Հայաստանի դեմ կիրառվելիք առաջնային պատժամիջոցներին անդրադառնալիս նախ և առաջ անդրադարձան Թուրքիայի կողմից արված հայտարարությանը, ուր մասնավորապես նշվում էր, թե Հայաստանի քաղաքացիները Թուրքիայի մուտքի վիզա ձեռք բերելու նպատակով այսուհետ պետք է դիմեն արտասահմանում գտնվող թուրքական ներկայացուցչություններ և որ արդեն վերացվում է սահմանային անցակետերում Հայաստանի քաղաքացիներին տրվող մուտքի վիզայի ռեժիմը, որը գործում էր 1995թ. օգոստոսի 15-ից: Որպես Հայաստանի նկատմամբ հնարավոր երկրորդ պատժամիջոց, ըստ թուրքական մամուլի, դա H-50 օդային միջանցքի փակումն է, որի հետևանքով դեպի Հայաստան և հակառակ ուղղությամբ իրականացվող թռիչքները երկարաձգվելու էին երկուսից-չորս ժամով: Որպես հակաամերիկյան պարզ դիրքորոշում Թուրքիայում գնատահեցին Գլխավոր Սպայակույտի պետ Քըվրըքօղլուի ԱՄՆ հոկտեմբերի 15-ին կատարելիք այցի հետաձգումը անհայտ ժամանակով:

Հարկ է նշել, որ այդ օրերին Հայաստանի դեմ սանկցիաներ կիրառելու կապակցությամբ Թուրքիայի կառավարությունը դեռևս կոնկրետ որոշում չկայացրեց: Խոսելով հայաստանի և ԱՄՆ-ի դեմ պատժամիջոցների մասին վարչապետ Էջևիթը լրագրողներին պատասխանել էր, որ «այդ ուղղությամբ ևս կարող են զարգացումներ լինել»: Իսկ «Միլլիյեթ» օրաթերթում հրապարակված հոդվածում ասվում էր, որ Թուրքիայի Արտաքին գործերի նախարարությունում ևս երկու հիմնական տեսակետներ են արտահայտվում՝ այն, որ անհրաժեշտ է միանգամից անցնել պատժամիջոցների կիրառմանը և երկրորդ մոտեցումը՝ թե պետք է արդեն իսկ մշակված գործողությունների ծրագիրը փուլ առ փուլ իրականացնել:

Հոկտեմբերի 5-ի կեսօրին տեղի ունեցավ Թուրքիայի կառավարության նիստը, ուր գրեթե բոլոր նախարարները արտահայտվեցին են Կոնգրեսի կողմից օրինագծի ընդունման դեպքում Թուրքիա-ԱՄՆ հարաբերությունների վրա բացասաբար անդրադառնալու, Հայաստանի նկատմամբ պատժամիջոցների կիրառման անհրաժեշտության մասին: Սակայն այնուհանդերձ կառավարության նիստի արդյունքում ոչ մի կոնկրետ քայլեր չարձանագրվեցին:

Թուրքիայի կառավարության տարբեր օղակներում Հայաստանի նկատմամբ արտահայտված տեսակետները միմյանցից տարբերվում էին: Գոյություն ունեին ինչպես ծայրահեղ, այնպես էլ չափավոր կարծիքներ: Այսպես, պետնախարար Միրզաօղլուն Հայոց ցեղասպանության օրինագծի կապակցությամբ ասել է, «Այս օրինագիծը մեզ համար ոչինչ չի նշանակում: Թուրքիան ամենավատ պայմաններում պատռել և մի կողմ է նետել Սևրը և մեր դեմ եղած թշնամությունը: Եթե մենք չցանկանանք Հայաստանը շունչ անգամ չի կարող առնել, աշխարհի հետ կապ չի կարող ապահովել»: Իսկ պետնախարար Իրթեմչելիքը մեղմ ձևով արտահայտվելով, նշում է, «Հայաստանը լրջորեն պետք է լավ հարաբերություններ հաստատի Թուրքիայի հետ: Օրինագիծը պետք չէ ընդունել, քանի որ դա սխալ է և չի ծառայի հարաբերություններին»:

Թուրքական զանգվածային լրատվության միջոցները հայտնում էին, որ Արտաքին գործերի նախարարության և Գլխավոր Սպայակույտի կողմից պատրաստած 17 կետից բաղկացած գործողությունների ծրագրի կիրառման առաջին փուլի արդյունքում՝ նախ կդադարեցվեն Երևան-Ստամբուլ չարտերային թռիչքները, իսկ հոկտեմբերի 15-ից Հայաստանի քաղաքացիների նկատմամբ կիրառվելիք մուտքի վիզայի նոր ռեժիմի կիրառման հետևանքով Թուրքիայի հետ առևտրի միջոցով Թուրքիայում հայտնված և գոյատևող 30 հազար Հայասատանի քաղաքացիներ ուղղակի անելանելի վիճակում կհայտնվեն, ինչը ծանր ազդեցություն կունենա առանց այն էլ կաթվածահար վիճակում գտնվող Հայաստանի տնտեսության վրա:

Թուրքական լրատվամիջոցները, ավելի հեռուն գնալով, որպես օրինագծի բացասական հետևանք էին համարում հայ-թուրքական հարաբերությունների սկզբունքային վերանայումը: Նրանք գտնելով, որ Հայաստանի անկախությունը ճանաչող առաջին երկրներից մեկը եղել է Թուրքիան, ուստի վերջինս կարող է վերանայել այդ երկրի անկախության ճանաչումը, երկու երկրների հարաբերությունները հասցնելով «Թուրքիայի և Կիպրոսի հունական մասին միջև գոյություն ունեցող հարաբերությունների մակարդակին»:

Թուրքիան մտադիր է իրագործել Երևանին հասցեագրված

բոլոր սպառնալիքները, հայտարարել է Թուրքիայի վարչապետ Բյուլենթ Էջևիթը: Նրա խոսքերով, այդ որոշումն ինքը կայացրել էր Թուրքիայի նախագահ Ահմեդ Սեզերի հետ հոկտեմբերի 5-ի հանդիպումից հետո:

Թուրքիայի Անվտանգության խորհրդի նիստի ժամանակ որոշում էր կայացվել խստացնել Հայաստանի շրջափակումը: Մասնավորապես, Թուրքիայի Անվտանգության խորհուրդը սպառնացել էր Հայաստանի ինքնաթիռների առջև փակել երկրի օդային տարածությունը, ինչպես նաև դադարեցնել թուրքական ապրանքների արտահանումը Հայաստան:

Ինչպես հայտնի դարձավ հոկտեմբերի 5-ին, Հայաստանին հասցեագրված առաջին սպառնալիքն իրագործվեց՝ Թուրքիան խստացրեց վիզային ռեժիմը Հայաստանի քաղաքների համար:

Թուրքիան առանց թաքցնելու հայտարարեց, թե խստացնում է այցագրային ռեժիմը Հայաստանի հետ՝ ի պատասխան ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի միջազգային հարաբերությունների կոմիտեի կողմից ընդունված Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության մասին բանաձևի: «Հայաստանի քաղաքացիները, - ասված է արտգործնախարարության հայտարարության մեջ,- այսուհետ այցագրի համար պետք է դիմեն արտասահմանում Թուրքիայի դիվանագիտական ներկայացուցչություններ»: Ավելի վաղ հայերը կարող էին հեշտությամբ մուտքի այցագիր ստանալ երկու հարևան երկրների սահմանապահ կետերում կամ Ստամբուլի միջազգային օդանավակայաններում՝ Երևանից և Թբիլիսիից վարձաչվերթերով ժամանելուց հետո: Այժմ նրանք ստիպված կլինեն դիմել Թուրքիայի ներկայացուցչություններ երրորդ երկրներում, քանի որ Թուրքիան և Հայաստանը դիվանագիտական հարաբերություններ չունեն:

Թուրքիայում շտապ մշակվեց հակահայկական և հակաամերիկյան միջոցառումների երկրորդ փաթեթը: Ցեղասպանության օրինագիծը Ներկայացուցիչների պալատի գլխավոր խորհրդի կողմից ընդունվելու դեպքում այդ փաթեթը ներկայացվելու էր կառավարության հաստատմանը:

Ըստ նախագծի, օրինագծի հաստատմանը հետևելու էին Հայաստանի սահմանների մոտ թուրքական բանակի զորավարժությունները: Միաժամանակ Թուրքիան անմիջապես դեսպանատուն էր բացելու Իրաքում և կսահմանափակեր Ինջիռլիք ռազմակայանից ԱՄՆ-ի օգտվելու իրավունքները: H-50 օդային միջանցքի փակումը Թուրքիայի կողմից չէր սպասվում, քանի որ օդային սահմանների

ազատությունը կարևորվում է միջազգային օդագնացության չափանիշներով:

Թուրքիայի «Ճշմարիտ ուղի» կուսակցության ղեկավար, նախկին վարչապետ Թանսու Չիլերը հայտարարել էր, թե Թուրքիան պետք է ճիշտ օգտագործի իր ձեռքում եղած հնարավորությունները և կոչ էր արել իշխանություններին առավել ազդու միջոցներ ձեռնարկել: Նա մասնավորապես պահանջել էր արտաքսել Թուրքիայի տարածքում գտնվող Հայաստանի 30 հազար քաղաքացիներին: Ըստ Չիլերի, Հայաստան վերադառնալով, այս քաղաքացիները ճնշում կգործադրեն Հայաստանի իշխանությունների վրա: Չիլերը կոչ էր արել նաև վերանորոգման պատրվակով ժամանակավորապես փակել Ինջիռլիք ռազմակայանը՝ ճկունորեն ԱՄՆ-ին զրկելով դրա օգտագործման հնարավորությունից: Նախկին վարչապետը կոչ էր արել նաև գիտական լայն արշավ ծավալել ցեղասպանության կեղծությունը ապացուցելու համար: Այս նպատակով, ըստ Չիլերի, Թուրքիան կարող էր օգտագործել ԱՄՆ պատմաբան Բեռնարդ Լյուիսի ուսումնասիրությունները, որոնք պաշտպանում են թուրքական կեղծարարության այն թեզը, թե ցեղասպանություն չի եղել: Միաժամանակ Չիլերը հայտարարել էր նաև, որ Անկարան չի կարող էական քայլեր ձեռնարկել օրերս ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում ցեղասպանության օրինագծի ընդունման դեմ, քանի որ առկա է քաղաքական կամքի բացակայություն:

Հայոց ցեղասպանության ճանաչման օրինագիծը ներառվեց ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի հոկտեմբերի 19-ի օրակարգում: Ընդհանուր առմամբ Սենատի օրակարգում էին յոթ օրինագծեր, այդ թվում՝ 2001թ. բյուջեի նախագիծը: Օրակարգի ծանրաբեռնվածության արդյունքում, հավանական էր հայկական օրինագծի քննարկման հետաձգումը, մանավանդ որ այն նախատեսվում էր քննարկել ամենավերջում:

Ըստ թուրքական «Զաման» թերթի, Ներկայացուցիչների պալատի օրակարգում տիրող ծանրաբեռնվածության պատճառով հավանական էր նաև խորհրդարանի արձակուրդի հերթական հետաձգում մեկ շաբաթով: Այսուհանդերձ Ներկայացուցիչների պալատի խոսնակ Դենիս Հասթերթը հայտարարեց ցեղասպանության օրինագիծը հոկտեմբերի 19-ին քննարկման դնելու իր մտադրության մասին: Ըստ թուրքական աղբյուրների, օրինագծի ընդունման հավանականությունը խիստ մեծ էր, քանի որ 435 կոնգրեսականներից 140-ը գրավոր համաձայնություն էին տվել օրինագծին կողմ քվեարկելու համար:

ԱՄՆ պետքարտուղար Մադլեն Օլբրայթը պատասխանել էր Իսմային Ջեմի վերջին նամակին, որում նա հերթական անգամ կոչ էր անում կանխել ցեղասպանության օրինագծի հաստատումը: Տիկին Օլբրայթի պատասխանում մասնավորապես նշվում էր, որ իրենից կախված ամեն ինչ անում է այս ուղղությամբ: Նա կրկնել էր նաև այն միտքը, որ Վաշինգտոնի իշխանությունները դեմ են այս օրինագծին:

ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի Միջազգային հարաբերությունների կոմիտեին դիմեցին ԱՄՆ 8 նախկին բարձրաստիճան պաշտոնյաներ՝ ցեղասպանության ճանաչման օրինագծի ընդունումը կանխելու հորդորով:

Դիմումը ներկայացնողների թվում էին՝ ԱՄՆ նախկին պաշտպանության նախարարը, գլխավոր շտաբի նախկին պետը, ՆԱՏՕ-Եվրոպա դաշնային զորքերի նախկին հրամանատարը և այլք:

Քլինթոնի անվտանգության գծով խորհրդական Սենդի Բերգերը ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Բաքի Իլքինի հետ հանդիպման ժամանակ նշել էր, որ Վաշինգտոնը շարունակելու է ջանքերը օրինագծի ընդունումը կանխելու համար: «Մենք նոր մեթոդներ և տարբերակներ ենք մշակում այս գործընթացի համար», - ասել էր Քլինթոնի խորհրդականը:

ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Բաքի Իլքինը Ներկայացուցիչների պալատի խոսնակ Հասթերթի հետ հանդիպումից հետո հայտարարել էր, թե վերջինս վճռական է տրամադրված օրինագիծը հաստատելու հարցում: «Մենք այլևս պայքարելու հնարավորություն չունենք: Եթե գլխավոր խորհուրդը հաստատեց որոշումը, պատրաստ եմ կրել ողջ պատասխանատվությունը»:

Հասթերթը մերժեց հանդիպել ԱՄՆ այցելած թուրք խորհրդարանականների հետ:

Օրինագիծը Ներկայացուցիչների պալատի գլխավոր խորհուրդ պետք է ուղարկվեր կա՛մ ուղղակիորեն, կա՛մ օրենսդրական կոմիտեի միջոցով: Առաջին դեպքում դրա ընդունման համար պահանջվում էր ձայների 2/3-ը, իսկ երկրորդ դեպքում՝ պարզ մեծամասնությունը: Թուրքական աղբյուրները տեղեկացնում են, որ Թուրքիան ձգտում էր հասնել առաջին տարբերակին, որը կնվազեցներ օրինագծի ընդունման շանսերը:

Թուրքական «Մայր հայրենիք» կուսակցության անդամ, ԱՄՆ գործուղված թուրքական պատգամավորական խմբի ղեկավար Մեհմեթ Ալի Իրթեմչելիքը հայտարարել էր, թե ցեղասպանության օրինագծի նախաձեռնությունը հեռահար նպատակներ ունեցող հայ-

կական դավադիր մեծ ծրագրի մասերից է: Ըստ նրա, «սա շարունակական նախաձեռնություն է, որի վերջնանպատակն է Թուրքիայից հող անջատել»: Այն հարցին, թե հատկապես ո՞վ է պատրաստվում Թուրքիայից հող պահանջել, նա պատասխանել է. «Հայաստանը, ավելի ճիշտ՝ մոլեռանդ հայերը»: Թուրք գործիչը Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման հարցում առկա հիմնական խոչընդոտներից մեկը համարել է այն, որ «Թուրքիայի հանդեպ հողային պահանջների սկզբունքն ամրագրված է Հայաստանի Սահմանադրության մեջ»:

Թուրքական «Զաման» թերթի հաղորդագրության համաձայն Անկարայի Աթաթուրքի անվան համալսարանում բացվելու է թուրք-հայկական հարաբերությունների և ցեղասպանության ուսումնասիրության կենտրոն: Կենտրոնի ղեկավար է նշանակվել դոկտոր Էրոլ Քյուրքչյուօղլուն, որը կենտրոնի կազմակերպման կապակցությամբ հայտարարեց. «Մեր նպատակը չէ ցեղասպանության և հայ-թուրքական հարաբերությունների քաղաքականացումը: Մեր ձեռքին կան Օսմանյան, հայկական և ռուսական բազմաթիվ փաստաթղթեր: Մենք ցանկանում ենք զբաղվել դրանց ուսումնասիրությամբ»:

Թուրքիայի վարչապետ Բյուլենթ Էջևիթի որոշմամբ բացվելու են Օսմանյան Թուրքիայի ավելի քան 50 մլն արխիվային փաստաթղթեր: Փորձագետների կարծիքով, այդ քայլով պաշտոնական Անկարան հերթական անգամ փորձում է ճնշում գործադրել ԱՄՆ Կոնգրեսի վրա՝ Հայոց ցեղասպանության ճանաչման մասին բանաձևի ընդունումը խոչընդոտելու նպատակով:

Ըստ թուրքական հայտարարության այսուհետև հետազոտողները մուտք կունենան 1890-1895, ինչպես նաև 1914-1922 թվականների արխիվներին:

Նշենք, որ մի շարք հայ և արտասահմանյան պատմաբանների կարծիքով, Օսմանյան Թուրքիայի արխիվների բացումը դժվար թե կարողանա պատասխանել 1915 թվականին ցեղասպանության իրականացման մեղավորների մասին հարցին, քանի որ 1915-1923թթ. ցեղասպանության կազմակերպմանն ու իրականացմանն Օսմանյան կայսրության մեղսակցությունը մատնանշող բոլոր փաստաթղթերը հանվել են արխիվներից:

Հակառակ Թուրքիայի հոխորտանքներին, որ պատմական արխիվները բաց են բոլորի առաջ, հայտնի հրապարակախոս, Թուրքիայի ամենաազդեցիկ թերթերի սյունակագիր և մի ժամանակ մեծ ժողովրդավարություն վայելող «32-րդ օր» հեռուստածրագրի հեղինակ և վարող Մեհմետ Ալի Բիրանդը պնդում է, որ իրականում այդ

արխիվները բաց չեն: Ինտերնետի միջոցով նա արտահայտել է իր կարծիքը, ասելով, որ այդ, արխիվային շենքի դռները բաց են, և ցանկացած ոք կարող է ազատ մտնել, սակայն բարդությունները սկսվում են դրանից հետո:

«Վերաբերմունքը, որ դուք կստանաք, ամբողջովին կախված է ձեր ով, որտեղից և անցյալում ինչ հոդվածներ գրած լինելուց: Նախապատվությունը տրվում է այն մասնագետներին, որոնք պաշտպանում են թուրքական տեսակետները, կասկածյալները տրորվում են բյուրոկրատական խոչընդոտների և քաշքշուկների բեռի ներքո: Նույնիսկ թուրքական գծի պաշտպանները կարող են հիասթափվել ամեն ինչից և ափսոսալ՝ հանդիպելով քաշքշուկների: Աշխարհում ոչ ոք չի հավատում, որ թուրքական արխիվները իրականում բաց են, ինչպես թուրք պաշտոնատար անձինք փորձում են հավաստիացնել», գրում է նա, ավելացնելոց, որ CNN-ի «Մանսեթ» ծրագրով ելույթ ունեցողները՝ ամերիկացի Ջասթին Մակքարթին, ֆրանսիացի Էրիկ Ռոլոն, ինչպես նաև Ստենֆորդ Շոուն և Հիթ Լոուրին, նույն թուրքամետ կարծիքն են արտահայտել:

«Ինչո՞ւ: Ինչի՞ց եք վախենում: Ի՞նչ եք փորձում թաքցնել: Ինչո՞ւ եք ինքներդ ձեզ խաբում: Ինչո՞ւ եք խաբում ամբողջ աշխարհին», այս հարցերով է նա դիմում նրանց և բոլոր նրանց նմաններին: Ապա խորհուրդ տալիս. «Եկեք կամ փակ պահենք դրանք (արխիվները), կամ էլ ազնվորեն բացենք միջազգային օրենքներին համապատասխան: Չդիմենք արևելյան խորամանկությունների»:

Պատճառաբանելով իր օգտագործված սուր տերմինները, նա այնուհետև գրում է. «Ես չեմ ցանկանում, որ մեր երեխաները կամ հաջորդ սերունդն ապրեն ամոթանքի մթնոլորտում: Մենք այնքան ծույլ ենք եղել, որ մինչև հիմա մեր անմեղությունն ապացուցելու նեղությունը չենք քաշել: Իսկ հիմա ուրիշներին ենք մեղադրում: Մեր ասածն ենք առաջ տանում, սպառնալով և շանտաժի ենթարկելով մեր մերձավորներին»:

Նշելով, որ տնտեսական շրջափակումներն ու պայմանագրերի չեղյալ հայտարարելն արդյունավետ միջոցներ չեն, Բիրանդն առաջարկում է համակերպվել խնդրի էության հետ, կամ թուրքամետական բնական գազը ներմուծել Իրանի վրայով, անտեսելով ամերիկյան առարկումները, կամ էլ հայկական բանաձևը պաշտպանող երկրների տենդերային ընկերություններից պահանջել, որ նրանց երկրները փոխեն դիրքորոշումը Հայաստանի նկատմամբ:

«Վերջում ցանկանում եմ երկու հարցի ես անդրադառնալ, գրում է նա, առաջին՝ թուրքական մամուլը հետևյալ խորագրերն է

հրապարակում. «Մ. Նահանգների կառավարությունը պաշտպանում է հայկական բանաձևը», «Մ. Նահանգները բարեկամաբար չի վարվում (մեզ հետ)», «Նույնիսկ Ֆրանսիան է մեզ ծախել», և այլն: Հասարակությունը մեղադրում է կառավարությանը: Սրանից հետո մամուլը պետք է ավելի շրջահայաց լինի և կարողանա տարբերակել կառավարություններին՝ խորհրդարաններից: Նրանք հարցը չպետք է չափից ավելի սրեն: Երկրորդ՝ այս խոսակցությունը դեռ երկար է շարունակվելու: Հայերն իրենց ազդեցության պտուղները քաղում են արդեն երկար տարիներ: Նրանք լավ են աշխատել և այժմ բերքահավաքի ժամանակն է: Նրանք ուրիշներին էլ են աշխատեցրել, մինչ Թուրքիան դիտորդի դերում է եղել», եզրակացնում է նա[3]:

«Թրքիշ դեյլի նյուզ» անգլալեզու թերթի խմբագիր Յուսով Քանլին «Ամերիկայի ձայն» ռադիոկայանին տված հարցազրույցում ասել է. «Հարկավոր է հասկանալ խնդրի նկատմամբ ունեցած Թուրքիայի տեսակետը: Թուրքիան իր պատմության ընթացքում երբեք իր ազգային փոքրամասնությունների նկատմամբ վատ վերաբերմունք չի ունեցել: Սա մի վարքագիծ է, որով մենք հպարտանում ենք: Ցեղասպանությունը մենք համարում ենք անհավատալի և մեր ազգին հասցված վիրավորանք: Եթե շիտակ խոսենք, ապա կոնգրեսին ներկայացված բանաձևը թեև պարտավորեցնող չէ, սակայն նախադեպ կստեղծի: Այն ԱՄՆ ներքին քաղաքականության հարց չի և օրինակ կծառայի այլ երկրների համար: Ինչպես էլ որ այն ներկայացվի՝ ներքին, թե արտաքին քաղաքականություն, այն թուրքերին հասցված վիրավորանք է»: Ըստ նրա, թուրքերը մարդկանց չեն զանազանում ըստ ազգային պատկանելության ու մաշկի գույնի: Թուրքիայի հայերը, նրա կարծիքով, վայելում են քաղաքացիական լիակատար իրավունքներ և ազգային փոքրամասնության այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են սեփական եկեղեցիներ ու դպրոցներ ունենալու իրավունքը:

Ըստ թուրք խմբագրի, Անկարան հայտարարում է, թե այժմ արխիվները լիովին բաց են, սակայն իրենք գիտեն, որ նույնիսկ ինդեքսներն այդ արխիվներում լիովին արձանագրված չեն: Այդ արխիվները դժվարամատչելի են: Դրանք պետք է բացել պատմաբանների, փորձագետների և ակադեմիայի անդամների առջև, որովհետև հայերի համար կարևոր լինելուց առաջ, դրանք կարևոր են նաև թուրքերի համար: «Մենք պետք է մեր պատմությանը լավատեղյակ լինենք: Դա թուրք ժողովրդի իրավունքն է, որովհետև մենք փառա-

[3] «Ազգ»,17 հոկտեմբերի, 2000թ.:

պանծ պատմություն և անցյալ ունենք: Իհարկե, մեր անցյալում սխալներ եղել են, սակայն դրանց մասին նույնպես պետք է տեղյակ լինենք: Անկախ նրանից, թե անցյալը որքան դառն է, մենք պետք է իրազեկ լինենք ճշմարտությանը», - ասել է նա: «Օսմանյան կայսրությանը մեղադրել, նշանակում է մեղադրել մեզ, որովհետև օսմանները մեր հայրերն են: Ինչո՞ւ է Թուրքիան շրջափակմամբ պատժում շարքային հայերին իրենց կառավարության սխալ քաղաքական որոշումների համար: Անհարժեշտ է գտնել այլ միջոցներ Թուրքիայի զայրույթը արտահայտելու համար», - եզրափակել է «Թըրքիշ դեյլի նյուզի» խմբագիրը:

Ուշադրության արժանի է «Կալիֆոռնիա կուրիեր» թերթի խմբագիր Հարութ Սասունյանի հոդվածը օսմանյան արխիվների ներկա վիճակի մասին: Այդ հոդվածը, որը կրում է «Օսմանյան արխիվները կամ վաճառվում են, կամ թափվում ծովը» խորագիրը, թարգմանաբար լույս տեսավ «Ազգ»-ի 2000թ. սեպտեմբերի 14-ի համարում, որը ամբողջովին ներկայացնում ենք ընթերցողներին:

«Հայկական ցեղասպանության ժխտման քաղաքականությանը թուրքական կառավարությունը նոր միջոց է վերջերս ավելացրել: Ամեն անգամ, երբ օտար դիվանագետներ կամ լրագրողներ արծարծում են այդ թեման, թուրք պաշտոնական այրերը, ինչպես մի քանի օր առաջ ՄԱԿ-ի ամբիոնից՝ նախագահ Սեզերը, նշում են, որ այդ «վիճելի» հարցը պետք է պատմաբաններին թողնել՝ ուսումնասիրելու և վերջնական պատասխան տալու համար: Եվ, անշուշտ, նրանց համար ամենահուսալի աղբյուրը օսմանյան արխիվներն են, որոնք մինչև վերջերս փակ են եղել բոլորի առաջ, բացի մի քանի «ընտրյալ գիտնականներից»:

Վերջին շրջանում այդ արխիվները «դասակարգելուց» և «կարգավորելուց» հետո, հավանաբար, թուրքերը սկսել են առանձին վավերաթղթերի օրինակներ տրամադրել աշխարհի տարբեր գրադարաններին: Իսկ այն համառ գիտնականների առաջ, որոնք համարձակվում են տեղում քննել արխիվները, հազարումեկ խոչընդոտներ են ստեղծում և երբեմն նրանցից պահանջում հեռանալ երկրից՝ արխիվներից օգտվելու «օրենքը խախտելու» համար:

Նրանց հետ այս հարցում վիճելու փոխարեն գերադասում եմ ստորև ներկայացնել որոշ փաստեր՝ վերցված թուրքական «Ենիսաֆուլ» թերթի այս տարվա հունիսի 17-ի համարից: «Օսմանյան արխիվների փաստաթղթերն ուղարկվել են թղթի վերամշակման գործարան» վերնագրով հոդվածում սևով սպիտակի վրա ամրագրված էր հետևյալը:

Օսմանյան կայսրությունում հիմնադրման 700-ամյակի օրերին օսմանյան արխիվներից շատ արժեքավոր փաստաթղթերի հայտնվելը թղթի վերամշակման գործարանի աղբակույտերում խոշոր սկանդալ է, բայց արխիվների ոչնչացման առաջին դեպքը չէ, ասացին մասնագետները:

... Պատմական վավերաթղթերի հանդեպ ցուցաբերված անտարբերության մի նոր օրինակ էլ հայտնաբերվեց: Ապացուցվել է, որ վերոհիշյալ գործարանի աղբակույտերում հայտնված օսմանյան արխիվների փաստաթղթերը որպես մակուլատուրա վաճառվել են: Մասնագետները պնդում են, որ դրանք արժեքավոր նյութեր են եղել:

Որոշ փաստաթղթեր մակուլատուրայի գնով վաճառվել են օտար երկրներին, մի մասն էլ պարզապես թափվել ծովը: Պատմական արխիվների ոչնչացման օրինակ է այն, որ 1931թ. արխիվների վարչությունն արժեքավոր նյութեր է վաճառել մի ընկերության՝ որպես մակուլատուրա: Հետագայում այդ ընկերությունը նյութերը վաճառել է Բուլղարիային: Սիրքեջի կայարան տեղափոխության ժամանակ որոշ փաստաթղթեր բեռնատար մեքենաներից ցած են թափվում Սուլթան Ահմեդ այգու շրջակայքում, որտեղից աղբահավաքները վերցրել և շպրտել են ծովը՝ Գում Գափուի տարածքում: Ըստ մի թերթի հրապարակումների, մարդիկ լսելով կատարվածը՝ ափ են գնացել և հավաքել-փրկել դրանց մի մասը: Իսկ Բուլղարիան պահպանել և դասակարգել է իրեն վաճառված փաստաթղթերը և 1980-ական թթ. վերադարձրել Թուրքիային՝ միկրոֆիլմերի տեսքով: Արխիվների պետվարչության օսմանյան բաժնի անձնակազմը հրատարակել է այդ նյութերը՝ «Բուլղարիայի օսմանյան արխիվները» խորագրի ներքո:

... Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Տրապիզոնի 500-ամյա արխիվները ուղարկվել են Սամսոն: Ռուսական գրավման վերացումից հետո այդ արխիվները դարձյալ վերադարձել են Տրապիզոն: Դժբախտաբար, այդ շատ կարևոր կենտրոնի արխիվները չեն պահպանվել և տգիտության հետևանքով 1982-ին թափվել են ծովը: «Արդարություն» և «Դեմոկրատ» կուսակցությունների արխիվների մեծ մասը, հատկապես որը վերաբերում է 1961-1980թթ., նույնպես ուղարկվել է թղթի վերամշակման գործարան: ԹԲՄՄ-ի նախկին նախագահ՝ Հուսամեդդին Ջինդորուկը բացահայտել է Սենատի գրառումներից հազարավոր փաստաթղթերի անհետացումը:

... 1998-ին արտգործնախարարությանը պատկանող պողպատյա պահարանները վաճառվել են՝ իրենց պարունակած արժե-

քավոր նյութերով հանդերձ: Հնաոճ ապրանքների խանութների գնած այս պահարանների խիստ գաղտնի փաստաթղթերի որոշ մասը հայտնվել է տեղական շուկայում: Ոստիկանությունն առգրավել է և վերադարձրել արտգործնախարարություն»:

Անտարբերության այս օրինակները կարդալուց հետո ինչպե՞ս կարող է որևէ մեկը վստահել օսմանյան արխիվներին»:

Հոկտեմբերի 12-ին ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության օրինագծի քննարկումը հետաձգվեց մինչև հոկտեմբերի 17-ը: Թուրքիայի փոխվարչապետ, «Մայր Հայրենիք» կուսակցության նախագահ Մեսութ Յըլմազը այդ առթիվ նշել է, որ արդեն երկար տարիներ հայերի ձեռքին եղած փաստաթղթերը շատ քիչ են, որպեսզի ապացուցեն ցեղասպանության իրագործումը: Դրան հակառակ, բավական շատ արխիվային փաստաթղթեր գոյություն ունեն Թուրքիայում, որոնք դեռևս չեն ուսումնասիրվել: Փոխվարչապետն առաջարկել է՝ հայ, թուրք և մի երրորդ երկրի պատմաբաններին հնարավորություն տալ համատեղ կատարելու ուսումնասիրություններ հենց այդ արխիվներում: Հատկանշական է, որ Թուրքիայի իշխանությունները մեկը մյուսի հետևից սկսել են հայ և թուրք պատմաբաններին երկխոսության նստելու կոչեր անել:

Թուրքական «Սաբահ» օրաթերթը հրապարակել է Կոնգրեսում քննարկվող օրինագծի 32-րդ կետը, որի հիման վրա Ամերիկայի հայերը կարող են Թուրքիային ներկայացնել փոխհատուցման պահանջներ: ԱՄՆ-ի հայերը եթե դիմեն թուրքական դատարաններ, նրանց պարտավորվում են օգնել ամերիկացի դիվանագետները:

«Սաբահը» անհանգստացած է, որ դրան կհաջորդեն նաև Հայաստանի իշխանությունների հողային պահանջները Թուրքիայից: Պետք է նշել, որ Հայաստանի իշխանությունները պաշտոնապես նման հայտարարությամբ հանդես չեն եկել:

Կոնգրեսում հարցի քննարկումից մեկ օր առաջ Թուրքիայի նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերը հեռախոսազրույց ունեցավ ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնի հետ: Արդյունքում Քլինթոնը հոկտեմբերի 12-ին կոնգրեսականներին հատուկ խնդրել էր մերժել օրինագիծը:

Ինչպես և սպասելի էր, թուրքական լրատվամիջոցների հրապարակումները բուռն էին ու կատաղի, համեմված «ամերիկացիների դավաճանությունը», «հայերի թշնամանքը» կամ «չպիտի ուշանա մեր պատասխանը Հայաստանին» արտահայտություններով:

Իսկապես չուշացավ, առաջին հերթին, Թուրքիայի արտգործնախարարության պաշտոնական հաղորդագրությունը՝ կարճ, բայց սպառնալիք. «Սեպտեմբերի 21-ին Կոնգրեսի ենթահանձնաժողովի կողմից ընդունված բանաձևը հակասում է պատմական ճշմարտություններին: Բանաձևի ընդունումը Ներկայացուցիչների պալատի միջազգային հարաբերությունների հանձնաժողովի կողմից մեծապես վնասելու է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ու Անդրկովկասում կայունության հաստատման գործին, միաժամանակ բացասաբար է անդրադառնալու թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա»:

Թուրքիայում բազմաթիվ կարծիքներ կան, թե ինչու դա տեղի ունեցավ: Թուրքիայի հասարակության մի ստվար զանգված համոզված է, որ հայերն այսուհետ ևս շարունակելու են ջանքեր գործադրել, որպեսզի ամբողջ աշխարհն ընդունի ցեղասպանությունը: Դրանով Հայաստանը Թուրքիայի համար ստեղծում է բազմաթիվ խոչընդոտներ, հավանաբար առաջ քաշելով տարածքային և փոխհատուցման պահանջներ: Շատերը գտնում են, որ Հայաստանը նման քաղաքականությամբ փորձում է նաև անելանելի վիճակ ստեղծել Թուրքիայի համար, որպեսզի վերջինս ստիպված լինի բացել սահմանը տնտեսական ճգնաժամ ապրող Հայաստանի համար: Հնչում են նաև կարծիքներ, որ երկու երկրների միջև լարվածությունը ստեղծվում է քաղաքական գործիչների պատճառով, այնինչ ժողովուրդները ցանկանում են ապրել խաղաղ և միմյանց հանդեպ բարեկամաբար են վերաբերվում:

Թուրքիայում կա նաև մեկ այլ խումբ, որի կարծիքով թուրքական իշխանություններն են մեղավոր, որ ժամանակին չեն արձագանքել Հայաստանի ամենաբարձր ատյաններից հնչած կոչերին, չեն զարգացրել երկխոսությունը, տնտեսական կապեր չեն ստեղծել, ինչի արդյունքում Հայաստանը կախման մեջ ընկնելով թուրքական կապիտալից, այլևս հակաթուրքական տրամադրություններ չէր ունենա և չէր փորձի պնդել ցեղասպանության ճանաչումը, իսկ առանց Հայաստանի, Սփյուռքի ջանքերը կհավասարվեին զրոյի: Նրանց կարծիքով, նույնիսկ հիմա ուշ չէ դա անել, իսկ հակառակ դեպքում, այսինքն՝ եթե Հայաստանի նկատմամբ պատժամիջոցներ կիրառվեն, ապա դա կունենա վատ արձագանք, ավելի կուժեղացնի ԱՄՆ-ում և այլուր ցեղասպանության ընդունմանն ուղղված Սփյուռքի և Հայաստանի գործունեությունը:

Քննադատվում է կառավարությունը այն բանի համար, որ թույլ է տվել հայ-թուրքական հարաբերություններին միջամտեն երրորդ երկրները և շահարկեն «այսպես կոչված» ցեղասպանության խնդիր:

«Նեզավիսիմայա գազետա»-ն հոկտեմբերի 17-ի համարում

պնդում է, որ Օսմանյան կայսրությունում հայոց ցեղասպանության մասին բանաձևը կընդունվի ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի կողմից: Հաղորդելով, որ բանաձևի ընդունման համար անհրաժեշտ է 210 ձայն, թերթը պնդում է, որ 141 սենատորներ գրավոր հավաստիացրել են բանաձևի ընդունումը հետապնդող Ամերիկայի հայկական կազմակերպություններին, որ կպաշտպանեն բանաձևը, իսկ 100 սենատորներ այդ մասին հայտարարել են բանավոր:

«Իզվեստիա»-ի Վաշինգտոնի մեկնաբան Եվգենի Բայն իր հերթին նշում է, որ չնայած Թուրքիայի ակտիվ հակազդեցությանը (որպես օրինակ հեղինակը հաղորդում է, որ ստորին պալատի նախկին խոսնակ Բոբ Լիվինգստոնը «700 հազար դոլար է ստացել Անկարայից հօգուտ Թուրքիայի իր լոբբիստական գործունեության համար»), «այս անգամ առաջ անցավ մյուս կողմը»:

«Սկանդալն օրեցօր ձնագնդի պես աճում է», - գրում է «Իզվեստիա»-ի մեկնաբանը և նշում Պենտագոնի լուրջ անհանգստությունը, թե բանաձևի ընդունումը կարող է սպառնալիքի տակ դնել ԱՄՆ-ի բազմամիլիարդանոց ռազմական պայմանագրերը Թուրքիայի հետ: Հեղինակի կարծիքով, Թուրքիան լիովին կարող է ԱՄՆ-ին արգելել օգտագործելու Ինջիրլիքի բազան, որի վարձակալության ժամկետը լրանում է հոկտեմբերի 30-ին, և վերանայել ըստ էության արդեն համաձայնեցված որոշումը 4,5 միլիարդ դոլար ընդհանուր գումարով ամերիկյան 145 մարտական ուղղաթիռների գնման մասին: Ամերիկյան ազդեցիկ «Վաշինգտոն փոստ» թերթի վկայակոչմամբ Եվգենի Բայը բերում է մի ռուս դիվանագետի (որը ցանկացել է անհայտ մնալ) խոսքերն այն մասին, որ «Անկարան լիովին կարող է ամերիկյանների փոխարեն ձեռք բերել ռուսական ուղղաթիռներ՝ հանդերձված իսրայելական սարքերով»:

«Հայկական հարցը պառակտել է ՆԱՏՕ-ն», - այսպես է վերնագրված «Իզվեստիա»-ի մեկնաբանի նյութը:

Ռուսաստանին, ինչպես նաև Չինաստանին խիստ անհանգստացնում են ՆԱՏՕ-ի դեպի Արևելք ընդարձակումը: Ռուսական մամուլի վերլուծությունները գալիս են հաստատելու այն փաստը, որ ՆԱՏՕ-ն ոչ թե ընդարձակվում է դեպի Արևելք, այլ ընդհակառակը՝ ՆԱՏՕ-ն արդեն Արևելքում է:

Ռուսական մամուլի տեղեկատվությունից իմանում ենք, որ արդեն սեպտեմբերի կեսերին Թուրքիայի գլխավոր շտաբի պետ Հուսեյն Քըվրըքօղլուն Հունաստանի մայրաքաղաքում, ՆԱՏՕ-ի զինվորական հանձնաժողովի նիստում, որն անցկացվում էր դաշինքի անդամ-պետությունների պաշտպանության գերատեսչությունների ղեկավարների մակարդակով, առաջարկեց ձևավորել «արագ հակազդեցության ուժերի» ստորաբաժանում՝ 1500 նատոյական սպաների մասնակցությամբ, որի պատասխանատվության գոտին կլինեն Կովկասը, Բալկանները և Կենտրոնական Ասիան: Թուրք գեներալի առաջարկությունը քննարկվում էր ՆԱՏՕ-ի շտաբ-կայան Բրյուսելում, ընդ որում, եթե նշյալ տարածաշրջաններում ստեղծվեն ճգնաժամային իրավիճակներ, «արագ հակազդեցության ուժերի» քանակը 1500-ից կհասցվի 50-60 հազարի: Ուշագրավ է, որ «արագ հակազդեցության ուժերի» կենտրոնական կլինի Ստամբուլը: «Թուրքիան, ՆԱՏՕ-ի կարծիքով, առավել մոտ է անկայուն և ճգնաժամային տարածաշրջաններին՝ Կովկասին, Բալկաններին և Կենտրոնական Ասիային», ասել է Քըվրըքօղլուն:

Հավանական է, Թուրքիայում տեղաբաշխվող ՆԱՏՕ-ի զորքերին կտրվի Բաքու-Ջեյհան կառուցվելիք խողովակաշարի պաշտպանությունը: Բաքու-Ջեյհանը, ինչպես հայտնի է, անց է կացվելու երեք երկրների՝ Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի տարածքներով: Չի կոնկրետացվում՝ արդյոք թո՞ւրք զինվորներն են պաշտպանելու խողովակաշարի ադրբեջանական և վրացական հատվածները, թե՞ խոսքը վերաբերում է թուրքական հատվածին:

Չի բացառվում, որ ՆԱՏՕ-ի ռազմավարներին հետաքրքրում են նաև Կենտրոնական Ասիայի պայթյունավտանգ շրջանները, Աֆղանստանը, Չինաստանի հյուսիս-արևմտյան շրջանը (Սինցզյան-ույղուրական ինքնավարություն): Ինչ վերաբերում է Բալկաններին, ապա ՆԱՏՕ-ն այստեղ արմատներ է ձգել մի քանի տարի առաջ (Կոսովո):

ՆԱՏՕ-ի դեպի Արևելք ընդարձակումը հատկապես անհանգստացնում է Չինաստանին: Նույն միահոգությունն ունի նաև Ռուսաստանը, սակայն Մոսկվային դժվար թե հաջողվի զսպել դաշինքի դեպի Արևելք՝ ԱՊՀ երկրներ ընդարձակումը: ՆԱՏՕ-ի առաջն առնելու համար Ռուսաստանն ունի մի քանի դաշնակից միայն՝ Չինաստանը, Բելառուսը, թերևս նաև Հայաստանն ու Տաջիկստանը:

ՆԱՏՕ-ի ակտիվությունը ԱՊՀ երկրներում օր-օրի մեծանում է: Սեպտեմբերին ԱՊՀ տարածքում և նախկին ԽՍՀՄ-ի դաշնակից սոցիալիստական ճամբարի երկրներում Հյուսիսատլանտյան դաշինքը կազմակերպել է մի շարք զորավարժություններ: Սեպտեմբերի 11-18-ին Ղազախստանում՝ Չինաստանին հարող շրջանում անցկացվեցին «Ցենտրազբատ-2000» միջազգային պարապմունքներ, գրեթե նույն ժամանակահատվածում Ղրիմում անցկացվեցին «Կազակյա ստեպ-2000» զորավարժությունները: Սեպտեմբերի կեսերին Ռու-

մինիայում՝ Կարպատյան լեռներում տեղի ունեցան խաղաղարարական զորավարժություններ՝ «Cooperative Best Effort-2000» անունով, որոնց մասնակցում էին ութ երկրներ ՆԱՏՕ-ից (ԱՄՆ, Կանադա, Հունաստան, Իտալիա, Հոլանդիա, Լեհաստան, Մեծ Բրիտանիա և Թուրքիա), տասը երկրներ ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի անդամներից (Ավստրիա, Բուլղարիա, Ռումինիա, Սլովակիա, Մակեդոնիա, Ուկրաինա, Մոլդովա, Լիտվա, Վրաստան, Ադրբեջան):

Նույն օրերին Ուկրաինայում՝ Կարպատյան լեռներում, Ուժգորոդ քաղաքի մերձակայքում ավարտվեցին «Անդրկարպատներ-2000» պարապմունքները, որոնց մասնակցեցին ՆԱՏՕ-ին չանդամակցող 12 երկրներ, այդ թվում՝ Բելառուսը, Ուկրաինան, Մոլդովան, Վրաստանը:

Սեպտեմբերի 16-ից, Թբիլիսիից ոչ հեռու գտնվող Կրծանիսի զինափորձարաններում, 70 ամերիկացի զինվորականներ վրացի, ադրբեջանցի և հայ ականազերծողների հետ պարապմունքներ էին անցկացնում, որը տևեց երկու ամիս:

Այսպիսով, սեպտեմբերին ՆԱՏՕ-ի զինվորականները, թվով 10 հազար, ԱՊՀ տարածքում գտնվող զինափորձարաններում անց են կացրել հինգ գործողություններ. ամբողջ ծախսերը հոգացել է ՆԱՏՕ-ն: Ռուսաստանը նշյալ զորավարժություններից մասնակցեց միայն «Ցենտրազբատ-2000»-ին:[4]

Թուրքիայի Գլխավոր շտաբի պետի այցի հետաձգումը «Աքշամի» հոկտեմբերի 5-ի համարում մեկնաբանվեց «Ընդոստություն ԱՄՆ-ին» խորագրով: «Սաբահը» դա որպես «հակահարված» բնութագրվեց, «Ջումհուրիեթը», նկատի ունենալով նաև Հայաստանի քաղաքացիներին վիզայի իրավունքից զրկելու հանգամանքը, կարծիք հայտնեց, թե Ազգային անվտանգության խորհրդի նիստում ընդունված հակազդեցության ծրագիրը կիրառության մեջ է դրվում: Իսկ «Հյուրիեթը» այս ամենը ներկայացրեց «Թուրքիան պատժամիջոցներ է կիրառում» խորագրի տակ:

Եթե թուրքական թերթերը հիմնականում արձագանքում էին գլխավոր շտաբի պետի այցի հետաձգմանը, ապա թուրքական պետհեռուստատեսությունն էլ հոկտեմբերի 5-ի առավոտյան իր սեփական թղթակից Ջան Իզբուլի միջոցով, որ Երևանում էր, արձագանքեց ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանի մամուլի ասուլիսին: Իզբուլը ուղիղ եթերում հեռախոսով հայտնեց հետևյալը. «Մենք

[4] «Ազգ», 6 հոկտեմբերի, 2000թ., էջ 5:

հանդիպել ենք Օսկանյանի հետ: Հայաստանում ընդգծելով երկխոսության անհրաժեշտությունը, դրա հետ և պնդում են, որ ցեղասպանության ընդունումը կնպաստի հայ-թուրքական հարաբերությունների հաստատմանը: Միաժամանակ պահանջվում է ըմբռնումով մոտենալ հայկական սփյուռքի ջանքերին»: Այնուհետև Իզբուլը մեջբերեց Օսկանյանի՝ «Մենք Թուրքիայի դեմ հակաքայլերի չենք դիմել, ոչ էլ կդիմենք» խոսքերը, ապա ավելացրեց, որ նման մոտեցմամբ խիստ կասկածելի է ՀՀ արտգործնախարարի երկխոսության կոչերի անկեղծությունը: Ի դեպ, մինչ այդ, հեռուստատեսությամբ հիշատակվել էր Երևանում ԱՄՆ դեսպան Մայքլ Լեմոնը, որը երկխոսություն սկսելու կոչ էր արել Թուրքիային և Հայաստանին, հայտնելով դրա սկզբնավորմանը նպաստելու իր պատրաստակամությունը:

Թուրքական հեռուստատեսության կողմից Օսկանյանի վերոհիշյալ մոտեցման համադրումը Լեմոնի մոտեցման հետ պատահական չէր: Ամենևին չի կարող պատահական լինել Թուրքիայի հակաքայլերի առնչությամբ հաղորդավարի դիմումը Մեջլիսում ներկայացված քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին: Նրանցից թերևս ուշագրավը «Մայր հայրենիք» կուսակցության պատգամավոր Ագյահ Օքթայ Գյուների դատողությունն էր ոչ միայն հակաքայլերի, այլև Օսկանյանին պատասխանելու, ինչպես նաև Թուրքիայում Սևրի բարդույթի առկայությունն ընդգծելու առումով: Գյուները ասաց. «Անհապաղ պետք է փակել օդային միջանցքը՝ կտրելու համար Հայաստանի հաղորդակցությունն արտաքին աշխարհի հետ: Պետք է վերջ տալ Իրաքի հյուսիսում Ինջիրլիքից պարբերաբար կատարվող ամերիկյան ինքնաթիռների հետախուզական թռիչքները, վերանայել թուրք-ամերիկյան հարաբերությունները և այդ հարցը քննարկել Մեջլիսի արտակարգ նիստում: Եթե մենք այս ամենին աչք փակենք, ապա գործը կհասնի Սևրի պայմանագրին: Երեկ Հայաստանի արտգործնախարարն ասում էր՝ մենք հակաքայլեր չենք ձեռնարկելու: Էդ ի՞նչ հակաքայլեր պիտի ձեռնարկենք, կարո՞ղ եք, որ ձեռնարկեք»:

Մինչ Գյուները նոր հակաքայլերի անհրաժեշտության մասին էր խոսում, Անկարայի Բիլքենթ համալսարանի պրոֆ. Դույգու Սեզերն էլ, որ ստուդիայի հյուրն էր, փաստորեն կասկածի տակ դրեց դրանց արդյունավետությունը: Տկն. Սեզերը նախ ուշադրություն հրավիրեց բանաձևի բացասական հետևանքներին, ասելով. «Ցեղասպանությունը մարդկության դեմ կատարված ոճրագործություն է: Հետևաբար դրա ընդունումը Հայաստանին իրավունք է տալու նախ փոխհատուցում պահանջել, ապա նաև ներկայացնել հողային պա-

հանջ»: Այսուհետև նա անդրադարձավ Թուրքիայի վերոհիշյալ հակաքայլերին, նշելով, որ դրանք որևէ արդյունքի չեն կարող հանգեցնել: «Նույնիսկ, շարունակեց տիկին Սեզերը, ռազմաբազաների փակումը որևէ ազդեցություն չի կարող ունենալ ԱՄՆ-ի վրա: Ի՞նչ է, ԱՄՆ-ում այս ամենը չէին հաշվարկել: Նման առաջարկները լուրջ չեն»:

Տեսակետների վերոհիշյալ հակադրությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ Հայոց ցեղասպանության առնչությամբ ԱՄՆ-ին հակազդելու Թուրքիայի հնարավորությունների սահմանափակվածության արտահայտություն:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա ինչ հակազդեցություն, երբ Թուրքիան մերժել է դիվանագիտական հարաբերությունները նրա հետ, սկսած 1993-ից նրան շրջափակման է ենթարկել: Այլ կերպ՝ այս առումով էլ նրա հնարավորությունները սահմանափակ են, հակառակ դեպքում Թուրքիան ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի հանձնաժողովում Հայոց ցեղասպանության բանաձևի ընդունման առթիվ ոչ կմեղադրեր Հայաստանին, ոչ էլ թուրքական քաղաքական գործիչներն ու մամուլը հարձակումներ կգործեին նրա վրա՝ անցնելով սանձարձակության տեսանելի ու անտեսանելի բոլոր սահմանները:[5]

Թուրքիայի արտաքին քաղաքականության գերատեսչության տարածած հայտարարության մեջ խորը անհանգստություն է հայտնվում՝ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների և մարդու իրավունքների ենթահանձնաժողովի (այժմ արդեն միջազգային հարաբերությունների հանձնաժողովի) ընդունած թիվ 398 բանաձևի առնչությամբ: Թուրքիայի ԱԳՆ-ն նշում է, որ Մ. Նահանգների Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի կողմից բանաձևի ընդունման դեպքում կսրվեն Հայաստանի և Թուրքիայի հարաբերությունները, ինչպես նաև լուրջ վնաս կհասցվի թուրք-ամերիկյան հարաբերություններին:

Առավել խիստ հայտարարություններ է արել Թուրքիայի վարչապետ Բյուլենթ Էջևիթը, որը Ներկայացուցիչների պալատի մարդու իրավունքների ենթահանձնաժողովի որոշումը համարել է «անխոհեմ քայլ», որը «ստվեր է ձգում թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա» և որ «որոշ անպատասխանատու քաղաքական գործիչներ ԱՄՆ-ի նման մեծ երկրում այդքան ազդեցություն ունեն

[5] Հակոբ Չաքրյան, Անկարան հակաքայլերի է դիմում, «Ազգ», 6 հոկտեմբերի,2000թ.:

Վաշինգտոնի արտաքին քաղաքականության վրա»: Դիտորդների կարծիքով, Թուրքիայի ԱԳՆ-ի և վարչապետ Էջևիթի հայտարարությունները թույլ են տալիս ենթադրել, որ Անկարան արտաքին քաղաքականության բնագավառում լուրջ քայլեր կձեռնարկի՝ տապալելու թիվ 398 բանաձևը: «Նեզավիսիմայա գազետայի» կարծիքով, Թուրքիայի կառավարությունը հավանության է արժանացրել երկրի ԱԳՆ-ի և գլխավոր շտաբի համատեղ գործունեության ծրագիրը: Համաձայն թուրքական դիվանագիտական աղբյուրների, «գործողությունների ծրագիրը» կազմված է 34 կետից և հանձնվելու է վարչապետ Էջևիթի հաստատմանը: 34 կետերից նշենք մի քանիսը. եթե Կոնգրեսը ճանաչի Հայոց ցեղասպանությունը, ապա թուրքերը թույլ չեն տա ամերիկացիներին օգտագործել Ինջիռլիքի ռազմակայանը, հարաբերություններ կհաստատեն Իրաքի հետ, Թուրքիայի մեջլիսը կդատապարտի ԱՄՆ օրենսդիրներին, հաշվի չեն առնի ԱՄՆ խորհուրդները՝ կապված Թուրքիայում մարդու իրավունքների խնդիրների հետ, և ամենակարևորը՝ Թուրքիան ռազմական ոլորտում կհրաժարվի համագործակցել ԱՄՆ-ի հետ:

Անկարան պատրաստվում էր ԱՄՆ-ից ձեռք բերել 4 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ 145 ռազմական ուղղաթիռներ: Անցկացված մրցույթում առաջին տեղը գրավել է ամերիկյան «Բել Թեքստրոն» ընկերության AH-1Z տիպի ուղղաթիռը, որն անվանվում է նաև «Քինգ կոբրա», երկրորդ տեղը՝ ռուս-իսրայելական համատեղ «Կամով-IAI» արտադրության Ka-SO-2 ուղղաթիռը:

Թուրքիայի կառավարությանը մոտ կանգնած աղբյուրների վկայությամբ, վարչապետ Էջևիթը կարգադրել է հրապարակել միանգամից երկու հնարավոր հաղթող ընկերությունների անուններ՝ հետապնդելով առնվազն երկու նպատակ: Առաջին. Թուրքիայի վարչապետը ռուս-իսրայելական առաջարկը թողնելով ամերիկյան առաջարկի հետևում, սղոցել է ռուս զինվորականության նյարդերը, հարվածել նրանց ինքնասիրությանը, ինչը խոչընդոտում է Անկարայի և Մոսկվայի միջև ռազմական ոլորտում հնարավոր համագործակցությունը: Երկրորդ. Էջևիթը վստահ է, որ ստեղծված իրավիճակում թուրքական կառավարությունը ամերիկացիների հետ առևտրում սակարկությունների հնարավորություն ունի:

Վերլուծաբանների կարծիքով, թուրքական կառավարությունը հակված էր գործարք կնքելու ամերկյան ընկերության հետ: Ահա և ասպարեզ է եկել հրեական լոբբին, որը թուրքերին ապառնալով Հայոց ցեղասպանության ճանաչմամբ, փաստորեն Թուրքիային ստիպում է ուղղաթիռներ գնել ռուս-իսրայելական ընկերություններից:

Միևնույն ժամանակ, ինչպես գրում է «Նեզավիսիմայա գազետան», Անկարան պատրաստվում է կարծրացնել իր քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ: Թուրքիայի պաշտպանության նախարարությունը հայ-թուրքական սահմանի հարևանությամբ որոշել է անցկացնել զորավարժություններ: Անկարայում կարծում են, թե ԱՄՆ Կոնգրեսում հայկական լոբբիինգի թիկունքում կանգնած է պաշտոնական Երևանը: Թուրքական բարձրաստիճան պաշտոնյաները ակնարկներ են արել, թե Անկարան Հայաստանի նկատմամբ այնպիսի ճնշումներ կգործադրի, ինչպես 1998թ. արեց Սիրիայի նկատմամբ, երբ պաշտոնական Դամասկոսն ապաստան էր տվել Քրդական աշխատավորական կուսակցության առաջնորդ Աբդուլահ Օջալանին: Հիշեցնենք, այն ժամանակ թուրք-սիրիական հարաբերությունները հասել էին լարվածության գագաթնակետին, իսկ Անկարան Դամասկոսին սպառնում էր Սիրիա ներխուժելով:

Թուրքիան սկսեց ակտիվորեն միջոցառումներ մշակել Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ, այդ նպատակով օգտագործելով տնտեսական մի շարք լծակներ:

Հայտարարությամբ հանդես եկավ էներգետիկայի նախարար Էրսումերը, որը զգուշացնում էր ԱՄՆ-ին, որ շուտով ստիպված կլինի մոռանալ այն 11 միլիարդ դոլար ներդրումների մասին, որոնք կատարվել են Էներգետիկայի բնագավառում (Ամերիկյան ընկերությունները ներդրում էին կատարել շուրջ 37 էներգահամակագում):

Նախարարը նշել է նաև, որ Կոնգրեսի կողմից օրինագծի ընդունման դեպքում Թուրքիան դադարեցնելու է տնտեսական բնագավառում գոյություն ունեցող հարաբերությունները ԱՄՆ-ի հետ: Վերջին օրերին Թուրքիայում տեղի ունեցող զարգացումները վկայում են, որ երկրի իշխանությունների թիրախը արդեն ոչ թե Հայաստանն է (ինչպես նշվում էր վերջին օրերին), այլ ԱՄՆ-ը, քանի որ մի շարք բողոքներն ու գործողություններն ուղղված են հենց Միացյալ Նահանգների դեմ:

ԱՄՆ-ին հակառակ՝ Թուրքիայի Ազգային անվտանգության խորհուրդը նախատեսել է Կոնգրեսի կողմից ցեղասպանության օրինագծի ընդունումից հետո Իրաքի հետ բացել սահմանային երկու անցակետ, որոնցից մեկը կլինի այն շրջանում, ուր ապրում են մեծ թվով քրդեր, իսկ մյուսը՝ Սիրիայի սահմանին շատ մոտ: Երկրորդ սահմանային անցակետը բացելու համար սկսեցին որոշակի շինարարական աշխատանքներ: Պաշտոնական Անկարան նախատեսում էր Թուրքիայի զինված ուժերի հսկողությանը հանձնել Իրաքի հետ սահմանային դռան 25-30 կիլոմետրանոց հատվածի անվտանգությունը:

Հայտարարությամբ հանդես է եկել նաև թուրք-ամերիկյան տնտեսական հանձնաժողովը, ուր կոչ է արվում ստեղծել աշխարհի պատմաբանների մի խումբ, որը կզբաղվի Հայոց ցեղասպանության ճանաչման ուսումնասիրությամբ և այդ մասին տեղեկություններ կհաղորդի Համաշխարհային արդարադատության խորհրդին:

Բնականաբար, այս ամենը կարող էր որոշակի անհանգստություն պատճառել ԱՄՆ իշխանություններին: Սակայն չպետք է անտեսել նաև այն, որ առանց ԱՄՆ աջակցության Թուրքիան ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական առումով կարող է քայքայվել՝ արդյունքում ունենալով քանդվող տնտեսություն և դառնալ քաղաքական իմպոտենտ: Այդպիսով, Թուրքիան մեկընդմիշտ կմոռանար Եվրամիության (ԵՄ) ճանապարհը և կզրկվեր դեռևս 60-ական թվականներից փայփայած երազանքից:

Այսօր Թուրքիայում (հասարակության շրջանում) գերիշխում է այն կարծիքը, որ ԵՄ-ին անդամակցելով՝ Թուրքիան կմասնատվի, այսինքն՝ մի շարք կարևոր նշանակություն ունեցող զիջումներ, որոնք պահանջում է ԵՄ-ն (քրդական հարց, ազգային փոքրամասնություններ և այլն) կարող են մասնատել Թուրքիան: Դրան զուգահեռ, Հայոց ցեղասպանության ճանաչման հարցն էլ, իր հերթին, լիովին անկառավարելի է դարձրել թուրքական իշխանությունների գործողությունները:

Հայոց ցեղասպանության հարցում հատուկ զեկուցագրով հանդես է եկել նաև Եվրախորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը, որն առաջարկում է ԱՄՆ Կոնգրեսի կողմից օրինագծի ընդունման դեպքում ներկայացնել նաև համապատասխան փաստաթղթեր և ցուցմունքներ: Սա նշանակում է, որ Կոնգրեսի կողմից օրինագծի ճանաչմանը կհաջորդի Եվրախորհրդարանում հարցի քննարկումն ու համապատասխան որոշումը, և հենց այն փաստերի հիման վրա, որոնք կներկայացվեն Կոնգրեսի կողմից:[6]

ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնը հոկտեմբերի 18-ին հատուկ ուղերձով դիմեց Ներկայացուցիչների պալատի նախագահ Դենիս Հասթերթին: Ուղերձը պարունակում էր հետևյալ բովանդակությունը.

«Հարգելի պարոն խոսնակ

Ձեզ եմ դիմում Արևելյան Անատոլիայում 1915-1923թթ.-ին Օսմանյան իշխանության օրոք տեղ գտած դժբախտ դեպքերին վերաբերող գրությունը:

[6] Աշոտ Սողոմոնյան, Թուրքիայի ԱԳՆ-ն հույսը կորցրել է, «Երկիր», 11 հոկտեմբերի, 2000թ.

բաբերող թիվ 596 օրինագծի շուրջ իմ մտահոգությունը հայտնելու նպատակով: Ամեն տարի ապրիլի 24-ը ես հիշատակում եմ իբրև Հայոց հիշատակի օր՝ ոգեկոչելով այդ դարաշրջանում անմեղ հայերի տարագրությունն ու կոտորածը: Եվ ամեն տարի ես կոչ եմ անում բոլոր ամերիկացիներին, որպեսզի նրանք ամեն ջանք գործադրեն, որ նման սարսափներ այլևս երբեք չկրկնվեն: Այնուամենայնիվ, ես խորապես մտահոգ եմ, որ այսօր թիվ 596 օրինագծի ընդունումը հեռուն գնացող բացասական հետևանքներ է ունենալու ԱՄՆ-ի համար:

Մենք նշանակալի շահեր ունենք այդ բարդ աշխարհագրական գոտում, այն է՝ զսպել Արևելքի և Կենտրոնական Ասիայի կողմից եկող սպառնալիքները, կայունություն հաստատել Բալկաններում և հայթայթել էներգակիրների նոր աղբյուրներ: Օրինագծի քննարկումն այս անհանգիստ ժամանակաշրջանում բացասաբար կանդրադառնա բոլոր այս շահերի վրա և կձախողի Հայաստանի ու Թուրքիայի միջև հարաբերությունների բարելավմանն ուղղված (նաև օրինագծի կողմնակիցների) ջանքերը:

Ես լիովին հասկանում եմ, թե որքան սուր են ընկալում Թուրքիան և Հայաստանն այս խնդիրը: Վերջին հաշվով, այս ցավոտ խնդիրը կարող է լուծվել միայն այն դեպքում, երբ երկու կողմերը միասին քննեն իրենց անցյալը:

Ես խստագույնս հորդորում եմ օրինագիծը չդնել այսօրվա օրակարգում:

Անկեղծորեն՝ Բիլ Քլինթոն»:

ԱՄՆ-ի նախագահի ուղերձը ստիպեց կոնգրեսի նախագահին Հայոց ցեղասպանության դատապարտման խնդրին նայել ոչ թե բարոյականության, այլ սեփական երկրի շահերի տեսանկյունից: Հայտնի էր, որ մինչ այդ Դենիս Հաստերթն ինքն էր փորձում կոնգրեսականներին կողմնորոշել օրինագծի ճանաչման օգտին:

Քլինթոնի քայլը առաջին հերթին դիտվում է այն տեսանկյունից, որ ԱՄՆ իշխանությունները վերջնականապես համոզվեցին, որ կոնգրեսականների մեծամասնությունը քվեարկելու է օրինագծի ընդունման օգտին: Միացյալ Նահանգներին հուզում էր նաև վերջին օրերին հանկարծակի ծագած իսրայելա-պաղեստինյան զիված ընդհարումը, որը չի բխում ԱՄՆ-ի շահերից և կարող էր խոչընդոտել արդեն սկսված մերձավորարևելյան խաղաղարար գործընթացին: Քլինթոնին անհանգստացրել է նաև այն փաստը, որ թուրք-իրաքյան հարաբերությունների կարգավորման արդյունքում կարող էր ապակայունանալ իրավիճակը այդ տարածաշրջանում և փոփոխության ենթարկվեր ԱՄՆ-ի ազդեցությունը հատկապես Իրաքի նկատմամբ:

ԱՄՆ նախագահի նման պահվածքը Թուրքիային լիովին ձեռնտու էր: Մի կողմից՝ անորոշ ժամանակով հետաձգվում էր ցեղասպանության հարցի քննարկումը Միացյալ Նահանգների Կոնգրեսում, մյուս կողմից առաջիկայում սպասվում էր կոնգրեսականների հերթական ընտրություն: Վերջին շրջանում թուրքական զանգվածային լրատվության միջոցները իշխանություններին քննադատում էին Հայաստանի նկատմամբ որդեգրած սխալ արտաքին քաղաքականության համար: Այդ պատճառով վարչապետ Էջևիթը հանդես եկավ հայտարարությամբ և Հայաստանի իշխանություններին կոչ արեց ցեղասպանության հարցի շուրջ սկսել հայ-թուրքական երկխոսություն: Մինչ օրս Թուրքիայի իշխանությունները ոչ մի անգամ նման հայտարարությամբ հանդես չէին եկել: Սա ենթադրում է, որ առաջիկայում Թուրքիան լրջորեն զբաղվելու է Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու և այդպիսով ցեղասպանության ճանաչման խնդիրը մոռացության մատնելու ուղղությամբ:

Արդեն իսկ նախատեսված 17 պատժամիջոցները, որոնք Թուրքիայի ազգային անվտանգության խորհուրդը պատրաստվում էր իրագործել Հայաստանի նկատմամբ, այլևս չեն կիրառվի, քանի որ դա արդեն չի բխում ինչպես Թուրքիայի, այնպես էլ ԱՄՆ շահերից: Հայաստանի քաղաքացիների նկատմամբ հոկտեմբերի 15-ից կիրառվող այցագրային խստացված ռեժիմը կարճ ճամանակամիջոցում կվերացվի, քանի որ դա առաջին հերթին վնասում է Թուրքիայի տնտեսական շահերին:

Հոկտեմբերի 19-ին ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի նիստից մի քանի րոպե առաջ պալատի նախագահ Դ. Հաստերթը ընդառաջելով նախագահ Քլինթոնի ուղերձին, օրակարգից հանեց Հայոց ցեղասպանության մասին բանաձևը:

Որաշման հրապարակումից հետո «596 հանձնախումբը» հանդես է եկել հայտարարությամբ, ուր մասնավորապես ասվում է. «Թուրքական սպառնալիքներն իրական չէին, թեև հաջողություն ունեցան: Թուրքիայում տեղակայված ամերիկյան զինվորականության դեմ սպառնալիքներին տեղի տալու փոխարեն խոսնակը պետք է կոչ աներ նախագահին մերժել դրանք և զգուշացներ Թուրքիային, որ այնտեղ գտնվող ամերիկացիների անվտանգության համար այդ երկիրը լիակատար պատասխանատվություն է կրում»: Հանձնախումբը խոր վրդովմունք է հայտնել այն փաստի առնչությամբ, որ խոսնակը նույնպես ենթարկվել է նախագահի կողմից փոխանցված թուրքական սպառնալիքներին և արգելել մի բանաձևի քվեարկությունը, որին ինքը նույնպես կողմնակից է և որը վայելում է Ներկա-

յացուցիչների պալատի մեծամասնության զորակցությունը:

Խոսնակի որոշմամբ հաջորդել է Կոնգրեսի հայկական խմբավորման (Armenian Caucus) համանախագահ Ֆրանկ Փալոունի հայտարարությունը, որը հուսախաբություն արտահայտելով խոսնակի որոշման առթիվ, ընդգծել է. «Եթե՝ Ամերիկան դեռ հավատարիմ է իր իսկ հաստատած չափանիշներին և շարունակելու է պաշտպանել մարդու իրավունքները, ապա մենք պարտավոր ենք ճանաչել Հայկական աղետը որպես մեկ ժողովրդի հետևողական բնաջնջում»:

Անդրադառնալով խոսնակի այն պնդմանը, թե բանաձևը օրակարգից դուրս է բերվել ճնշման տակ, Ֆ. Փալոունը շեշտել է. «Եթե Ներկայացուցիչների պալատը չպետք է կարողանա խոսել պատմական ճշմարտության մասին օտար կառավարության սպառնալիքների պատճառով, ապա ի՞նչ պատգամ պետք է փոխանցենք մեր բարեկամներին և թշնամիներին»:

Օրինագիծը Ներկայացուցիչների պալատի օրակարգից հանելու առիթով ելույթ է ունեցել նաև օրինագծի ակտիվ պաշտպան, կոնգրեսական Ջեյմս Ռոգանը: «Ես անձամբ ցավում եմ այս փոփոխության համար, սակայն գոհ եմ օրինագիծը հաստատելուն ուղղված մեր պատմական հաջողությունից: Այս անգամ աշխատելով երկու կուսակցությունների մեր գործընկերների հետ, մենք միասնաբար ի վիճակի եղանք ապահովել երկու քննարկում և հասանք երրորդի նախագծմանը: Հավատացնում ենք, որ Մերձավոր արևելքում լարվածության թուլացման հետ մենք կվերականգնենք մեր պայքարը օրինագիծը հաստատելու համար»:

Կոնգրեսում հայկական ցեղասպանության հարցի քննարկմանը ուշադրությամբ հետևում էին նաև Ադրբեջանում, իսկ Ադրբեջանի քաղաքական գործիչները փորձում էին նպաստել օրինագծի ընդունման ձախողմանը: ԱՄՆ-ի Կոնգրեսի կողմից ցեղասպանության ճանաչման հարցին է անդրադարձել նաև ադրբեջանական ռուսալեզու «Զերկալո» թերթը:[7] Թերթը գրում է, որ

«զանգվածային լրատվամիջոցները տեղեկացրել էին, ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում տեղի է ունենալու սկանդալային «հայկական» բանաձևի քննարկման մասին, և կանխատեսումներ էին արվում, թե ինչպես կքվեարկեն կոնգրեսականները: Այստեղ, մենք տեղեկացանք, որ վերջին պահին 596 բանաձևը քննարկման չի դրվել, թեև չի բացառվում, որ առաջիկայում նա

[7] Կոնգրեսն առայժմ մտորում է, «Հայկական ժամանակ», հոկտեմբերի 19, 2000թ.:

փորձեր կարվեն այդ բանաձևը մտցնել օրակարգ և դնել քվեարկության: Հնարավոր է, որ Թուրքիայի և ամերիկյան վարչակազմի «հակալոբբիինգային ջանքերը» սկսել են արդյունքներ տալ: Կոնգրեսի խոսնակի հետ հանդիպել է ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնը և հորդորել է չընդունել սկանդալային բանաձևը: Նախօրեին ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Բաքի Իլքինը հայտարարել էր, թե ապագա քվեարկության հարցում «վատատեսորեն է» տրամադրված: Արդեն տեսակետներ էին հնչում, որ հանրապետական մեծամասնություն ունեցող Կոնգրեսը հայամետ որոշում կկայացնի, իսկ դեմոկրատական մեծամասնություն ունեցող Սենատը՝ թուրքամետ: Մեզ հաջողվել է նաև ճշտել, որ Սենատն ընդհանրապես այդ հարցին չի անդրադառնալու: Կոնգրեսի ընդունած որոշումն օրենքի ուժ չունի, այլ իրենից «խորհրդատվություն է» ներկայացնում, որից նախագահը հազիվ թե հրաժարվի:

Թուրքական իշխանությունները հայտարարել են, որ Կոնգրեսի կողմից որոշում կայացնելու դեպքում խիստ միջոցներ կձեռնարկեն Հայաստանի և ԱՄՆ-ի դեմ, սակայն երբ հարցը քննարկվում էր հանձնաժողովներում, իրավիճակը տարածաշրջանում ծայր աստիճան սրվել էր: Այժմ չի կարելի համարել, որ հարցը փակված է, 596 բանաձևը ինչպես հանկարծակի օրակարգից հանվել է, այնպես էլ կարող է հանկարծակի դրվել քննարկման: Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը «հայկական» բանաձևի քննարկումը համարել է «մեծ անարդարություն»: Նա նաև ասել է, որ կոնգրեսականների գործողությունները ոչ թե ցավ, այլ բողոք են առաջացնում: Միաժամանակ Հեյդար Ալիևը ոչինչ չի ասել այն մասին, թե ինչ փոփոխություններ տեղի կունենան ադրբեջանա-ամերիկյան հարաբերություններում, եթե Կոնգրեսը հայանպաստ որոշում կայացնի: Նա ասել է, որ Կոնգրեսի և կառավարության միջև զգալի տարբերություն կա, թեև երկուսն էլ իշխանության ճյուղեր են: Ադրբեջանցի դիվանագետները ևս զգալի ջանքեր են թափում՝ բանաձևի ընդունումը ձախողելու համար: «Վաշինգթոն թայմս»-ում ԱՄՆ-ում ադրբեջանական դեսպանության խորհրդական Էլմար Մամեդյարովը հոդված է տպագրել բավականաչափ խոսուն վերնագրով՝ «Հայերի արյունոտ ձեռքերը»: Հոդվածում նշվում է, որ դարասկզբից սկսած հայերը ցեղասպանության են ենթարկում ադրբեջանցիներին:

Թուրքիայում բանաձևի քննարկմանն առավել կոշտ են արձագանքել: Ռուսաստանյան թերթերը տպագրում են թուրք պատգամավորների խոսքերը, որոնք սպառնում են փակել Թուրքիայի տարածքում գտնվող ամերիկյան «Ինջերլիք» հենակայանը և վերա-

կանգնել դիվանագիտական հարաբերությունները Իրաքի հետ: Բացի այդ, ինչպես տեղեկացնում է «Միլիյեթ»-ը, վարչապետ Էջևիթը Քլինթոնին մեղադրել է Կոնգրեսի վրա ճնշում չգործադրելու համար:

Հայաստանում ևս լարված մթնոլորտ է: Երևանում հրատարակվող «Հայկական ժամանակ»-ը գրում է, որ թուրքական իշխանությունները Թուրքիայից արտաքսում են այդ երկրի քաղաքացի չհանդիսացող հայերին: Թերթը տպագրել է ոմն Արթուր Սերոբյանի պատմությունը, որը վերջին երկու տարիների ընթացքում ընտանիքի հինգ անդամների հետ ապրել և աշխատել է Ստամբուլում: Նրա խոսքերի համաձայն, նա հրաշալի հարաբերություններ ուներ բոլոր թուրքերի, այդ թվում այն ֆիրմայի ղեկավարի հետ, որտեղ նա աշխատել է: «Սակայն ամեն ինչ սկսեց փոխվել, երբ սկսեցին քննարկումները: Ես ոչինչ չասացի, բայց հասկացա, որ այլևս այնտեղ չեմ կարող աշխատել»: Այնուհետև նա նշել է, որ «հինգ օր առաջ նախազգուշացում ստացա ոստիկանությունից, որ 24 ժամվա ընթացքում պետք է թողնեմ Թուրքիայի տարածքը»: Թերթը եզրակացնում է, որ թուրքական իշխանությունները դե ֆակտո սկսել են իրականացնել Թանսու Չիլերի կոչը՝ երկրից վտարել Թուրքիայի քաղաքացի չհանդիսացող հայերին: Այլ աղբյուրները չեն հաստատում «Հայկական ժամանակ»-ի տեղեկությունները, և չի բացառվում, որ թերթը շիկացնում է կրքերը:

Վերլուծաբանների մեծամասնությունը կարծում է, որ թուրք-ամերիկյան հարաբերություններն ամբողջովին չեն խզվի: Նրանք շատ են զգում միմյանց կարիքը: Բոլոր դեպքերում «ցեղասպանության» հարցի քննարկումը վնաս է հասցրել երկու երկրների հարաբերություններին: Վաշինգտոնը և Անկարան մոտ ապագայում սկսելու են հարաբերությունների կարգավորումը, այնպես, ինչպես Վաշինգտոնը և Պեկինը սկսեցին վերականգնել կապերը՝ Բելգրադում գտնվող չինական դեսպանատան ռմբակոծությունից հետո: Այնպես որ, հետաքրքրությունները վճռորոշ նշանակություն կունենան: Իսկ եթե հայկական լոբբին մեծացնի ճնշումները, ապա հակառակ կողմից ևս ավելի գործուն հակազդեցությունների կդիմեն: ԱՄՆ-ում հասկանում են, որ բանաձևի ընդունումը կնպաստի իսլամական և ծայրահեղական ուժերի վերելքին: Այնպես, որ հռետորական հարց է առաջանում, թե այս ամենի արդյունքում որ կողմը «պարտվող դուրս եկավ»՝ հայկակա՞ն, թե՞ թուրքական»:

Հոկտեմբերի 21-ին Թուրքիայի Հանրապետության նախագահ Սեզերը շնորհակալական նամակ հղեց ԱՄՆ-ի նախագահին ցեղասպանության օրինագիծը տապալելու համար:

Չթաքցնելով իր ուրախությունը, Սեզերը գրել է. «Դուք ընդմիշտ կարևոր տեղ կգրավեք թուրքերի սրտում՝ որպես իսկական բարեկամ, որը մեծ ներդրում ունեցավ այս օրինագծի կասեցման համար, ինչը խոչընդոտելու էր մեր բարեկամական հարաբերությունները: Ես վստահ եմ, որ դուք կիսում եք իմ հույսերը, որ նման ցավալի արշավներ, որոնք կարող են վնասել մեր երկկողմ հարաբերություններին, այսուհետ չեն կրկնվի»: «Անատոլու» գործակալության հաղորդմամբ, Թուրքիայի արտգործնախարար Իսմայիլ Ջեմը ևս հայտարարություն է արել օրինագծի տապալման առնչությամբ: «Անսալով մեր կոչերին և գնահատելով մեր կողմից առաջադրված փաստերը՝ նրանք փրկեցին թուրք-ամերիկյան հարաբերություններն առավել վատթարացման հեռանկարից: Այսպիսով կասեցվեց Թուրքիայի հանդեպ անարդարացի որոշումը», - ասել է Թուրքիայի ԱԳ նախարարը:

Ցեղասպանության օրինագծի տապալման առնչությամբ իր հրճվանքն է արտահայտել նաև Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության նախագահ Ռաուֆ Դենքթաշը: Նա հայտարարել է, թե նման հանգուցալուծումն իր համար անսպասելի չէր: «Անատոլ» գործակալությանը տված հարցազրույցում խամաճիկ պետության ղեկավարը գոհունակություն է հայտնել, որ ԱՄՆ-ում առաջնորդվեցին նույն մտայնություններով, ինչ Անկարայում: «Այս կարգի նախաձեռնություններ ժամանակ առ ժամանակ արվում են: Թուրքիայի պես բարեկամական պետությանը վիրավորելը ճիշտ չէ ԱՄՆ-ի շահերի և տարածաշրջանային կայունության ու խաղաղության տեսակետից», - ասել է Դենքթաշը:

ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում հայկական բանաձևի քննարկման հետաձգմանը ցնծությամբ արձագանքեց թուրքական մամուլը: Բազմաթիվ հոդվածների մեջ խիստ ուշագրավ է թուրք նշանավոր հրապարակախոս Մեհմեթ Ալի Բիրանդի հոդվածը, որը թարգմանաբար հայ ընթերցողներին ներկայացրեց «Ազգ» թերթը (24 հոկտեմբերի, 2000թ.): Թուրք առաջավոր մտավորականի մտահոգությունը իսկույն ևեթ զգացնել է տալիս հոդվածի խորագիրը՝ «Եղեռնագործ մարդասպաններ» պիտակը դաջված է մեր ազգի երեսին»:

Ահա թե ինչ է գրում թուրք հրապարակախոսը:

«Ներկայացուցիչների պալատում հայկական բանաձևի քննարկման հետաձգումը Թուրքիային չի փրկում: «Եղեռնագործ մարդասպաններ» պիտակը դաջված է մեր ազգի երեսին:

Ատամներով սյահեցիք՝ թույլ չտալով բանաձևի քննարկու-

մը: Չլիներ Քլինթոնը, հայկական բանաձևը կընդունվեր: Եկեք ուրախությունից չցնծանք: Ամեն ինչ վերջացած չէ, մենք հաղթանակ չենք տարել: ԱՄՆ նախագահական յուրաքանչյուր ընտրությունների նախօրեին «ցեղասպանությունը» հետապնդելու է մեզ: Բախտը միշտ չի կարող ժպտալ:

Չենք կարող ամեն անգամ խոսել սպառնալիքներով: Ընդունենք, որ միջազգային զարգացումները մեր օգտին աշխատեցին. Միջին Արևելքում բախումներ են, մեջտեղ եկավ Սադդամ Հուսեյնի գործոնը, Սպիտակ տունը ատամներ ցույց տվեց Կոնգրեսին:

Այս ամենը մեզ համար լավ դաս եղավ:

Միայն պատկերացրեք. Թուրքիան մեղադրվում է ցեղասպանություն իրականացնելու մեջ, որը չի արել: Առավել ևս՝ ամբողջ աշխարհն է հավատում հայերի ցեղասպանությանը: Թուրքերին կհամարեն մարդասպան, եղեռնագործ ժողովուրդ:

Չխաբենք ինքներս մեզ:

Արևմտյան զանգվածային լրատվական միջոցների, քաղաքական գործիչների թե երիտասարդ սերնդի, թե տարեցների մեծ մասը հավատում է, որ հայերը թուրքերի կողմից իրականացված ցեղասպանության զոհեր են: Վերջին 35 տարիներին հայերը հետապնդում են ցեղասպանության միջազգային ճանաչումը: Այս հարցը նրանք լրջորեն հետապնդում են 1965թ.-ից: Ու երբեք չեն հոգնի:

Աշխարհի ուշադրություն գրավելու համար հայերը սկսեցին թուրք դիվանագետների սպանել: Հարյուրավոր երկրների գրադարանները լցված են շուրջ 26 հազար գրքերով, ամսագրերով և փաստաթղթերով, որոնցում պատմվում է «ցեղասպանության» մասին: Հայերը դպրոցական ձեռնարկներում և պատմության դասագրքերում ներառել են «ցեղասպանություն» բաժինը:

Իսկ Թուրքիան միայն կողքից է նայում:

Հայերը փորձում են տեղի ունեցած կոտորածներին ցեղասպանության որակումը տալ: Թուրքերն ասում են ցեղասպանություն չի իրագործվել, հայկական կոտորածներ չեն եղել: Բայց հնարավո՞ր էր կոտորածներն իրականացնել առանց Թուրքիայի իմացության: Ո՛չ, դրանք իրագործվել են օրը ցերեկով, և Թուրքիան հետևում էր դրանց: Ամենավատն այն է, որ Թուրքիան այդ ամենը թաքցրել է թուրք ժողովրդից, բոլորից:

Թուրքական հասարակությունը, իմ սերունդը, հայկական պատահարների մասին իմացավ միայն այն ժամանակ, երբ 1975թ.-ից հայերը սկսեցին թուրք դիվանագետների սպանել: Սկզբում մենք հարցնում էինք մեզ՝ ինչո՞ւ են նրանք մեր դիվանագետներին սպա-

նում: Հետո հասկացանք: Սպանում էին, որովհետև Թուրքիայի պաշտոնական, պետական գաղափարախոսությունը թույլ չէր տալիս մեզ, իմ սերնդին տեղյակ լինել հայկական պատահարներին: Իմ սերունդը հասկացավ, որ մեր նախնիները ստոր արարքներ են գործել հայերի նկատմամբ: Բայց ոչ ցեղասպանություն: Մեր հայ հայրենակիցների հանդեպ մեր նախնիների արարքները թուրք ժողովրդին հպարտություն չեն բերում: Բայց հայերն էլ են մեզ վիրավորել, թուրքերի արյուն էլ է հեղվել: Ամեն ինչ միակողմանի չի եղել: Անատոլիայի մի անկյունում փոքր պատերազմ է եղել: Հայերը չեն մոռացել ցավը, որ պատահել է: Մենք՝ թուրքերս փորձում ենք դա մոռացնել տալ:

Եկեք դադարենք հայերին և ամերիկացիներին մեղադրել: Չերբազատվենք պատրանքներից, թե Թուրքիայի հարևանները վատն են: Բայց այնպես անենք, որ հայկական պատահարները չորակվեն ցեղասպանություն: Պետք չէ այն ամենն անել սպառնալիքներով: Պետք է մարդկանց համոզել, հասկացնել»:

Թուրք մտավորականությունը բազմակարծիք է հայկական բանաձևի կապակցությամբ, սակայն հիմնականում նրա դիրքորոշումը և հակումները սերտորեն առնչվում են հօգուտ պաշտոնական շրջանների արտահայտած տեսակետների:

Թեև ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը չքննարկեց հայկական բանաձևը, թուրքական մամուլում կարելի է դեռևս կարդալ դրան վերաբերող բազմաթիվ վերլուծություններ, հրապարակախոսական հոդվածներ, սպառնալիքներ ԱՄՆ-ի հասցեին: Պաշտոնական Անկարան, անկասկած, Հայոց ցեղասպանության ճանաչման հավանականությունից մտահոգված է:

Պրոֆեսոր Հուսեյն Բագչին գրում է. «Հայկական սփյուռքը պարտվեց ճակատամարտում, բայց ոչ պատերազմում: Միամտություն է կարծել, թե սփյուռքը կհրաժարվի իր երազանքից: Թուրքիան հզոր է, քան երբևիցե, հայերը պիտի հասկանան, որ ԱՄՆ-ի և Թուրքիայի շահերը լիովին համընկնում են: Քլինթոնից հետո ով էլ լինի ԱՄՆ նախագահ, միևնույն է՝ հայերը հաջողության չեն հասնի: Եթե հայկական սփյուռքը ցանկանում է Հայաստանի համար լավ բան անել, թող այնպես չանի, որ ջարդուփշուր լինի Թուրքիայի՝ Հայաստանի նկատմամբ ունեցած բարյացակամությունը: Հայաստանը և Թուրքիան կարիք ունեն բարիդրացիական հարաբերությունների, թող հայկական սփյուռքը ստվեր չգցի հայ-թուրքական հարաբերությունների վրա»:

Թուրք պրոֆեսորը նախ մի քանի նախադասությամբ անդրադառնում է Քլինթոնի, Օլբրայթի, Քոհենի, Շելթոնի խիզախությա-

նը, ապա պնդելով, որ ցեղասպանություն չի եղել, Ներկայացուցիչների պալատի խոսնակ Հասթերթին խորհուրդ է տալիս այցելել Թուրքիա. «Միգուցե գա և թուրք պաշտոնյաներից ու ակադեմիական շրջանակներից ստանա տեղեկություններ: Հասթերթին օգտակար խորհուրդներ կարող են տալ Պոլսի հայ պատրիարք Մութաֆյանը և ծագումով հայ Թուրքիայի քաղաքացիները»: Բազչին, այնուամենայնիվ, կարծում է, որ «հայկական սփյուռքի նախաձեռնությունները չեն վատթարացնի հայ-թուրքական հարաբերությունները»:

«Թրքիշ դեյլի նյուզ» օրաթերթը առաջնորդող հոդվածում գրում է. «Թուրք մտավորականության լայն շրջանակներում ակտիվ քննարկման նյութ է դարձել մի թեմա, որի մասին թուրք ժողովուրդը ոչ տեղյակ էր, ոչ լսել էր: Խոսքը այսպես կոչված հայոց ցեղասպանության և առաջին աշխարհամարտի տարիների իրադարձությունների մասին է: Թուրքերը հավատում են, և պատմական փաստերը ցույց են տալիս, որ հայերը միացել են Արևելյան Թուրքիա ներխուժած ռուսական բանակին, կազմակերպել մահմեդական բնակչության կոտորածներ: Առաջինը հայերն են սկսել կոտորածները, ապա Ստամբուլի կառավարությունը, որպեսզի կարողանա հայերին հեռու պահել ռուսական զորքերի հետ համագործակցությունից, ստիպված նրանց քշել է Սիրիայի հարավ-արևելյան շրջաններ: Ահա այս ստիպողական արտագաղթի ժամանակ է, որ շատ հայեր սպանվեցին»:

Առաջնորդողում գրվում է, որ թուրք մտավորականներն այս հարցերի շուրջ բանավեճեր չէին սկսի, եթե ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում լուրջ քննարկումներ չծավալվեին: «Թրքիշ դեյլի նյուզը» ավելացնում է. «Անցյալ տարի նմանատիպ քննարկումներ էին ծավալվել Ֆրանսիայի խորհրդարանում, Իտալիան է մտադիր նույնն անել: Նույնիսկ Միջին Ասելքի մեր բարեկամ Իսրայելն է խոսում դարասկզբին հայերի հետ կատարված դեպքերի մասին, իսկ կառավարության երկու նախարարներ ուղղակի մեզ մեղադրեցին, որ առաջին աշխարհամարտի տարիներին հազարավոր հայեր ենք կոտորել»:

ԱՄՆ-ում Թուրքիայի նախկին դեսպան Ն. Կանդեմիրը կտրականապես ժխտում է Հայոց ցեղասպանությունը. «Ես համաձայն չեմ որոշ հեղինակների պնդումներին, որ դարասկզբին հայերը հալածանքների են ենթարկվել: Պատմական փաստերին պետք է ծանոթ լինեն բոլոր թուրքերը: Թուրքիան պետք է նախաձեռնող լինի. աշխարհի լավագույն պատմաբաններին պիտի հնարավորություն տրվի ծանոթանալու 20-րդ դարասկզբի փաստաթղթերին: Սփյուռքահայերից պրծում չկա: Մենք պետք է դիմենք հակահարվածների»:

Հարցին այլ տեսանկյունից է մոտենում միջազգային հարաբերությունների մասնագետ, պրոֆեսոր Իհսան Դաղին. «Կարծում եմ՝ քննարկումներ պետք են: Պետք է հասկանանք, թե ինչպես են մեր երկրի ներքին հարցերը խոչընդոտում արտաքին քաղաքականությանը: Ոչ միայն Հայկական հարցը: Պիտի քննարկումներ ծավալել Կիպրոսի, մեր երկրում մարդու իրավունքների հարցերի շուրջ»:

Իսկ ահա ռուս ազգայնական Վլադիմիր Ժիրինովսկին, որ հայտնի է իր կտրուկ հայտարարություններով (ինչպես՝ «պետք է զինել քրդերին՝ ընդդեմ Թուրքիայի», «քառատել Վրաստանը», «օրակարգի հարց դարձնել Կարսի, Սևրի պայմանագրերը» և այլն), երեկ ՌԴ Պետդումայում Ռուսաստանի շահերին դավաճանական է որակել վարչապետ Կասյանովի օրերս Անկարայում ստորագրած համաձայնագրերը: Ժիրինովսկին Պետդումայի միջազգային հարցերով հանձնաժողովին առաջարկել է ստուգել ստորագրված համաձայնագրերի հիմնավորվածությունը:[8]

ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի խոսնակ Դենիս Հասթերթը Ցեղասպանության օրինագծի տապալման առնչությամբ հանդես եկավ հայտարարությամբ, որում մասնավորապես ասվում է. «Տարեսկզբին Ջեյմս Ռոգանի խնդրանքով ես հանդիպեցի ամերիկահայ համայնքի ղեկավարության հետ և հայտարարեցի Ցեղասպանության օրինագիծը արտաքին հարաբերությունների կոմիտեում և, հաջողության դեպքում, նաև Ներկայացուցիչների պալատում քվեարկության մասին: Ես և կոնգրեսական Ռոգանը, չնայած Քլինթոնի վարչակազմի ուժեղ հակազդեցությանը, տենդագին աշխատեցինք օրինագիծը կոմիտեում հաստատելու ուղղությամբ: Ռոգանի կազմակերպչական ունակության և վճռական ջանքերի շնորհիվ հաջողվեց այն հաստատել կոմիտեում: Կոնգրեսական Ռոգանի ջանքերի շնորհիվ էր նաև, որ ամերիկացի ժողովուրդը հնարավորություն ստացավ մոտիկից ծանոթանալ 1915 թվականի ողբերգական դեպքերին: Քիչ թվով օրինագծեր են նման արձագանք ունեցել: Ես անձամբ պաշտպանում էի օրինագիծը և այն դրեցի անցած շաբաթվա օրակարգում: Ու վստահ էի, որ օրինագծին կողմ կքվեարկի ներկայացուցիչների մեծամասնությունը: Չնայած Քլինթոնի վարչակազմի շարունակական հակազդեցությանը՝ ես մտադիր եմ առաջ շարժվել: Ցավոք, Մերձավոր Արևելքում վերջին բռնությունները լուրջ մտահոգությունների տեղիք տվեցին մեր ազգային անվտանգության տեսանկյունից: Վտանգված էր ԱՄՆ քաղաքացիների և զինվորականնե-

[8] «Հայկական սփյուռքը պարտվեց ճակատամարտում, բայց ոչ պատերազմում», «Ազգ», 27 հոկտեմբերի, 2000թ., էջ 5:

րի անվտանգությունը: Ես այլընտրանք չունեի, քան ընդունել Քլինթոնի պահանջը և հանել օրինագիծը օրակարգից: Մենք բոլորս աղոթում ենք, որ Մերձավոր Արևելքի ճգնաժամն ավարտվի: Դրանից հետո Ներկայացուցիչների պալատն անկասկած կվերադառնա օրինագծի քննարկմանը, եթե Հայաստանի և Թուրքիայի կառավարությունները չգտնեն փոխհամաձայնության ուղի այդ տարիներին կատարվածի շուրջ ճշմարտությունը վերհանելու համար: Ես և կոնգրեսական Ռոգանը խստորեն պահանջում ենք պետքարտուղարությունից համագործակցել Թուրքիայի և Հայաստանի կառավարությունների հետ, որպեսզի ճշմարտությունը հայտնաբերելու համար իրականացվի համապարփակ և արդարացի հետաքննություն: Ես վստահ եմ, որ կոնգրեսական Ռոգանը կշարունակի իր արդյունավետ պայքարը ամերիկահայության անունից, երբ իր աշխատանքները սկսի ԱՄՆ 107-րդ Կոնգրեսը»:

ԱՄՆ կոնգրեսական, հանրապետական Ջեյմս Ռոգանը հայտարարել է, որ շարունակելու է պայքարը Հայոց ցեղասպանության օրինագծի հաստատման համար: Նշելով, որ Ներկայացուցիչների պալատի խոսնակ Դենիս Հասթերթի կողմից օրինագծի տապալման քայլն ունի քաղաքական տրամաբանություն՝ նա ավելացրել է, թե «որքան շատ եմ ես մտածում այս մասին, այնքան ավելի եմ զայրույթով լցվում Քլինթոնի վարչակազմի նկատմամբ»: Ըստ Ռոգանի, Քլինթոնը խաղաց Հասթերթի հայրենասիրական զգացումների վրա՝ հայտարարելով, որ եթե օրինագիծը հաստատվեր, նրա ձեռքերին կծանրանար ամերիկացի ծառայողական անձնակազմի արյունը: Դեմոկրատական Ադամ Շիֆն իր ելույթում մեկնաբանելով Ռոգանի հայտարարությունն, ասել է, որ կիսում է Ռոգանի զայրույթը: «Դա իսկապես մեծ դժբախտություն է: Ջիմը 4 տարի սպասել էր հայկական օրինագիծը քվեարկության դնելուն», ասել է Շիֆը:

Թուրքական «Աքշամ» թերթի տեղեկացմամբ, ԱՄՆ-ում Թուրքիայի շահերի պաշտպանության համար միջնորդող Լիվինգսթոն-Սոլոմոն-Սոլարց ձեռնարկությունների խմբի նախագահ Բոբ Լիվինգսթոնը հայտարարել է, որ հանրապետական թեկնածու Ջորջ Բուշը նախագահական ընտրություններում հաղթանակ տանելու դեպքում կաշխատի հայ և թուրք ժողովուրդներին հաշտեցնելու ուղղությամբ: Թերթը նաև գրում է, որ հրեական լոբբին մեծ ներդրում ունեցավ օրինագծի ձախողման գործում: Այդ լոբբիի անդամներից մեկը՝ Ջերալդ Սոլոմոնը, ըստ թուրքական թերթի, Անկարայից ամեն տարի ստանում է շուրջ 2,5 մլն. ԱՄՆ դոլար Թուրքիայի լոբբինգի իրականացման համար:

Թուրքական «Հյուրիեթ» թերթը գրում է, որ Թուրքիայի վարչապետ Էջևիթը շնորհակալություն է հայտնել նախագահ Քլինթոնին ցեղասպանության օրինագիծը տապալելու համար: Կառավարության շենքում կայացած մամլո ասուլիսում նա մասնավորապես նշել է. «Մեծարգո նախագահ Քլինթոնը հատկապես մեծ ներդրում ունեցավ օրինագծի օրակարգից հանելու գործում: Նա գործընթացի սկզբից էլ մեծ վճռականությամբ պայքարում էր օրինագծի դեմ»: Ըստ Էջևիթի, օրինագծի ձախողման գործում մեծ ներդրում ունեցան նաև ԱՄՆ պաշտպանության նախարարը, գլխավոր շտաբի պետը, պետքարտուղարը, նախկին նախարարները, Թուրքիայում ԱՄՆ դեսպան Բաքի Իլքինը: Ուշագրավ է, որ Էջևիթը շնորհակալություն է հայտնում նաև Թուրքիայի Հայոց պատրիարք Մեսրոպ Մութաֆյանին: Անդրադառնալով Հայաստանի հետ հարաբերությունների խնդրին՝ Էջևիթը ասել է. «Հայաստանի հանդեպ մեր դիրքորոշումը էական փոփոխություն չի կրում: Հայաստանի հետ հարաբերություններ զարգացնելու համար նախապայման կա. առաջինը՝ հրաժարվել այս պատմականորեն սխալ շահարկումից, և երկրորդ՝ համաձայնության հասնել Ադրբեջանի հետ: Դրանից առավել շատ Հայաստանն է շահելու»: Էջևիթը կրկնել է այն միտքը, թե Թուրքիան Հայաստանի համար կարող է դեպի աշխարհ բացվող մի դուռ հանդիսանալ: «Իմացած եղեք, որ Թուրքիայի պատմության ընթացքում երբևէ ցեղասպանություն չի եղել», - եզրափակել է Էջևիթը:

«Աքշամ» թերթը, վկայակոչելով Վաշինգտոնում գտնվող Ռազմավարական հետազոտությունների կենտրոնը (CSIS), գրում է, որ Կոնգրեսի արձակուրդից հետո հավանական է հայոց ցեղասպանության օրինագծի նոր առաջքաշում: Կենտրոնի փորձագետ Դևիդ Մաք Քիբիի պատրաստած զեկուցագրում նշվում է, որ արձակուրդից հետո մի խումբ կոնգրեսականներ մտադիր են շարունակել պայքարը դրա հաստատման համար: «Օրինագիծը կարող է բացասական ազդեցություն ունենալ Պարսից ծոցում, Բալկաններում և Կովկասում ԱՄՆ ռազմավարական շահերի համար: Օրինագիծը Դամոկլյան սրի պես ճոճվում է ամերիկյան շահերի գլխին», - ասված է Մաք Քիբիի զեկուցագրում: Նշվում է նաև, որ այն վիրավորում է թուրքերի ազգային արժանապատվությունը: Ըստ «Աքշամի», օրինագիծը կարող է գլխացավանք դառնալ թուրք-ամերիկյան հարաբերությունների համար:

2000թ. նոյեմբերի 2-ին Երևանում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության նախագահ Ռ. Քոչարյանի բացառիկ հարցազրույցը Ազգային հեռուստատեսությանը, որտեղ նրան տրվեցին ներ-

քոհիշյալ հարցերը:

«Պարոն նախագահ, մեկ թեմա էլ կա, որը բավականին մեծ քննարկումների նյութ է դարձել վերջին շրջանում: Խոսքը վերաբերում է հայոց ցեղասպանության ուղղակի, թե անուղղակի ճանաչման «հայկական» որակված բանաձևին:

Միացյալ Նահանգների Կոնգրեսի համապատասխան հանձնաժողովում այն հաջողությամբ քննարկվելուց հետո շատ ռեալ հեռանկար ուներ Ներկայացուցիչների տանը քվեարկվելու և դրական արդյունք ունենալու, սակայն, ի վերջո, ամերիկյան գործադիր իշխանության ուղղակի ճնշման, թե ազդեցության տակ, հանվեց օրակարգից: Գնահատվեց, որ նաև էական դեր է խաղացել Թուրքիայի իշխանությունների շատ ակտիվ հակազդեցությունը և պարբերաբար խնդրանքները ԱՄՆ ղեկավարությանը: Եղան գնահատականներ, որ հայկական լոբբիի, հայաստանյան իշխանությունների պարտությունն է, որոնք փորձում էին անցկացնել բանաձևը, սակայն չստացվեց: Դուք մասնակցո՞ւմ էիք ընդհանրապես այդ բանաձևի անցկացմանը և պարտություն կրեցի՞ք, թե՞ լոբբին պարտություն կրեց: Թե՞ ամեն դեպքում դա ինչ-որ դրական զարգացում էր:

- Չեմ գտնում, որ կարելի է պարտության մասին խոսել: Դա մեծ նվաճում էր առաջին հերթին այն առումով, որ այսպիսի մակարդակով ցեղասպանության հարց երբեք չի քննարկվել Միացյալ Նահանգներում, այսպիսի մակարդակի չի հասցվել Կոնգրեսում: Երկրորդը, այսպիսի լայն քննարկումներ ցեղասպանության հարցը երբեք չի ունեցել և՛ Միացյալ Նահանգներում, և՛ ընդհանրապես աշխարհի լրատվական միջոցներում: Կարծում եմ, որ սա նաև թուրքական կողմի այդպիսի կոշտ արձագանքի շնորհիվ էր: Այս ամենն ունեցավ նաև դրական ազդեցություն: Երրորդը, որ ես շատ եմ կարևորում, այն է, որ հենց Թուրքիայի ներսում հարցը նման լայն քննարկումներ երբեք չի ունեցել: Պետք է հաշվի առնել, որ շատ երկար տարիներ հակաքարոզչություն էր գնում այս հարցի վերաբերյալ, և մի քանի սերունդների մոտ ուղղակի ձևավորվել են այլ կարգի պատկերացումներ: Համոզված եմ, որ քննարկումներն այդ առումով բավական դրական ազդեցություն են ունենալու: Ի վերջո, Թուրքիան մեր հարևանն է, մենք պետք է ձգտենք նաև հեռանկարում լավ հարաբերություններ ունենալ Թուրքիայի հետ: Եվ վերջինը, ըստ էության, ոչ ոք չէր կասկածում, որ հարցը կընդունվի: Հարցը չքվեարկվեց, պատճառաբանվեց զուտ տեխնիկական պատճառներով: Թերևս բավական լուրջ հաղթանակ է: Նույնպես պարզ չէ, թե մենք շատ ավելի դրակա՞ն արդյունքներ ունեցանք այս վիճակով, թե՞ եթե

մեկ-երկու օրվա ընթացքում հանգիստ քվեարկվեր և անցներ: Մեկ-երկու օր գուցե մամուլը սրա մասին կգրեր, որից հետո Հայաստանի և Սփյուռքի մեր ուժերը կաշխատեին այլ երկրներում ցեղասպանությունը ճանաչելու ուղղությամբ: Նվաճում է, անկասկած: Մենք սա պետք է որակենք հայ-թուրքական հարաբերությունների բարելավմանն ուղղված քայլեր: Քանի որ առանց այս հարցի դժվար է պատկերացնել հարաբերությունների ձևավորումը նաև ապագայում:

- Կարծում եմ, պարզ տրամաբանություն է. գործը հասնում է քվեարկությունից հարցը հանելուն, ուրեմն արդեն կասկած չի մնացել, որ քվեարկության ժամանակ հարցն անցնելու է: Դուք ասում եք բարելավմանը նպաստող քայլեր, մյուս կողմից՝ Թուրքիայի այդ կոշտ հակազդեցությունն ուղեկցվեց սպառնալիքներով: Դա էլ նորից քննարկումների նյութ դարձավ, թե ինչքան հեռու կարող է գնալ Թուրքիան ոչ թե սպառնալիքներում, այլ գործողություններում: Դուք իրակա՞ն եք համարում ինչ-որ գործողությունների կիրառում, եթե ասենք, օրինակ, վերականգնվում է բանաձևի քննարկումը Կոնգրեսում և այլ ընթացք է ունենում:

- Աշխարհը փոխվել է: Այսօր դարասկիզբը չէ, և նույն գործելակերպը աշխարհում պատժի է ենթարկվում, բավական խիստ պատժի: Վերջին տարիների պատմության օրինակները մենք արդեն ունենք: Այլ հարց է՝ իսկ ի՞նչ ենք մենք ստացել խուսափելով հարցի քննարկումից, և ի՞նչ ունենք կորցնելու: Դիվանագիտական հարաբերություններ չունենք և Թուրքիայի կողմից շարունակվում է Հայաստանի շրջափակումը: Ավելին, Թուրքիան նույնիսկ հարցի վերաբերյալ մեզ այլընտրանքային քայլերի հնարավորություն ևս չի տվել:

- Գալով «իսկ ի՞նչ ունենք շահելու» հարցին, տեսակետներ հնչեցին, որ սա Ձեր կողմից ընդամենը կազմակերպված քարոզչական արշավ էր Ձեր վարկանիշը բարձրացնելու ուղղությամբ, և որ միայն բացասական արդյունքների կարող է տանել: Թանսու Չիլլերը 30 հազար հայաստանցիներին արտաքսելու կոչեր էր անում, չնայած, հենց երկրի ներսում հակազդեցություն ստացավ նրա հայտարարությունը: Ի վերջո, ի՞նչ է տալու ցեղասպանության ճանաչման գործընթացը: Արտգործնախարարությունը հայտարարեց, որ դա մնում է արտաքին քաղաքականության օրակարգում: Այն զուտ բարոյական նշանակությո՞ւն ունի, թե՞ նորից հարցադրումներ են լինում ավելի հեռուն գնալու՝ ինչ-որ նյութական պահանջներ, տարածքների վերադարձի պահանջ: Ի՞նչ զարգացումներ են լինելու:

- Ընդհանրապես, կյանքում ևս, եթե դուրս գանք միջպետական հարաբերություններից, բոլոր հանցագործությունները չեն, որոնց

նկատմամբ պատիժը ենթադրում է նյութական վնասի հատուցում: Օրինակ, սպանության կամ բռնաբարության դեպքում ի՞նչ նյութական փոխհատուցում: Բայց երբ անձը կամ ժողովուրդը պայքարում է իր իրավունքների, իր արժանապատվության համար, ապա տվյալ անձի և ժողովրդի նկատմամբ հարգանք են տածում նաև ուրիշները: Այդ հարգանքի գինը պետք է ճիշտ գնահատել: Համոզված եմ, որ հարցը գին ունի և բավական մեծ գին: Կյանքում մենք գիտենք, թե մարդիկ ինչպես են վերաբերվում այն անձերին, որոնք իրենց արժանապատվությունը վաճառում են քրեական գործերը կասեցնելու կամ նման այլ կարգի գործարքների համար: Ես չեմ ուզում, որ մեր ազգը հայտնվի նման վիճակում: Ի՞նչ ենք մենք ստանալու. մեկ անգամ ևս կրկնեմ, որ նպատակը հարաբերությունները վատթարացնելը չէ: Նպատակը, առաջին հերթին, հարցի նկատմամբ ուշադրություն գրավելն է: Կարող է ամբողջ աշխարհը ճանաչել ցեղասպանության փաստը, բայց շատ կարևոր է, որ մենք հենց Թուրքիայի հետ երկխոսություն սկսենք հարցի շուրջ: Շատ կարևոր է նաև, որ թուրք ժողովուրդը ճշմարտությունն իմանա այդ տարիների իրադարձությունների մասին: Հեռանկարի, երկարատև նպատակների առումով, համոզված եմ, որ ինչ անում ենք ճիշտ ենք անում: Կրկնում եմ, չենք անում թշնամի ձեռք բերելու համար: Ճիշտ հակառակը՝ փորձում ենք միգուցե այս ճանապարհով վերացնել այն թշնամությունը, որ ձևավորված է և այսօր արտահայտվում է նաև միջպետական հարաբերություններում՝ Թուրքիայի կողմից շրջափակումը շարունակելով, Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը մերժելով»[9]:

[9] «Հայաստանի Հանրապետություն», 3 դեկտեմբերի, 2000թ., թիվ 202:

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋև ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Թուրքական «Հյուրիեթ» և «Սաբահ» թերթերում հոկտեմբերի 28-ին և հոկտեմբերի 29-ին լույս տեսած հոդվածներից իմանում ենք, որ Թուրքիայի Ազգային Մեծ ժողովը (ՔԱՄԺ), որոշում է կայացրել Գիտական Խորհուրդ հիմնել Հայոց ցեղասպանության պնդումները ուսումնասիրելու նպատակով և անաչառություն ապահովելու համար գիտնական է ուղարկելու Հայաստան: Մարդիկ, որոնք ներկայացնելու են Գիտական Խորհուրդը, հայկական պաշտոնական ատյաններին ասելու են, թե «եկեք տեսնենք ցեղասպանության հիմքը հանդիսացող ձեր կողմից առաջ քաշվող փաստարկները»: ԹԱՄԺ-ի նախագահ Օմեր Իզգին հատուկ որոշում է կայացրել Գիտական Խորհրդի կողմից ցեղասպանության հիմնավորումները անկողմնակալ ուսումնասիրելու համար: Կայացված որոշումը հոկտեմբերի 27-ին ընդունել է նաև Ազգային ժողովի Գերագույն Խորհուրդը:

Գերագույն Խորհրդի անդամները հանդես են եկել վերոհիշյալ Գիտական Խորհրդի աշխատանքային համակարգին վերաբերող առաջարկություններով: Խորհրդի հիմնադրման, տեղացի և օտարերկրյա գիտնականներին հրավիրելու և մասնագետների տեսակետները ի մի բերելու լիազորությունները տրվել են Ազգայն ժողովի գլխավոր քարտուղար Վահիթ Էրդեմին, որը այս պաշտոնը ստանձնելուն պես հանդիպումներ է ունեցել չորս գիտնականների հետ, որոնցից երկուսը Բիլքենթ համալսարանից են, մեկը ԱՄՆ-ից է, իսկ մյուսը Ֆրանսիայից:

Ազգային ժողովի ֆինանսավորմամբ հիմնադրվելիք Գիտական Խորհուրդը բաղկացած է լինելու յոթ հոգուց, ուր թուրք գիտնականների կողքին լինելու են նաև օտարերկրացիներ: Ազգային ժողովը անկողմնակալությունը ապահովելու համար հրավիրելու է նաև հայազգի գիտնական: Գիտխորհուրդը օսմանյան արխիվներից բացի հավաքագրելու է նաև այդ թեմայով նախկինում ուսումնասիրություններ ծավալած գիտնականների հետազոտությունները և հոդվածները: Քննվելու են նախկինում ցեղասպանության պնդումները մեջ բերող գիտնականների աշխատությունները և ի հայտ են բերվելու դրանց հակաթեզերը: Խորհուրդն իր աշխատանքներն ամբողջացնելու է մինչև Հայոց ցեղասպանության հիշատակի օրը՝ 2001թ. ապրիլի 24-ը: Թուրքերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով հրապարակվելիք գիտական աշխատությունները Թուրքիայի Արտաքին գործերի նախարարության միջոցով ուղարկվելու են խորհրդարան-

ներ և օգտագործվելու են լոբբիստական աշխատանքներում:

Հոկտեմբերի 27-ին գումարվեց Թուրքիայի Ազգային Անվտանգության Խորհրդի (ԱԱԽ) հերթական նիստը, որը տևել էր չորս ու կես ժամ: Քննարկվել էր նաև Հայոց ցեղասպանության օրինագիծը ԱՄՆ-ի Կոնգրեսի օրակարգից հանելուց հետո ստեղծված իրավիճակը: ԱԱԽ-ի նիստի հայտարարության մեջ նշվում է, որ «Նիստի ընթացքում գնահատականներ են տրվել այսպես կոչված Հայոց ցեղասպանության պնդումների հետ կապված վերջին զարգացումներին»: ԱԱԽ-ում, ուր նշվել է, որ ապագայում ևս օրակարգ են բարձրացվելու այսպես կոչված ցեղասպանության նմանատիպ օրինագծեր և, որ պետք է պատրաստ լինել դրան, արտգործնախարար Իսմայիլ Ջեմը տեղեկություններ է հաղորդել այդ ուղղությամբ այսուհետ կազմակերպվող գործողությունների ծրագրի վերաբերյալ: Նշվել է, որ այս շրջանակներում Թուրքիան, որը լոբբիստական գործողություն է ծավալելու ոչ միայն ԱՄՆ-ում, այլև Եվրոպայում, դիվանագիտական, քաղաքական և ակադեմիական բազայի հիման վրա մի շարք միջոցառումներ է իրականացնելու:

Թուրքիայի Գլխավոր Սպայակույտը Հայոց ցեղասպանության պնդումները որակելով որպես «արհեստական խնդիր»՝ խստորեն քննադատել է այն և այդ կապակցությամբ ասել է. «Հայկական հարցը, որն առաջ է քաշվել Օսմանյան շրջանում այն երկրների կողմից, որոնք նպատակ էին հետապնդում, մասնատելով այդ կայսրությունը հասնել իրենց շահերին, այսօր իրենց կամքը Թուրքիային թելադրելու իրենց անունները փոխած նույն շրջանակների ցանկություններով և տարածաշրջանում ուժեղ Թուրքիայի տեսնելու նրանց դժկամությամբ պայմանավորված տարբեր ուղղություններով միասին համառորեն հետապնդվող արհեստական խնդիր է»:

Գլխավոր Սպայակույտը ինտերնետում տեղադրված իր սայթի միջոցով թուրքերենով և անգլերենով «Հայկական հարց» խորագրի տակ հայտարարություն է սփռել, որն ամբողջական ձևով գնահատում է այսպես կոչված ցեղասպանության պնդումների դեմ հակազդեցությունները հետևյալ կերպ ներկայացնելով. «Պատմության ընթացքում անհամար գաղթի և տեղահանումների ենթարկված հայերը դրանցից ոչ մեկն օրակարգ չդնելով, միայն նպատակ հետապնդելով 1915թ. օսմանցիների կողմից ծայրաստիճան իրողություններից թելադրված հայերի վերաբնակեցումը, այն օրակարգ են դրել որպես ցեղասպանություն, ինչը Թուրքիայի ամբողջականության խախտելուն ուղղված քաղաքականության արդյունք է: Աֆրիկայում և Բալկաններում ընթացող իրական հասկացության մեջ արևմտյան

երկրների ցեղասպանության դիտորդ մնալը, ցեղասպանության տեր կանգնելը, դրա ապացույցն է»:

Հիշեցնելով նշվել է նաև, որ 1960-ականների կեսերից ի վեր Թուրքիայի դեմ սկսված հայկական խմբերի գործողությունները, 1973թ. հետո վերածվել են «հայկական արյունարբու ահաբեկչության»:

Թուրքերը հայերին մեկ անգամ ևս համարեցին նենգ ժողովուրդ: Միաժամանակ փորձ արվեց երևան հանել նրանց «դավաճանական արարքները» Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Այսպիսով, մի ամբողջ ժողովրդի ցեղասպանությանը կամովին տրվեց «դավաճան հայերի նկատմամբ կառավարական անհետաձգելի միջոցառումների» բնույթ:

Թուրքիայի վարչապետ Բյուլենթ Էջևիթի ԱՄՆ-ի նախագահ Քլինթոնին ուղղված նամակում Հայոց ցեղասպանության բանաձևը տապալելու համար իր խորին շնորհակալությունը հայտնելով, մասնավորապես ցեղասպանության ուրացման պարտադրանքն է դնում հայկական իշխանությունների վրա և իր պարտքն է համարում այդ մասին անձամբ տեղեկացնել Քլինթոնին, ասելով. «Իմացած եղեք, Թուրքիայի պատմության ընթացքում երբևէ ցեղասպանություն չի եղել»:

Էջևիթի այս խոսքերը պատահական չեն: Կրկին անգամ հիշեցնենք, որ Քլինթոնը Ներկայացուցիչների պալատի խոսնակ Դենիս Հասթերթին հասցեագրված ուղերձում Հայոց ցեղասպանության բանաձևը օրակարգից հանելու իր պահանջը հիմնավորելիս կարծիք էր հայտնել. «Վերջին հաշվով այս ցավոտ խնդիրը կարող է լուծվել միայն այն դեպքում, երբ երկու կողմերը միասին քննեն իրենց անցյալը»:

Սա հայ-թուրքական երկխոսության յուրահատուկ կոչ էր: Համանման կոչ է արվել նաև Հասթերթի կողմից ցեղասպանության օրինագծի տապալման առնչությամբ հայտարարության մեջ:

Եթե Քլինթոնն ու Հասթերթը կոչ են արել, ապա Հայաստանում ԱՄՆ-ի դեսպան Մայքլ Լեմոնը ՀՌԱԿ պատվիրակությանն ընդունելիս հատուկ ուշադրություն է դարձրել հայ-թուրքական երկխոսությանը և մատնանշել է դրա անհրաժեշտությունը:

Նկատի ունենալով, որ Թուրքիայի ընդգծված հակահայկական քաղաքականությունն անտեսվում է ԱՄՆ-ի կողմից, հայտարարության դրսևորումներով նմանապես, ուստի երկխոսության կոչերն ակամա հանգում են Թուրքիայի պահանջների հետ համակերպվելու մտքին, թերևս դրանով էլ ճնշման հավելյալ միջոց են դառնում Հա-

յաստանի համար: Թուրքիայի սպառնալիքները ԱՄՆ-ի պահանջների հետ համադրելու դեպքում Հայաստանն ակամա կանգնում է երկխոսություն սկսելու պարտավորության առջև: Երկխոսության համար անհրաժեշտ է, որպեսզի Թուրքիան արմատապես վերանայի Հայաստանի նկատմամբ իր դիրքորոշումը, իսկ ԱՄՆ-ն իր կոչերում առաջնորդվի պետությունների իրավահավասարության սկզբունքով:

Թուրքիայի վարչապետի կոչը հայոց ցեղասպանության հարցի շուրջը երկխոսություն սկսելու մասին բացառիկ դեպք է: Մինչև օրս Թուրքիայի իշխանությունները նման հայտարարությամբ ոչ մի անգամ հանդես չէին եկել: Հավանաբար նրանց համար ուղենիշ դարձան դեռևս մի քանի տարի առաջ Թուրքիայի նախկին նախագահ Դեմիրելի և նրան կրկնող նախագահ Սեզերի հայտարարությունները այն մասին, որ հարցի քննարկումը պատմաբանների գործն է և ոչ քաղաքագետների:

Թուրքիայի կառավարությունը որոշում է կայացրել հրապարակել Հայոց ցեղասպանության վերաբերյալ արխիվային փաստաթղթերը, պատմաբանների առջև բացել Օսմանյան արխիվների դռները, ուսումնասիրել ցեղասպանության և թուրք-հայկական հարաբերությունների պատմությունը:

Թուրքական «Ակսամ» օրաթերթի նոյեմբերի 1-ի հաղորդագրությունը տեղյակ է պահում, որ Թուրքիան այսպես կոչված հայկական ցեղասպանության պնդումները ի չիք դարձնելու համար պատրաստել է 10 կետից բաղկացած գործողությունների ծրագիր, որի շրջանակներում հավաքելով այդ պնդումները հերքող տեղեկություններ ու փաստաթղթեր ուղարկելու է Եվրոպայի և ԱՄՆ-ի գրադարաններ: Իսկ հայերի կողմից գործած կոտորածները ցուցադրվելու են մի ապշեցուցիչ ֆիլմով: Խնդրո առարկա գործողությունների ծրագիրը պատրաստվել է Թուրքիայի համապատասխան նախարարությունների, Պետական արխիվների գլխավոր վարչության, համալսարանների և տարբեր հետազոտական կենտրոնների շնորհիվ: Այդ ծրագրի առաջին փուլում նախատեսվում է Թուրքիայում գտնվող օտարերկրյա դեսպանների մասնակցությամբ համաժողով կազմակերպել ներկայացնելու համար ցեղասպանության պնդումների անհիմն լինելը: Օտարերկրյան պատմաբանների և վերոհիշյալ պնդումները հերքող տեսակետները ուղարկվելու են համապատասխան երկրների համալսարաններ և թերթեր: Շտապ կարգով իրականացվելիք գործողությունների ծրագրի շրջանակներում ներկայացվելու է Թուրքիայում ապրող հայերի կյանքին նվիրված մի գիրք: Հավաքագրելով հայկական կոտորածների և

բռնագաղթի վերաբերյալ տեղեկություններ ու փաստաթղթեր ներառնող հրատարակություններ, կազմվելու է ժողովածու, որը հասանելի կլինի արտասահմանցիների համար: Վերոհիշյալ գրքերն առաքվելու են նաև Եվրոպայի և ԱՄՆ-ի գրադարաններ:

Գործողությունների ծրագրով իրականացվելիք միջոցառումների թվում նախատեսվում են հրատարակել պրոֆ. Սելանի Սոնեյլի կողմից պատրաստվող աշխատությունները, որոնք տեղեկություններ են պարունակում Արևելյան Անատոլիայում հայերի կողմից իրականացված բռնությունների մասին և հասարակության ուշադրությանը ներկայացնել ահաբեկչության զոհերի վերաբերյալ Բիլալ Շամշիրի պատրաստած գիրքը:

Ծրագրում նախատեսվում է նաև թուրքական համալսարանների բաժիններում անցկացնել այսպես կոչված ցեղասպանության պնդումների վերաբերյալ նոր միջոցառումներ, ինչպես նաև ուսումնասիրել Օսմանյան Ռազմական դատարանի արխիվները և ավարտել հայկական գույքի ու գումարների ճակատագրերի վերաբերյալ երկու առանձին աշխատանքներ:

Այսօր արդեն հնչում են բազմաթիվ արձագանքներ հայ և թուրք պատմաբանների երկխոսության ոչ նպատակահարմարության մասին, գտնելով, որ Հայաստանին է պարտադրվում երկխոսության առջև կանգնելու պարտականությունը, այն դեպքում, երբ դեռ վաղուց ապացուցվել է հայոց ցեղասպանության իրողությունը, իսկ Թուրքիան փորձում է շարունակել հակահայկական քաղաքականությունը, առանց փոխելու իր դիրքորոշումը:

Բնականաբար հարց է առաջանում՝ ի՞նչ երկխոսություն Հայաստանի և Թուրքայի միջև կամ ո՞ր հարցի շուրջ:

Թուրքիայում ներկայումս նախապատրաստական մեծ ծավալի աշխատանքներ են տարվում երկխոսությունը իրականացնելու ուղղությամբ: Կանգ չառնելով ֆինանսական լրացուցիչ ներդրումների առջև, Թուրքիայի կառավարությունը փորձում է հակաքարոզչության համար ստեղծել նյութատեխնիկական ամուր բազա, այդ գործին մասնակից դարձնելով ոչ միայն իր մասնագետներին, այլև բազմաթիվ թուրքամետ արևմտյան և ամերիկյան գիտնականների:

Թուրքիան պատրաստվում է արշավել միաժամանակ և Հայաստանի, և սփյուռքահայության վրա:

Այսօր երկխոսությունից խուսափել, նշանակում է պարտվել, հրաժարվել պայքարից: Մի բան, որը չի կարող ներել մեր ժողովուրդը: Ընդհակառակը՝ առիթ է ներկայանում կրկին անգամ միջազգային հանրությանը ներկայացնել ճշմարտությունը Հայոց ցեղասպա-

նության մասին: Այդ հարցը ինչպես ութսունհինգ տարի առաջ, այնպես էլ այսօր իր հրատապությունը չի կորցրել:

Նշանակում է պետք է ընդառաջ գնալ թուրքական կողմի առաջարկությանը, որն ի դեպ մինչ այսօր պաշտոնապես չի ներկայացվել:

Վերջին տարիների ընթացքում ինչպես հայտնի է լուրջ տեղաշարժեր կատարվեցին թուրք մտավորականության շրջաններում:

Ֆրանսերենից թուրքերեն թարգմանվեց և Ստամբուլում հրատարակվեց Իվ Տերնոնի գիրքը Հայոց ցեղասպանության մասին, անգլերենից թուրքերեն թարգմանվեց և հրատարակվեց Վահագն Դաղբյանի Հայոց ցեղասպանությանը նվիրված աշխատությունը, գերմաներերից թուրքերեն թարգմանվեց և հրատարակվեց Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրերը» վեպը, հայերենից թարգմանվեցին Լևոն Խաչիկյանի համշենահայերի մասին ուսումնասիրությունը և Մկրտիչ Արմենի «Հեղնար աղբյուրը» վիպակը:

1999-ի և 2000 թվականի ապրիլի 24-ին Երևան ժամանեցին Հայոց ցեղասպանությունը դատապարտող թուրք մտավորականների պատվիրակությունները Ստամբուլից և Գերմանիայից:

Ֆրանկֆուրտում գործող թուրքական «Ընդդեմ ցեղասպանության» միության ակտիվիստների ջանքերով Գերմանիայում բնակվող տասնմեկ հազար թուրքեր ստորագրեցին Թուրքիայի Ազգային ժողովին ուղղված մի նամակի տակ, որով պահանջվում էր ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

Եվ վերջապես այս տարվա հունիսի 17-ին Ֆրանսիայի Սենատի այն դահլիճում, որտեղ օրակարգի քննարկումից հանվեց Ազգային ժողովի կողմից ներկայացված բանաձևի հաստատման հարցը, տեղի ունեցավ հայ և թուրք մտավորականության առաջին երկխոսությունը, որը քիչ դեր չխաղաց թուրքական հասարակայնությանը կրկին ահազանգելու գործում:

Կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ տեղի պետք է ունենա, այն էլ Երևանում մի նոր երկխոսություն:

Հայ պատմաբանները պետք է միասնաբար հանդես գան և ներկայացնեն կուռ մի ծրագիր, որն առաջին անգամ իր մեջ պետք է ներառնի այն բոլոր հիմնահարցերի լուսաբանումը, որոնք կապված են Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության հետ:

Աշխատանքների ծրագիրը պետք է լինի բազմաբովանդակ՝ հարցի ուսումնասիրության համար խիստ ամիրաժեշտ նյութատեխնիկական ներդրումներից սկսած մինչև կադրերի պատրաստման և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը:

Մենք պարտավոր ենք այսօր ամբողջ ուժերով պատշաճ պատասխան ու հակահարված տալ թուրք և ոչ միայն թուրք, այդ թվում արևմտյան քարոզչությանը, գիտական խորությամբ ու փաստարկումներով աշխարհին հասցնել ճշմարտությունը:

Այսօր արդեն հրապարակի վրա եղած փաստաթղթերի հիման վրա անհրաժեշտ է ճշտել՝

ԱՌԱՋԻՆ: Ովքե՞ր էին հայերի ցեղասպանության կազմակերպիչներն ու իրականացնողները, որոնց նախ և առաջ պետք է դատապարտի ներկայիս Թուրքիայի կառավարությունը, որն այսօր իրեն մեղավոր չի համարում ցեղասպանության կազմակերպման գործում:

ԵՐԿՐՈՐԴ: Ինչպիսի՞ իրավաբանական հիմքերի և ներկայումս գործող միջազգային փաստաթղթերի հիման վրա մենք կարող ենք մեղադրանք ներկայացնել ոճրագործության կազմակերպիչներին, ինչպես նաև ժամանակակից Թուրքիային:

ԵՐՐՈՐԴ: Ովքե՞ր կարող են մեղադրանքներ առաջադրել հայոց ցեղասպանության կազմակերպիչներին: Հայաստանի Հանրապետության կառավարությունը, Միավորված Ազգերի Կազմակերպությունը, որի անդամն է Թուրքիայի Հանրապետությունը, Եվրոպայի խորհրդարանը՝ որի անդամության թեկնածուն է այսօր Թուրքիայի Հանրապետությունը և վերջապես որևէ միջազգային դատարան:

ՉՈՐՐՈՐԴ: Ցեղասպանության հետևանքով բարոյական և նյութական ինչպիսի վնասներ են հասցվել հայ ժողովրդին, ինչպիսինը պետք է լինի վնասի փոխհատուցումը և ո՞ւմ է իրավունք վերապահվում ստանալ փոխհատուցումը:

Որպես առաջին, հիմնական պարտականություն, Թուրքիայի Հանրապետությունը չպետք է ձգտի կոծկել ու նենգափոխել ցեղասպանության իրողությունը և համարձակություն ցուցաբերի ընդունել ու հաշվի նստել փաստերի հետ:

Թուրքիայի կողմից հայոց ցեղասպանության ճանաչումը ինքնին նվազագույն հատուցում կհանդիսանա հայ ժողովրդի կրած բարոյական բազմաթիվ անհաշիվ կորուստների դիմաց: Թուրքիայի Հանրապետությունը հաշվի պետք է նստի այն փաստի հետ, որ միջազգային փորձը, որը վերաբերում է կոնկրետ թուրքական պետությանը, հիմնավոր իրավական հիմք է տալիս հաստատելու, որ այս պետության ինքնությունը և անընդհատությունը չի փոխվել երկրի պատմության մեջ եղած փոփոխություններից՝ Օսմանյան կայսրության փլուզումից ի վեր: Փաստորեն Թուրքիայի ոչ տարածքային կո-

ռուստները, ոչ էլ քաղաքական համակարգի վերակազմակերպումը չեն եղել այնպիսին, որ տուժվեր նրա շարունակվող ինքնությունը ազգերի իրավունքի տեսակետից: Հետևաբար չի կարելի համարել, թե թուրք կառավարությունները, որոնք հաջողությամբ հրաժարվել են պատասխանատվությունից, նշանակում է արդարացվել են: Միակ եզրահանգումն այն է, որ պատասխանատվությունը մնում է այն պետության վրա, որը ներկայանում է միջազգային հանրության մեջ, այսինքն իր նախորդների նման ներկայիս Թուրքիայի կառավարությունն էլ պարտավոր է ստանձնել այս պատասխանատվությունը, առանց փորձելու մեջտեղ բերելու պետության ընդհատության պատրվակը՝ պատասխանատվությունից խուսափելու նպատակով: Այդ պատասխանատվությունը նախ և առաջ նշանակում է պարտավորված զգալ պաշտոնապես ճանաչելու կատարված ցեղասպանության իրողությունը և հայ ժողովրդի կրած կորուստները:

Ժամանակակից թուրք պատմաբանները առանձնահատուկ տեղ են հատկացնում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի ներքին կյանքում տեղի ունեցած ահավոր դեպքերի քննությանը, մասնավորապես 1915-ի բռնագաղթի ու զանգվածային ցեղասպանության պատմությանը: Ճգնելով հերքել հայոց ցեղասպանության բուն իսկ փաստը, նրանք դիմում են բազմապիսի մեթոդների՝ կատարվածը կեղծելու, խեղաթյուրելու և նենգափոխելու համար:

Այսօր ևս թուրք պատմագրությունը հանդիսանալով պետական պատմագրություն, իրենից ներկայացնում է «ժխտման պատմագրություն»:

Համոզված կարելի է ասել, որ կեղծարարության մեթոդից հրաժարվելը թույլ կտա թուրք գիտնականներին սկսել երկխոսությունը հայերի հետ, որը կարող է վերածվել իր հերթին երկու կողմերի համար օգտավետ բանավեճի կամ ուղղակի առճակատման: Կասկած չի հարուցում այն իրավիճակի ստեղծումը, որ նման պայմաններում թուրքական կողմը փորձելու է օգտագործել առճակատումը իր պատասխանատվությունը ժխտելու համար, իսկ հայկական կողմը փաստավավերագրական հիմնավորումով փորձելու է իրեն ներկայացնել որպես ցեղասպանության զոհ: Նման առճակատմանը որպես երրորդ կողմ կամ ուղղակի դիտորդներ կփորձեն հանդես գալ աշխարհի տարբեր պետություններ, որոնք ամենայն հավանականությամբ կբացակայեն և չեն մասնակցի երկխոսությանը, սակայն ի ցույց միջազգային հանրությանը, տպավորություն կստեղծեն, թե հավասարապես մասնակցել են ու ներգրավվել այդ վեճին:

Ցեղասպանությունների պատմության նշանավոր գիտակներից մեկը՝ ֆրանսիացի բժիշկ Իվ Տերնոնը թուրք պատմաբանների ամենակարևոր աշխատանքային գործիքը համարում է ռետինը, որը «... ջնջում է այն իրադարձությունները, որոնք նրանց անհանգստացնում են: Մաղով անցկացնում են այն, ինչ մնացել է, հետո հավաքում են այն, ինչը կարող է ծառայել պաշտոնական տեսակետին: Հետո այս ամենի վրա վրձինով ավելացնում են մի նոր շերտ, որպեսզի ստացվի մի պատմական նկար, որը կստեղծի ճշմարտության պատրանք: Հետո մանրիչով անհետացնում են վարկաբեկող փաստերը, մինչև որ դրանք կկարողանան կատարել իրենց մերկացնող դերը կամ էլ վարկաբեկում են դրանք, անվանելով «սուտ», մինչև որ դրանք կկարողանան ծառայել մերկացմանը»:

Նոյեմբերի 15-ին Եվրախորհրդարանն ընդունեց (234 կողմ և 213 դեմ) Թուրքիայի վերաբերյալ հատուկ զեկույց (Turkey's progress towards accession – Թուրքիայի առաջընթացը անդամակցության ճանապարհին), որի մեջ ներառված են Հայաստանին և հայերին վերաբերող երկու կարևոր դրույթ:

Դրույթներից մեկում Եվրախորհրդարանը կոչ է անում Թուրքիայի կառավարությանը երկխոսություն սկսել Հայաստանի հետ՝ նպատակ ունենալով հաստատել բնականոն դիվանագիտական և առևտրատնտեսական հարաբերություններ երկու երկրների միջև, ինչպես նաև վերացնել Թուրքիայի կողմից Հայաստանի ներկա շրջափակումը:

Մյուս դրույթում Եվրախորհրդարանը դիմում է Թուրքիայի կառավարությանը և Թուրքիայի ազգային մեծ ժողովին՝ հորդորելով նորովի աջակցել թուրքական հասարակության կարևոր մասը հանդիսացող հայկական համայնքին և հրապարակայնորեն ճանաչել ցեղասպանությունը, որից այդ փոքրամասնությունը տառապել է արդի թուրքական պետության ստեղծումից առաջ:

Նոյեմբերի 17-ին Իտալիայի խորհրդարանի ստորին պալատը, հաշվի առնելով նոյեմբերի 15-ին Եվրախորհրդարանի ընդունած «Թուրքիայի առաջընթացը Եվրամիությանն անդամակցելու ճանապարհին» (1999թ. ընթացքում) հանձնաժողովի պարբերական զեկույցի վերաբերյալ որոշումը, ձայների ճնշող մեծամասնությամբ որոշում է ընդունել, որը երեք հոդվածով առնչվում է հայ ժողովրդին, այն է.

«Հորդորում է ճանաչել ներկայիս թուրքական հանրապետության հիմնադրումից առաջ հայ փոքրամասնության դեմ իրագործված ցեղասպանությունը» (հոդված 10),

«Բարելավել հարաբերությունները կովկասյան բոլոր

հարևանների հետ» (հոդված 20),

«Կոչ է անում թուրքական կառավարությանը երկխոսություն սկսել Հայաստանի հետ՝ ի նպաստ երկու երկրների միջև բնականոն դիվանագիտական և առևտրատնտեսական հարաբերությունների հաստատմանն ու ներկայումս առկա շրջափակման վերացմանը» (հոդված 21):

Իտալիայի խորհրդարանի ընդունած որոշումը հանձնարարում է կառավարությանը «հետևողականորեն պահպանելով վերոհիշյալ սկզբունքները և հարգելով երկու պետությունների տարածքային ամբողջականությունը, ջանքեր գործադրել հանուն տարածաշրջանի ժողովուրդների և տարբեր փաքրամասնությունների միջև բոլոր հակասությունների լիովին հաղթահարման, խաղաղ գոյակցության և մարդու իրավունքների պաշտպանության՝ Եվրամիությանը Թուրքիայի և ամբողջ տարածաշրջանի լիովին ինտեգրացման հեռանկարով»:

Եվրապարլամենտի հայտնած կարծիքը ամրապնդեց Իտալիայի խորհրդարանը, որի ընդունած բանաձևը գրեթե ամբողջությամբ արտահայտում է Եվրախորհրդարանի զեկույցի հիմնական դրույթները:

Նոյեմբերի 20-ին Եվրամիությունը հետաձգեց Թուրքիայի հետ համագործակցելու մասին որոշման քննարկումը՝ կապված Թուրքիային Եվրամիություն ընդունելու հարցի հետ:

Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Հյուբեր Վեդրինը, «Ռոյթեր» լրատվական գործակալության հաղորդման համաձայն, ասել է, թե ժամանակի սղության պատճառով որոշման քննարկումը հետաձգվում է մինչև դեկտեմբերի 4-ը, այսինքն մինչև Նիսում կայանալիք Եվրամիության անդամ երկրների գագաթաժողովը (դեկտեմբերի 7-9-ը): Իսկ Եվրամիության բարձրաստիճան անձինք հայտարարել են, որ այդ հանդիպման ընթացքում չի կարող սպասվել այդ որոշման ընդունումը, քանի որ առկա են տարաձայնություններ Հունաստանի և Եվրամիության անդամ երկրների միջև՝ կապված Էգեյան տարածաշրջանի հարցին անդրադառնալու Աթենքի պահանջի հետ:

Թուրքիային Եվրամիությանը անդամակցելու թեկնածուի կարգավիճակ էր տրվել մեկ տարի առաջ Հելսինկիում կայացած Եվրամիության գագաթաժողովի ժամանակ, երբ բարելավվել էին Թուրքիայի և նրա մշտական ախոյան Հունաստանի հարաբերությունները: Վերջերս այդ հարաբերությունները կրկին լարվեցին: Անկարան զայրացած ընդունեց Եվրախորհրդարանի որոշումը, որը Թուրքիային կոչ է անում ճանաչել 1915թ. Օսմանյան Թուրքիայի կողմից կատարված հայերի ցեղասպանության փաստը: Հունաստանի պահանջը Էգեյան տարածաշրջանի հարցի շուտափույթ լուծման վերաբերյալ նույնպես կառաջացնի Թուրքիայի ընդդիմությունը, ինչը արգելք կհանդիսանա այդ երկրի՝ Եվրամիությանը անդամակցելու գործընթացում:

Նոյեմբերի 20-ին Թուրքիայի նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերը Արտաքին տնտեսական հարաբերությունների կազմակերպության 14-րդ ընդլայնված նիստում հայտարարեց, որ Եվրամիության առաջարկությունը Կիպրոսի խնդրի կարգավորման, Հայոց ցեղասպանության, քրդական հարցի, թուրք զինվորներին Կիպրոսից դուրս բերելու վերաբերյալ չի կարող ընդունվել երկրի իշխանությունների կողմից: Ըստ նախագահի, Թուրքիայի Ազգային մեծ ժողովը և կառավարությունը ամեն ջանք գործադրել են երկիրը կոպենհագենյան չափանիշներին բերելու ուղղությամբ: «Թուրքիե» օրաթերթը նշել է, որ Սեզերը, անդրադառնալով Եվրախորհրդարանի Թուրքիային ուղղված առաջարկությանը՝ կապված Հայոց ցեղասպանության հետ, ասել է, թե այն խիստ մտահոգիչ է և կարող է բացասաբար անդրադառնալ Թուրքիա-Եվրոպա հարաբերությունների վրա:

Նոյեմբերի 22-ին թուրքական «Միլիեթ» թերթը գրում է, որ պաշտոնական Անկարան միջոցներ է ձեռնարկում Հայոց ցեղասպանության օրինագծերին հակազդելու համար: Մասնավորապես Թուրքիայի արտգործնախարարությունը կառավարության հաստատմանն է ներկայացրել «հայկական պահանջատիրության չեզոքացմանն ուղղված» մի նախագիծ, որի շրջանակներում նախատեսվում է բարելավել հարաբերությունները Երևանի հետ: Ըստ «Միլիեթ»-ի, մասնավորապես նախատեսվում է դադարեցնել Հայաստանի նկատմամբ սահմանված այցագրային ռեժիմը և վերաբացել հայ-թուրքական սահմանը: Ցեղասպանությանը հակազդելու նախաձեռնությունների փաթեթով առաջարկվում է նաև աշխատանքներ տանել հայկական հարցի շուրջ գիտական ուսումնասիրությունները զարգացնելու ուղղությամբ: Նախատեսվում է կոնկրետացնել «պատմությունը թողնենք պատմաբաններին» թեզը: Ակն նպատակով կազմակերպվելու է միջազգային գիտական կոնֆերանս, ինչպես նաև զարգացվելու է երկխոսություն հայ և թուրք պատմաբանների միջև, գրում է թերթը: Անկարան մտադիր է նաև լայնորեն օգտագործել թուրքահայերի գործոնը: Թուրքիան, ըստ «Միլիեթ»-ի, շահարկելու է Թուրքիայի «հայության կողմից» Հայ դատին դեմ լինելու իրողությունը:

Վերլուծելով Եվրախորհրդարանի կոչի հիմնական բովանդա-

կությունը, «Ազգ» թերթի քաղաքական մեկնաբան, թուրքագետ Հակոբ Չաքրյանը գրում է.

«Այդ զեկույցն ընդգրկում է Թուրքիայի ազգային փոքրամասնություններին, երկրում մարդու իրավունքների ոտնահարումներին առնչվող դրույթներ, միաժամանակ իշխանությունների ուշադրությունն է հրավիրվում քրդական հարցի և Կիպրոսի խնդրի վրա: Ավելին, Հյուսիսային Կիպրոսում տեղակայված թուրքական զինված ուժերը զեկույցում բնութագրվում են՝ օկուպացիոն զորք: Ինչ վերաբերում է զեկույցի հայկական դրույթներին, ապա Եվրախորհրդարանը կոչ է անում թուրքական կառավարությանը, ինչպես նաև Թուրքիայի Ազգային մեծ ժողովին՝ աջակցել երկրում հասարակայնության մաս կազմող թուրքահայ համայնքին և հրապարակայնորեն ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Միաժամանակ Եվրախորհրդարանը Թուրքիայի կողմից Հայաստանի ներկա շրջափակումը վերացնելու, այդ թվում, երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը նպաստելու նպատակով դիմում է թուրքական կառավարությանը, որպեսզի նա երկխոսություն սկսի հայկական կառավարության հետ:

Եվրախորհրդարանի կոչը ուշագրավ է, բայց ավելի ուշագրավ բնույթ է ստանում Եվրամիության հետ Թուրքիայի հարաբերությունների ընթացքը: Հատկանշական է, որ ԵՄ-ը դրանց կարգավորումը պայմանավորում է Կիպրոսի տարածքից թուրքական զորքերի դուրսբերմամբ, պահանջելով Թուրքիայից 2001թ.-ին կարգավորել կիպրական հարցը: Դա Եվրախորհրդարանի կոչի հետ համադրելու դեպքում Հայոց ցեղասպանության ճանաչումը նույնպես ԵՄ-ի հետ հարաբերություններում նախապայման է դառնում Թուրքիայի համար: Քանի որ Եվրախորհրդարանն իր զեկույցում թուրքական կառավարությանը հորդորում է ազգային փոքրամասնության իրավունքներ տրամադրել քրդերին, ուստի քրդական հարցը հերթական անգամ ներքաշվում է ԵՄ-Թուրքիա հարաբերությունների ոլորտ:

Նոյեմբերի 16-ին թուրքական պետհեռուստատեսությունը Եվրախորհրդարանում զեկույցի ընդունումը վերագրելով «դույների կողմից ղեկավարվող հայկական լոբբիի» ջանքերին, դա համարեց հայ-հունական դավադրության դրսևորում: Թուրքական մամուլը մոտավորապես նույն ձևով արձագանքեց: Վարչապետ Բյուլենթ Էջևիթը դա որակեց «անպատասխանատու քայլ»: Վերջինը նկատի առնելով Հայոց ցեղասպանությունը ճանաչելու Եվրախորհրդարանի կոչը, ավելացրեց, որ նմանօրինակ պնդումներին չի կարելի լուրջ վերաբերվել, իսկ փոխվարչապետ Մեսութ Յըլմազն ընդգծեց. «Սա անփառունակ կոչ է»:

Վերոհիշյալ զեկույցի առումով թերևս ուշագրավը պետնախարար Աբդուլհալուք Չայի արձագանքն էր. «Այս փաստաթուղթը Սևրի երկրորդ տարբերակն է: Ես դեմ եմ ԵՄ-ի հետ հարաբերություններին»: Այս խոսքերը պատահական չեն: Եվրախորհրդարանի զեկույցի նույնացումը Սևրի նոր տարբերակի հետ առավել ևս: Ի վերջո, Թուրքիայի քաղաքական շրջանակներում Սևրն իր հերթին նույնացվում է թուրքական ազգային պետականության մասնատման հետ: Ահա թե ինչու երկրի էթնիկ խմբավորումներին ազգային փոքրամասնության իրավունքներ տրամադրելու Եվրախորհրդարանի կոչը, որն այդ խմբավորումների տեսանկյունից ընդամենը մայրերի լեզվով ազատ հաղորդակցվել, հրատարակություններ կատարել, ռադիո և հեռուստահաղորդումներ կազմակերպել է ենթադրում, վերոհիշյալ շրջանակներում դիտվում է Թուրքիայի Հանրապետության ունիտար կառուցվածքը խարխլելու փորձ: Այս պայմաններում ակամա սրվում են ԵՄ-ի հետ Թուրքիայի հարաբերությունները:

Նոյեմբերի 20-ի համարներում թուրքական թերթերն իրենց ուշադրությունը բևեռել էին այս հանգամանքի վրա: Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ շուտով կսրվեն նաև թուրքական կառավարության մաս կազմող կուսակցությունների հարաբերությունները: Ընդորում, հենց Եվրախորհրդարանի զեկույցի էթնիկ խմբավորումներին առնչվող դրույթի պատճառով: Եթե զեկույցի Հայոց ցեղասպանությունը ճանաչելու կոչն ու ԵՄ-ի թուրքական զինված ուժերը Կիպրոսից դուրս բերելու պահանջը միանշանակ մերժվում են կառավարող երեք կուսակցությունների կողմից, ապա փոխվարչապետ Յըլմազը, որ «Մայր հայրենիք» կուսակցության ղեկավարն է նաև, Թուրքիայում քրդերին որոշակի իրավունքներ տրամադրելու օգտին է արտահայտվում: Երբ այս արարքն արժանանում է Չախ ժողովրդավարական կուսակցության նախագահ վարչապետ Էջևիթի քննադատությանը, իսկ Յըլմազին դրա համար դատապարտում է Ազգայնական շարժում կուսակցության նախագահ, փոխվարչապետ Դևլեթ Բահչելին, ապա կառավարության մաս կազմող կուսակցությունների միջև լարվածությունն անխուսափելի է դառնում:

Համենայն դեպս, թուրքական թերթերում նաև այդ լարվածությունը մատնանշվեց: Թե ի՞նչ ընթացք կունենա դա, ցույց կտա ժամանակը: Բայց որ ԵՄ-ի հետ Թուրքիայի հարաբերությունները վերստին մտել են սառեցման հուն, ակնհայտ է: Ավելի քան ակնհայտ են կիպրական խնդրի և քրդական հարցի կողքին նաև Հայոց ցեղասպանությունը որպես ազդեցության լծակ Թուրքիայի դեմ

գործադրելու եվրոպական երկրների միտումները: Սակայն, ինչպիսին էլ լինի դրանց էությունը, Եվրախորհրդարանի Հայոց ցեղասպանությունը ճանաչելու Թուրքիային հասցեագրված կոչը Մեծ եղեռնի միջազգային ճանաչման առումով նշանակալից քայլ է: Հետևաբար պետք է ողջունել»[1]:

«Ազգ» թերթի մեկ այլ վերլուծաբան՝ Թաթուլ Հակոբյանը իր վերջին ուշագրավ հոդվածներից մեկում, որը կրում է «Թուրքիա-Հայաստան դիվանագիտական հարաբերությունների հաստատումը բխում է թե՛ Անկարայի, թե՛ Վաշինգտոնի շահերից. թե ինչ է շահելու Հայաստանը՝ անորոշ է» խորագիրը, գրում է՝

«Քաղաքական որոշ ուժերի ու լրատվամիջոցների կողմից փորձ է արվում ձևավորել հասարակական կարծիք, թե Հայաստանը կոզի է, և մեր նավը փրկության ափ կարող է հասնել միայն ու միայն Թուրքիայի ճանապարհով, այսինքն՝ Թուրքիայի հետ դիվանագիտական, առևտրատնտեսական հարաբերություններ հաստատելով, մյուս կողմից թե իբր Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելով Անկարան չափազանց մեծ զոհողությունների է գնում, իսկ նման մեծահոգության դիմաց Երևանը պետք է զիջումներ անի Արցախի հարցում:

Վաղ թե ուշ Երևանն ու Անկարան դիվանագիտական հարաբերություններ կհաստատեն, սակայն դրանք երբեք չպետք է լինեն մեր շահերի հաշվին և ոչ էլ Թուրքիայի: Անընդունելի է, երբ Երևան-Անկարա երկխոսության սկսումը ուղղակիորեն կապվում է Երևան-Բաքու հարաբերությունների հետ: Այն պահին, երբ Թուրքիան՝ ինքնագլուխ, թե Վաշինգտոնի ցուցումով ակնարկ իսկ փորձի անել Արցախի հարցում փոխզիջումների գնալու հայկական կողմը անհապաղ պետք է դադարեցնի երկխոսությունը: Ի՞նչ կապ ունի Ադրբեջանը Հայաստան-Թուրքիա հարաբերություններում: Անհեթեթ կլինի չէ՞, եթե որպես հայ-թուրքական երկխոսության նախապայման մեր կողմից առաջ քաշվի ասենք քրդական հարցը կամ Կիպրոսի պարագան: Եթե Թուրքիան փակում է H-50 օդային միջանցքը կամ վիզաների հարցում բարդություններ ստեղծում, ուրեմն մենք պե՞տք է զիջումներ անենք:

Նախկինում և հատկապես վերջին ամիսներին «Ազգը» մի քանի անգամ գրել և փորձել է հիմնավորել, որ Երևան-Անկարա դիվանագիտական հարաբերությունների հաստատումը, երկու երկրների միջև առևտրատնտեսական կապերի ամրապնդումն ու խորացումն առաջին հերթին բխում են Թուրքիայի և նրա ռազմավարական դաշնակից ԱՄՆ-ի շահերից:

Թուրքիան Հայաստանի հետ սահմանները բացելով և դիվանագիտական հարաբերություններ հաստատելով միայն շահում է. ա) Հայաստանի տարածքով դուրս է գալիս Ադրբեջան և Միջին Ասիա, ինչը երազում է տասնամյակներ շարունակ, բ) իր երկրի արևելյան նահանգների տնտեսական զարգացման համար լուրջ հեռանկարներ են բացվում, գ) Արևմուտքի աչքին երևում է որպես ժողովրդավարական, բարիդրացի պետություն, դ) անմիջական վերահսկողություն է հաստատում Հայաստանը Եվրապային կապող ճանապարհի վրա:

Իհարկե, մենք չէ, որ պիտի թուրքերին հուշենք, թե ինչ օգուտներ կարող են քաղել Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելով: Սակայն տեղին ենք համարում անդրադառնալ թուրք պետական պաշտոնյաների որոշ տեսակետներին, որոնք տպագրվել են թուրքական և ամերիկյան մամուլում. «Կարսը տնտեսական ծանր ճգնաժամ է ապրում և տնտեսական պատճառներով պայմանավորված արտագաղթը ահավոր չափերի է հասնում... Հայտնի է, թե Թուրքիան ինչքան մեծ վնասներ կրեց ԱՄՆ-ի և Իրաքի պատերազմի ժամանակ: Ինչպես Իրաքի դեմ կիրառվող պատժամիջոցները հարվածում են Թուրքիային, այնպես էլ Թուրքիայի կողմից Հայաստանի դեմ կիրառվող շրջափակումը հարվածում է Կարսին: Մենք վճռականորեն կողմ ենք սահմանների բացմանը: Այսպիսով, հնարավորություն կստեղծվի առևտուր անել ոչ միայն Հայաստանի, այլև նրա տարածքով թուրքական պետությունների հետ» («Միլիեթ»), «Թուրքիայի և Հայաստանի տնտեսական հարաբերությունների զարգացումը համապատասխանում է թե՛ Թուրքիայի, թե՛ Ադրբեջանի շահերին: Դրանք կուժեղացնեն Անկարայի դիրքերը Երևանում, արգելակ կհանդիսանան, որպեսզի հայերը կրկին չհայտնվեն Մոսկվայի հսկողության տակ... Հայ-թուրքական հարաբերությունների հաստատումով մենք ցամաքային և օդային ճանապարհով նպաստելու էինք Հայաստանի՝ Արևմուտքի հետ կապվելուն: Այսպիսով, Թուրքիայով է անցնելու Հայաստանի կյանքի ճանապարհը» («Սաբահ»), «Նախագահ Դեմիրելը Կոպենհագենում չնախատեսված հանդիպում ունեցավ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ. «Լուծեք ձեր խնդիրները Ադրբեջանի հետ: Դրանք արդեն վնաս են հասցնում մեզ: Այս պատերազմը խանգարում է մեզ դուրս գալ

[1] Հակոբ Չաքրյան, Եվրախորհրդարանի կոչը Թուրքիային նշանակալից քայլ է Մեծ եղեռնի միջազգային ճանաչման առումով, «Ազգ», 21 նոյեմբերի, 2000թ., թիվ 209:

Ադրբեջան և Կենտրոնական Ասիա» («Հյուրիեթ»):

Թուրքիան տարածաշրջանում ԱՄՆ-ի շահերի արտահայտողն է և, ըստ էության, պարտավորվել է իրականացնել Վաշինգտոնի քաղաքականությունը: Եթե մի քանի բառով արտահայտելու լինենք, ապա կարող ենք փաստել. ԱՄՆ-ը Թուրքիայի միջնորդությամբ պետք է Ռուսաստանին դուրս մղեր կամ թուլացներ Մոսկվայի դիրքերը Հարավային Կովկասում, մասնավորապես Մոսկվայի ռազմավարական դաշնակից Հայաստանում: Փաստորեն, մինչև այսօր Թուրքիան չի կարողացել իրականացնել իր ուսերին վերցրած ամերիկյան պարտավորությունները: Թերևս սրանով պետք է բացատրել նաև ԱՄՆ-ի դժգոհությունն Անկարայից և Կոնգրեսում Հայոց ցեղասպանության հարցի արծարծումը: ԱՄՆ-ը Ցեղասպանության հարցն արծարծելով, մեր կարծիքով, կարևորագույն երկու խնդիր է փորձում լուծել. նախ առաջ է բերում ավանդական ռուսամետ կողմնորոշում ունեցող հայերի համակրանքը, ապա՝ ցեղասպանության ճանաչման սպառնալիքով Թուրքիային զրկում արտաքին քաղաքականություն վարելու հավակնություններից:

Ի՞նչ է տալու մեզ Թուրքիայի հետ դիվանագիտորեն առևտրատնտեսական կապերի հաստատումը, հայ-թուրքական սահմանների բացումը: Լավատեսների կարծիքով՝ Թուրքիայի հետ տնտեսական կապերի հաստատումը, սահմանային առևտուրը կթեթևացնի հայ ժողովրդի սոցիալական ծանր վիճակը, Հայաստանը Թուրքիայով դուրս կգա Եվրոպա, թուրքական կապիտալը կհոսի Հայաստան, կկատարվեն լուրջ ներդրումներ և այլն: Բոլորովին այլ կարծիքի են իրատեսները. Թուրքիայի հետ առևտրատնտեսական կապերի հաստատումը ոչ մի օգուտ էլ չի բերի Հայաստանին, որովհետև նման կապեր վաղուց են հաստատվել, ճիշտ է միջնորդավորված, երրորդ երկրների միջոցով, և Հայաստանը դարձել է թուրքական էժան, անորակ և անորոշ բաղադրության ապրանքների սպառման շուկա: Իսկ այն բիզնեսմենների պնդումը, թե հանուն հայ-թուրքական տնտեսական հարաբերությունների հաստատման պետք է գնալ քաղաքական զիջումների, զուտ նեղ անձնական շահեր է հետապնդում:

Եվս մեկ հանգամանք. հայ-թուրքական հարաբերությունների հաստատման մասին խոսելիս չգիտես ինչու անուշադրության է մատնվում ռուսական գործոնը: Սահմանների բացումը ենթադրում է Հայաստանում տեղաբաշխված ռուսական, այդ թվում սահմանապահ զորքերի ավելորդություն: Եթե իրոք Հայաստան-Թուրքիա հարաբերություններում ջերմացում է ակնկալվում, ապա վաղ թե ուշ ռուսական զորքերի ներկայությունը Հայաստանում ոչ մի կերպ արդարացված չի լինի:

Պատրա՞ստ է Ռուսաստանը հեռանալ իր ռազմավարական դաշնակից Հայաստանի, ասել է թե ամբողջ Հարավային Կովկասի տարածքից»[2]:

Ուշադրության արժանի է Թաթուլ Հակոբյանի մեկ այլ տեսակետը հրատարակված «Ազգ» թերթում, որը վերահրատարակում ենք կրկին անգամ ամբողջությամբ:

«Հայաստանի երրորդ հանրապետության անկախությունն առաջինը ճանաչեց Թուրքիան: Անցել է շուրջ տասնամյակ, մինչդեռ Երևան-Անկարա դիվանագիտական հարաբերություններ չեն հաստատվել: Անցնող տասը տարիների հայ-թուրքական «հարաբերությունները» պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ փուլերի.

1. 1990-1991թթ.՝ առաջին շփումների, միմյանց տրամադրությունները շոշափելու տարիներ: Հայաստանի անկախությունը և ԽՍՀՄ փլուզումն ընդհանրապես արժանացավ Թուրքիայի հավանությանը: Չկար այլևս երկաթյա վարագույրը, ինչը տասնամյակներ շարունակ Անկարային հնարավորություն չէր տալիս դուրս գալ Կովկաս, Կենտրոնական Ասիա, տարածաշրջաններ, որոնք առաջին հերթին Թուրքիային հետաքրքրում էին որպես թուրքական ապրանքների սպառման շուկա: Այս առումով Թուրքիայի համար առանձնապես և առաջին հերթին կարևորվում էր հայ-թուրքական սահմանի բացումը, դիվանագիտական հարաբերությունների հաստատումը: Սակայն ի սկզբանե ակնհայտ էր, որ Երևան-Անկարա երկխոսությունը դատապարտված է ձախողման, քանզի կողմերը հարցին մոտենում էին տարբեր, տրամագծորեն հակառակ տեսանկյունից. Երևանն առաջարկում էր հաստատել և խորացնել տնտեսական կապերը, Անկարան առաջ էր քաշում զուտ քաղաքական պայմաններ:

2. 1992-1994թթ.՝ հայկական զինված ուժերի ԼՂ-ում և հարակից շրջաններում ազատագրական գործողությունները հիստերիկ տրամադրություններ առաջացրին Թուրքիայում: Հայ-թուրքական սահմանի ամբողջ երկարությամբ կուտակվում էին թուրքական զորքեր, թուրք վարձկանները կռվում էին ադրբեջանական բանակում, Անկարան սպառնում էր Հայաստան ներխուժելով: 1993թ. ամռանը, երբ հայ ազատամարտիկները վերահսկողություն հաստատեցին Քելբաջարում, Սիրիայում գտնվող Թուրքիայի այն ժամանակ արտ-

[2] «Ազգ», 18 նոյեմբերի, 2000թ., էջ 5:

գործնախարար Հ. Չեթինը հայտարարեց, թե անիմաստ են հայերի հետ երկխոսություն սկսելու ջանքերը: Անկարան առավել հստակորեն դրեց Երևանի հետ հարաբերություններ հաստատելու նախապայմանները. ա) Հայաստանը պիտի հրաժարվի Ցեղասպանության հարցի արծարծումից և պահանջատիրությունից, բ) հայկական զինված ուժերը պիտի դուրս բերվեն ԼՂ-ից և հարակից տարածքներից, ԼՂ-ն վերադառնա Բաքվի ենթակայությանը:

3. 1994թ. վերջ – 1995թ.՝ հայ-թուրքական «հարաբերությունների» «ամենաջերմ» ժամանակաշրջանը: ԼՂ-ում, հարակից շրջաններում կրակի դադարեցումը, զինադադարի հաստատումը հայ-թուրքական շփումների առումով նոր հնարավորություններ ստեղծեցին: 1994թ. վերջերին և ողջ 1995թ. ընթացքում, ենթադրաբար ոչ առանց Անկարայի իշխանությունների խրախուսման, թուրքական մամուլը հեղեղված էր «հայամետ» հոդվածներով: Հայ-թուրքական շփումներում Երևանի լիազոր ներկայացուցիչ Ժ. Լիպարիտյանը համոզում էր, թե «մեզ անդամալուծում են ցեղասպանությունն ու նրա հետևանքները»: Նախկին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը Ցեղասպանության 80-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում իր մոտեցումները ներկայացրեց, որն առաջին հերթին պատասխան ժեստ էր Անկարայի իշխանություններին: Այսպես, Տեր-Պետրոսյանը Ցեղասպանության մեջ մեղադրեց Ռուսաստանին, եվրոպական գերտերություններին, «հայ քաղաքական երկու հոսանքներին՝ կղերաբուրժուականներին ու հեղափոխական դաշնակցականներին», առաջին հանրապետության «վարիչներին», մի խոսքով՝ բոլորին, բացի Ցեղասպանություն իրականացնող երիտթուրքերի:

Սակայն այս ամենը բավարար չեղավ, և Թուրքիան մերժեց ՀՀ առաջարկը՝ հաստատել դիվանագիտական հարաբերություններ, հորդորելով Երևանին կատարել մյուս նախապայմանը՝ «դուրս գալ ԼՂ-ից և հարակից շրջաններից»:

4. 1996-1997թթ.՝ հայկական կողմը փորձում էր երկխոսությունը տեղափոխել տնտեսական հարթություն, ակնկալիքով, թե տնտեսական շահը խթան կլինի քաղաքական երկխոսություն սկսելու համար: Այսպես, ՀՀ փոխարտգործնախարար Վ. Օսկանյանը կարծում էր, թե թուրք բիզնեսմենները շահ ստանալու դեպքում կարող են ազդել Անկարայի իշխանությունների վրա, և նրանք միգուցե հրաժարվեն առաջ քաշված նախապայմաններից:

5. 1998-2000թթ.՝ Հայաստանում իշխանափոխությունը Թուրքիայում բացասական արձագանքի արժանացավ: Նախագահ Ռ. Քոչարյանի երկու ելույթները ՄԱԿ-ում, ապա ԱՄՆ-ի և եվրոպական

երկրների կողմից Ցեղասպանության փաստի ճանաչման փորձերն անորոշ ժամանակով հետաձգում են Երևան-Անկարա քաղաքական և դիվանագիտական հարաբերությունների հաստատման հնարավորությունները:

Հիշեցնենք՝ Ցեղասպանության հարցը խոչընդոտ չէ հայ-թուրքական հարաբերությունները հաստատելու համար: Վերջին երկու տարիներին Հայաստանը պաշտոնապես մի քանի անգամ հայտարարել է այս մասին: Ցեղասպանության ճանաչումը, նույնիսկ եթե դա անի Թուրքիան, բավարար չէ Երևան-Անկարա քաղաքական հարաբերություններ հաստատելու համար: Թուրքիան նախ և առաջ պետք է հրաժարվի առաջ քաշած երկրորդ նախապայմանից:

Հայաստանը, անկախ ԱՄՆ-ի ճնշումներից՝ ի դեմս պետքարտուղարության նորանկախ երկրների գծով խորհրդական Ս. Մեստանովիչի, նորանկախ երկրների գծով առևտրի դեպարտամենտի խորհրդական Յ. Կալիցկու, պետք է հրաժարվի Թուրքիայի հետ հարաբերությունների հաստատումից, քանի դեռ Անկարան շարունակում է խնդիրը կապել երրորդ երկրի՝ Ադրբեջանի հետ Հայաստանի հարաբերություններով:

Տնտեսական կապերը չպետք է գերիշխեն Երևան-Անկարա հարաբերություններում: Այն միտումը, թե Թուրքիայի հետ տնտեսական կապերը զարգացնելով մենք կարող ենք հաղթահարել երկրի տնտեսական ճգնաժամը, հիմնավորված չէ: Պետք չէ գերագնահատել Գյումրի-Կարս երկաթգծի նշանակությունը: Ուրեմն, եթե բացվում է երկաթգիծը, նշանակում է կապիտալը կհոսի՞ Հայաստան, ներդրումները կավելանա՞ն... Նույնիսկ հանգուցյալ Ռաֆայել Իշխանյանն էր փորձում մեզ համոզել, որ արտագաղթի պատճառը Թուրքիայի հետ հարաբերություններ չունենալն է. «Ծով չունենք. նավարկելի գետեր չունենք: Եթե կապեր չհաստատենք չորս հարևանների հետ, Հայաստանը կխեղդվի և արդեն խեղդվում է»:

Հայաստանը դեպի արտաքին աշխարհ ելք ունի Իրանով, այնտեղից Ծոցի տաք ջրեր, արաբական աշխարհ, Թուրքմենստանով Ռուսաստան: Հայաստանը ելք ունի դեպի Վրաստան, Սև ծով, ապա՝ Ռուսաստան, Ուկրաինա, Եվրոպա: Պարզապես պետք չէ տեղի-անտեղի լարվածություն մտցնել հայ-վրացական հարաբերություններում: Եվ վերջապես, Հայաստանը կարող է ԼՂ հարցում փոխզիջումների գնալ, բայց ոչ Թուրքիայի, այլ հակամարտող կողմ

Ադրբեջանի հետ»[3]:

Ընթերցողների ուշադրությանն ենք արժանացնում նաև հետաքրքիր հարցադրումներով մի հոդված ևս, որի հեղինակն է «Հայոց աշխարհ» թերթի քաղաքական մեկնաբան, հրապարակախոս Գևորգ Խուդինյանը: Հոդվածում ասվում է՝

«Եվրոպական մի շարք երկրների կողմից Հայոց ցեղասպանության անվերապահ ճանաչումը և Հայաստանի հետ շուտափույթ երկխոսություն սկսելու մասին Թուրքիային ուղղված պահանջը արտաքուստ այնքան պարզ գործընթաց է թվում, որ մեր հավաքական գիտակցությունը միանգամից ի վիճակի չէ ըմբռնել տեղի ունեցող արմատական հեղաբեկման պատճառները:

Դրա հետևանքով մեր գնահատականները սկսում են տատանվել արդարության վերականգնման նկատմամբ ավանդական, զուտ հայկական հավատի և Եվրամիություն-Թուրքիա հարաբերություններում առկա խոր կնճիռների բացահայտման պրագմատիկ փորձերի արանքում: Հոգու խորքում հարց տալով՝ իսկ արդյո՞ք վատ է այդ երկու հանգամանքների համընկնելու փաստը, մենք մոռանում ենք ավելի կարևոր ու սկզբունքային հարցականի առկայության մասին՝ բայց արդյո՞ք դա է ներկայումս իր ավարտին մոտեցող 20-րդ դարի վերջին օրերին այս խնդրի արծարծման բուն պատճառը:

Ի վերջո, նույն Եվրոպան է, ի դեմս Անտանտի երկրների, Մեծ եղեռնի օրերին հանդիսավորապես հայտարարել, որ Թուրքիան պատասխան է տալու իր արարքների համար: Եվ այդ նույն Եվրոպան է ԱՄՆ-ի հետ միասին Առաջին աշխարհամարտից հետո Թուրքիային պարտադրել Ցեղասպանության դիմաց քաղաքական փոխհատուցում տալու խնդիրը, որն ամրագրվել է Սևրի դաշնագրում: Հայտնի է որ բոլշևիզմի հաղթարշավը տապալեց Սևրի դաշնագրի իրականացման գործը և տրոհեց միացյալ հակաթուրքական ճակատը: Բայց չէ՞ որ այսօր բոլշևիզմն անցել է պատմության գիրկը, և Լոզանի դաշնագիրը որպես բոլշևիկյան աջակցությամբ Անտանտից Թուրքիայի կորզած զիջում կախվել է օդում՝ չկա այն հենարանը, որի վրա դնելով իր ոտքերը Քեմալ Աթաթուրքն ու Իսմեթ փաշան պայմաններ թելադրեցին Եվրոպային:

Ուրեմն եվրոպական երկրների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումով ով-ո՞ւմ է պարտական: Ի վերջո, Եվրոպայի դաշնակից հայ ժողովրդին զրկել են իր հայրենիքից՝ այդ Եվրոպային ու Ռուսաստանին մատուցած ծառայությունների դիմաց: Ներկայումս ողջ մայրցամաքի թրքացման հեռանկարից վախեցած Եվրոպան Թուրքիային սոսկ հիշեցնում է անցյալը: Ուրեմն՝ Հայոց ցեղասպանության ճանաչման համար մենք պարտք ու պարտական չենք Եվրոպային: Այդ նա է վերադարձնում իր պարտքի մեկ հարյուրերորդական մասը՝ իր իսկ շահերից ելնելով: Որպես ազգ մեր խնդիրը Ցեղասպանության ճանաչումով վրա հասնող ներքին բավարարվածությունը չէ, այլ ցեղասպանությամբ մեզանից խլված հայրենիքի վերադարձը: Այստեղ է, որ Եվրոպան, ԱՄՆ և բոլշևիզմի հետքերը լվացող Ռուսաստանը, ի վերջո՝ քաղաքակիրթ աշխարհը պարտք են մեզ ու դեռևս չեն էլ խոսում այն վերադարձնելու մասին:

Եթե խոսքը մարդու իրավունքները հարգելու մասին է, եթե այդ սկզբունքները գերադաս է համարվում պետությունների տարածքային ամբողջականությունից, ապա ո՞վ պետք է հարգի միլիոնավոր արևմտահայերի իրավունքները, որոնց ժառանգները այսօր էլ զրկված են հայրենի հողի վրա ապրելու իրավունքից: Ուրեմն չշփոթենք տեղի ունեցող գործընթացի երևութական մասի փայլից ու հրապուրանքից: Իրականում եթե Եվրոպան Թուրքիային իր ընտանիքի մեջ ներգրավելուց առաջ պահանջում է ճանաչել Հայոց ցեղասպանության փաստը, իսկ Թուրքիան հրաժարվում է ընդունել սեփական պատմությունը, ապա տեղի է ունենում ոչ թե սովորական քաղաքական առևտուր, որի հետևանքով մենք ստանում ենք բարոյական փոխհատուցում, այլ գծվում է քաղաքակրթությունների ապագա տարանջատման սահմանագիծը՝ Եվրոպայի ու Ասիայի սահմանագիծը և Հայոց ցեղասպանության ճանաչման ու նրա հետևանքների վերացման խնդիրը՝ Եվրոպայի ու ողջ քաղաքակիրթ աշխարհի պարտքը փոխանցվում է այն նոր աշխարհակարգին, որի մեջ մենք ապրելու ենք 21-րդ դարում: Այդ պարտքի պարտատիրոջ իր իրավունքները հայությունը չպետք է դնի Ցեղասպանության ճանաչման ու հայ-թուրքական հարաբերությունների բարելավման երևակայական զոհասեղանին, որը քաղաքակրթությունների տարանջատման գործընթացի պայմաններում երբեք չի նյութականանալու՝ մինչև չավարտվի նրանցից յուրաքանչյուրի ներքին կոնսոլիդացիան:

Ուրեմն խոսակցությունը հայ-թուրքական հարաբերությունների բարելավման մասին, այսինքն՝ դիվանագիտությունը թողնենք դիվանագետներին, իսկ մենք փորձենք գտնել Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը որպես ապահարզանի առիթ դարձնող քաղաքակրթական գործընթացի մեջ մեր տեղը, ելման դիրքը, հենակե-

[3] Թաքուլ Հակոբյան, Հայ-թուրքական շփումների տրամաբանությունը և զարգացման միտումները. Տնտեսական կապերը չպետք է գերիշխեն Երևան-Անկարա հարաբերություններում, «Ազգ», 24 նոյեմբերի,2000թ., էջ 5:

տը՝ նոր աշխարհակարգում մեր չլուծված խնդիրը հետապնդելու համար»[4]:

Հայաստանի Հանրապետության նախագահ Ռ. Քոչարյանի նոյեմբերի 21-ից 23-ը Հունաստան կատարած այցը լայն արձագանք գտավ Թուրքիայում: Թուրքական պետական հեռուստատեսությունը իր հաղորդումներում պարզաբանումներ էր տալիս այցի ողջ ընթացքի մասին և նոյեմբերի 23-ին փորձ արվեց ամփոփել դրա արդյունքները:

Աթենքում թուրքական հեռուստատեսության սեփական թղթակից Նուր Բաթուրը, հեռախոսով ուղիղ եթերում այցը լուսաբանելիս, անդրադարձավ Հայաստանի ու Հունաստանի նախագահների հանդիպմանը: Նա մասնավորապես ասաց. «Հանդիպման ժամանակ Ստեֆանոպուլոսը ցեղասպանության հարցում բացահայտորեն աջակցեց Քոչարյանին: Թեև Քոչարյանի հետ հանդիպմանը վարչապետ Սիմիտիսը չհիշատակեց ցեղասպանության մասին, բայց ահա դա արծարծեցին արտգործնախարար Օսկանյանն ու Պապանդրեուն»:

Ըստ Նուր Բաթուրի, մամուլի համատեղ ասուլիսում Օսկանյանը հորդորել է Թուրքիային ճանաչել Հայոց ցեղասպանությունը, ասելով, որ նա դրանով կձերբազատվի պատմական ծանր բեռից և նախադրյալներ կստեղծի Հայաստանի հետ հետագա երկխոսության համար: Ինչ վերաբերում է Պապանդրեուին, ապա նա, ի պատասխան հայ լրագրողի հարցի, մատնանշել է. «Հայոց ցեղասպանությունը ճանաչելու Եվրախորհրդարանի վերջին կոչը Եվրամիությանն անդամակցելու նախապայման չէ Թուրքիայի համար: Թեև դա նրան չի պարտավորեցնում, բայց սահմանափակում է նրա հնարավորությունները»:

Նուր Բաթուրը հիշեցրեց, որ Հունաստանի խորհրդարանը դեռ 1996-ին է ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Նա ելակետ ընդունելով ճանաչման փաստը, նախագահ Ստեֆանոպուլոսի ու արտգործնախարար Պապանդրեուի հայանպաստ արտահայտությունները, նախագահ Քոչարյանի այցի առնչությամբ հանգեց հետևյալ եզրակացության. «Հայերն ստացան այն աջակցությունը, ինչ ակնկալում էին Հունաստանից»:

Նոյեմբերի 24-ին «Ազգ» թերթում հրապարակվեց «Նոյան տապանի» տեղեկատվությունը ֆրանսիական «Էքսպրես» շաբաթաթերթին թուրք պատմաբան, Ստամբուլի «Սաբանչի» համալսարանի պրոֆեսոր Հալիլ Բերքթայի տված հարցազրույցի մասին, որտեղ նա արտահայտվում է 1915թ. Հայոց ցեղասպանության վերաբերյալ ողջ ճշմարտությունը ասելու օգտին, թեև ինքը խուսափում է օգտագործել «ցեղասպանություն» բառը:

Ստորև ներկայացնում ենք (որոշ կրճատումներով) այդ հարցազրույցը:

« - Ինչո՞ւ հենց այս լարված պահն ընտրեցիք հրապարակային ելույթի համար:

- Կարծում եմ, մենք պարտավոր ենք ձերբազատվել 1915թ. իրադարձությունների հետ կապված տաբուներից: Ես խոսեցի, որպեսզի լեզուները բացվեն: Կարծում եմ, իրավիճակը կփոխվի: Տասնամյակներ ի վեր օրորոցային երգելով քնեցնում են Թուրքիայի հանրությանը: Սակայն տոննաներով փաստաթղթեր կան, որոնք ապացուցում են տխուր իրողությունը. դիվանագետների զեկուցագրեր, անձնական գրառումներ, Օսմանյան կայսրությունում հաստատված քրիստոնեական եկեղեցիների ներկայացուցիչների Արևմուտք հասած վկայություններ, լուսանկարներ... Ես ինքս լաց եմ եղել ի տես որոշ լուսանկարների: Թուրքիայում երիտասարդները մեծանում են փակ անոթում: Հետագայում ոմանք արտասահմանում ուսանելիս բացահայտում են իրողությունը: Ինձ համար Եյլի համալսարանում կատարված այդ բացահայտումը ցնցող եղավ: Մենք խոսում ենք տասն ամսում առնվազն 600 հազար անձանց մահվան մասին: Եթե ռասիստ չենք, ապա պարտավոր ենք խորությամբ զգալ այդ սարսափները:

- Պնդո՞ւմ եք, թե երիտթուրքերի կառավարությունը ցեղասպանություն է գործել:

- «Ցեղասպանություն» տերմինը իրավաբանական սահմանում է: Իսկ ես պատմաբան եմ և փորձում եմ ըմբռնել 1915թ. մինչև Օսմանյան կայսրության անկումը տեղի ունեցած ահավոր դեպքերը:

- Ձեր կարծիքով Թուրքիայի Հանրապետությունը պե՞տք է ներողություն խնդրի տեղի ունեցածի համար:

- Երիտթուրքական շարժումն ավարտվեց 1923թ. հանրապետության ստեղծումով: Եթե դրա հիմնադիր Մուստաֆա Քեմալը հաջողության հասավ, դա մասամբ այն պատճառով էր, որ նա պատերազմի ժամանակ իրեն հերոսի պես էր պահել, մասամբ էլ այն պատճառով, որ նա կապ չուներ հայկական հարցի հետ: Երիտթուրքերի ազգայնականության վարկաբեկման պատճառով էր, որ քեմալական տարբերակը գերիշխեց իր ընդհանրական սկզբունքների և արևմտա-

[4] Գևորգ Խուդինյան, Քաղաքակրթությունների պայքարը և Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը, «Հայոց աշխարհ», 23 նոյեմբերի, 2000թ.:

մետ արժեքների շնորհիվ: Այս ամենը նկատի ունենալով, կարծում եմ, որ ներկայիս հանրապետությունը չպետք է ներողություն խնդրի:

- Դուք պնդում եք, թե հայերի բնաջնջումն իրականացրել է «Միություն և առաջադիմություն» կոմիտեին կապված մի գաղտնի կազմակերպություն՝ երիտթուրքերի կուսակցությունը: Կա՞ն արդյոք հրամանի ապացույցներ:

- Ակնհայտ է, որ գաղտնի կազմակերպությանը տրված հրամանը չէր կարող գրավոր լինել: Այդուհանդերձ, բազմաթիվ նշաններ վկայում են այդպիսի հրամանի գոյությունը: Վարչապետի ազգային արխիվների ծառայության հրապարակած «Հայերն օսմանյան վավերագրերում» աշխատության 69-րդ էջում այն ժամանակվա ներքգործնախարար Թալեաթ փաշայի հեռագիրն է՝ ուղղված Դիարբեքիրի նահանգապետին: Հեռագրում Թալեաթն ասում է, թե ինքը տեղեկացել է, որ Մարդինի շրջանի բոլոր քրիստոնյաները բնաջնջվել են: Նա պահանջում է, որ հայերի նկատմամբ ձեռնարկված ապահովական միջոցները չկիրառվեն քրիստոնյա մյուս համայնքների հանդեպ: Չնայած հեռագրի երկիմաստ խոսքերին, կարելի է եզրակացնել, որ Թալեաթն այդպիսով կարգադրում էր շարունակել հայերի բնաջնջումը:

- Թուրքիայի իշխանություններն անկե՞ղծ են արդյոք, երբ պահանջում են, որ այդ թեման թողնվի պատմաբանների գնահատմանը:

- Դա լոկ բարի մտադրությունների հայտարարություն է: Բայց իրականում պատմաբաններին թույլ չեն տալիս կատարել իրենց աշխատանքը: Այս տարվա մարտին Չիկագոյում թուրք և հայ պատմաբանները կարողացան ընդհանուր լեզու գտնել: Մեր հաջողության պատճառն այն էր, որ մենք չէինք բանակցում և մեր երկրների ներկայացուցիչները չէինք:

- Կարծո՞ւմ եք, թե մի օր Թուրքիայում Հայկական հարցի հետ կապված արգելքը կվերանա:

- Մենք դրան կհասնենք, եթե ապրենք ազատ հասարակության մեջ: Միայն այդ պայմանով կկարողանանք ընդունել 1915թ. սարսափելի իրողությունը: Մենք պետք է հոգեբանորեն հասունանանք, քանզի որևէ հնարավորություն չունենք աշխարհին համոզելու իրադարձությունների մեր տարբերակի ճշմարտացիությունը»:

Որպես բազմաթիվ հարցադրումների ամփոփում, ընթերցողների սեղանին ենք դնում ամերիկահայ նշանավոր հրապարակախոս Երվանդ Ազատյանի «Թուրքիան իր ինքնությունը հաստատելու ճգնաժամի մեջ» արժեքավոր հոդվածն ամբողջովին:

«Հենց Թուրքիան մտածում էր, որ Եվրամիության բաղձալի անդամակցությունն իր բռի մեջ է արդեն, արգելքների մի ամբողջ շարան եկավ տակնուվրա անելու նրա այդ գեղեցիկ երազը: Եվրոպական երկրները մեկը մյուսի ետևից սկսեցին ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Շվեդիային հետևեց Իտալիան, որին հետևեց Եվրախորհրդարանը: Իսկ վերջին հարվածը հասցրեց Ֆրանսիան, որը ոչ միայն հայանպաստ բանաձևն ընդունեց, այլև մի օրենք, որով ոճրագործություն է համարվում ցեղասպանության ժխտումը: Նույն հարցի վերաբերյալ Հռոմի պապի հայտարարությունը զարդապսակը հանդիսացավ այդ բոլորի:

Քաղաքականության մեջ իրադարձությունները հենց այնպես մեր ցանկությամբ տեղի չեն ունենում: Անհրաժեշտ է շահերի համընկնում: Հայաստանի նախորդ վարչակարգը Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը չընդգրկեց իր արտաքին քաղաքականության օրակարգում՝ այդպիսով ամբողջ աշխարհին հասկացնելով, որ կարիք չկա զբաղվելու դրանով: Բայց Քոչարյանի վարչակարգը հասկացավ, որ մինչև պետականորեն այդ հարցը չբարձրացվի, Թուրքիան ոչ մի հիմք չի ունենա վերանայելու իր ինքնավստահությունը Հայաստանի նկատմամբ: Եվ այս մոտեցումը տվեց իր արդյունքը, մանավանդ որ ճիշտ ժամանակին էր և համահունչ՝ Եվրամիության անդամ երկրների շահերին:

Եվրոպան ճաշակել և զգացել էր թուրքերի համը զանազան երկրներ որպես բանվոր թափանցած նրանց ներկայությամբ: Թուրքերի միջնադարյան մշակութային ու հասարակական արժեքները, նրանց երերուն տնտեսությունը, օտար կրոնն ու ամբողջովին աղճատված աշխարհընկալումը վաղուց տագնապ էին առաջացրել եվրոպական շատ երկրներում, երբեմն այն աստիճանի, որ գերմանական կառավարությունն օրենք ընդունեց վարձատրելու բոլոր թուրքերին, ովքեր կհամաձայնեին ընդմիշտ հեռանալ Գերմանիայից:

Մինչ Միացյալ Նահանգների կառավարությունն ակտիվորեն հետամուտ էր լինում Թուրքիայի անդամակցությանը Եվրամիության կազմում, Թուրքիայի վարքագիծն ու կարգավիճակը դարձյալ քննարկման առարկա դարձան Եվրոպայում: Մահմեդական արմատականության հնարավոր տարածումը, Կիպրոսի դեմ կատարված նախահարձակումը, Թուրքիայում քրդերի զանգվածային կոտորածներն ու մարդու իրավունքների խախտման աղաղակող փաստերն արդեն իսկ խիստ լարված վիճակում էին պահում Թուրքիայի հարաբերությունները Եվրոպայի հետ, որը 1987-ին ընդունած բանաձևով պահանջել էր Թուրքիայից հաշտվել իր տխուր անցյալի հետ և ըն-

դունել Հայոց ցեղասպանության փաստը: Այնպես որ, քաղաքական մյուս զարգացումներին առընթեր այս «ցեղասպանության» հարցը նույնպես դեր խաղաց Թուրքիային հակադրվելու գործում, մանավանդ, ինչպես նշեցինք, համահունչ էր եվրոպական երկրների շահերին:

Մեր ժամանակների ամբողջատիրական ոչ մի երկիր, ներառյալ նացիստական Գերմանիան և կոմունիստական Խորհրդային Միությունը, չի կարողացել վերահսկել զանգվածային լրատվամիջոցներն այնքան, որքան Թուրքիան է կարողացել կոծկել Հայոց ցեղասպանությունը: Լրատվության քողարկումն այնքան ամբողջական էր, որ մի ամբողջ ազգի կոտորածը դարձավ գոյություն չունեցող մի բան թուրք քաղաքացիների համար՝ նույնիսկ 1919-ի դատավարություններից հետո, երբ մեղավոր ճանաչվեցին ոճիրը կազմակերպողներն ու մահվան դատապարտվեցին, որոշ դեպքերում իրենց բացակայության պայմաններում: Մուսթաֆա Քեմալը կարողացավ այդ լռությունը նույնիսկ պարտադրել Եվրոպային և ամբողջ աշխարհին, որին որպես հետևանք Հիտլերը հանդգնություն ունեցավ 1939-ին չափազանց ինքնավստահ տոնով հարց տալ. «Ո՞վ է այսօր հիշում հայերի բնաջնջումը»:

Սակայն այդ սարսափելի ոճրագործությունը ճակատագրված էր մտասևեռուն դառնալու և հետապնդելու Թուրքիային, որն այսօր կայսերական փառասիրությամբ է մոլեգնում: Երկրի վարչապետ Բյուլենթ Էջևիթը մասնավորապես հավատացած է, որ Իրաքում գտնվող Մոսուլի նավթաղաշտերը պատկանում են Թուրքիային, որ օսմանյան ժամանակաշրջանից ժառանգած իրավունքով Թուրքիային կարևոր դեր է վստահված Բալկաններում, և դեռ նա պետք է իր գաղափարախոսությունը տարածի Կենտրոնական Ասիայում՝ վերակենդանացնելու Բահաէդդին Շաքիրի պանթուրանական ծրագրերը: Ի պատասխան ամերիկացի սենատոր Բիդենի այն հարցին, թե ինչպես է Թուրքիան պատրաստվում լուծելու Կիպրոսի հարցը, Էջևիթն ամբարտավան ձևով նշել է, որ Թուրքիան դեռ 1974-ին է լուծել այդ խնդիրը՝ գրավելով այդ սուվերեն երկրի ամբողջ տարածքի 38 տոկոսը:

Դժբախտաբար, Էջևիթի այս ամբարտավանությունը սնուցում է Մ. Նահանգները, որը գնալով մեծացնում է Անկարայի «ստիկանական» դերը Մերձավոր Արևելքում:

Բայց, հակառակ թուրքական կառավարության զայրացկոտ ժխտումներին, աստիճանաբար պարզ է դառնում Թուրքիայի համար, որ ահավոր ցեղասպանության հարցի վերաբերյալ լռությունը

պահպանելն այլևս հակասում է իր շահերին: Իհարկե, զանգվածային լրատվության մի շարք միջոցներ դեռ շարունակում են շեփորել կառավարության պաշտոնական դիրքորոշումը՝ սպառնալով ինչպես Հայաստանին, այնպես էլ եվրոպական երկրներին, սակայն հարցը գնալով ազգային համընդհանուր քննարկման առարկա է դառնում, որն էլ, երևի, սկիզբը կդառնա այս կնճռոտ հարցի հնարավոր լուծման: Մինչ թուրքական կառավարությունը պատժամիջոցներ է ծրագրում Հայաստանի և Ֆրանսիայի դեմ, առավել սթափ ձայներ արտահայտվում են հենց այդ ծրագրերի դեմ: Սեդաթ Սերթօղլու անունով մի հոդվածագիր, օրինակ, «Սաբահ» օրաթերթում ծաղր ու ծանամի է ենթարկում Ֆրանսիայի դեմ ձեռնարկած արտգործնախարարության քայլերը: Նա գրում է. «Շուտով մենք այդ միջոցները ձեռնարկելու ենք Բրիտանիայի, ապա մի երրորդ երկրի և ի վերջո՝ ամբողջ աշխարհի դեմ, և Թուրքիան այդ բոլորի հետևանքով իրեն մեկուսացված իրավիճակում է գտնելու: Եկեք սթափվենք և լրջորեն քննարկելով հարցը տեսնենք, թե ինչպես կարող ենք գլուխ հանել դրանից»:

Մեկ ուրիշ հոդվածագիր՝ Մեհմեդ Թեզքան, նույն «Սաբահ» օրաթերթում ավելի դիպուկ հարց է բարձրացնում գրելով. «Եկեք փոխանակ ցեղասպանության թեման բրիտանացիներին և ֆրանսիացիներին բացատրելու՝ տեսնենք, թե մենք մեր ժողովրդին բացատրե՞լ ենք դա: Հարցրեք ձեր շրջապատին, թե ինչ է կատարվել 1915-ին և տեսեք՝ քանի հոգի է պատասխանելու: Հեռուստատեսային վիկտորինաների ժամանակ հարցրեք, թե որևէ մեկը գիտի՞ այդ մասին: Բաց արեք դպրոցական դասագրքերը և տեսեք, թե դրանցում որևէ ակնարկ կա՞: Ոչ մի: Դա մի թեմա է, որի մասին մենք ոչինչ չգիտենք: Չգիտենք, որովհետև տաբու է եղել մեզ համար: Չպետք է ձեռք տայինք դրան, թե չէ մեր մատները կայրեին»:

«Ռադիկալ» շաբաթաթերթը, որը սովորաբար ամենահամարձակ հոդվածներն է տպագրում, Մինե Քերեքկանատի պատմվածքն է հրատարակել, որտեղ գլխավոր գործող անձը տառապում է ոճրագործի թոռ լինելու խոր ապրումներից՝ գիտենալով, որ իր պապը երիտասարդ մի հայ որբի է սպանել տեղահանությունների ժամանակ: Ուրիշներն առավել հաշտվողական տոն են հնչեցնում: Օրինակ՝ նույն «Ռադիկալում» մեկ ուրիշ հոդվածագիր նշում է, որ եթե անգլիացի պատմաբան Առնոլդ Թոյնբին և թուրք պատմաբան Թաներ Աքչամը գտնում են, որ իրոք հայերի նկատմամբ ցեղասպանություն է տեղի ունեցել, մյուս կողմից, սակայն, պատմաբան Բեռնար Լյուիսն այդ տեղահանությունները չի որակում «ցեղասպանություն»: Հոդվա-

ծի վերջում հեղինակը ափսոսանք է հայտնում, որ բաց թողնելով հնարավորությունը Թուրքիան չկարողացավ լեզու գտնել Տեր-Պետրոսյանի վարչակարգի հետ, որն ավելի զիջողական բնույթ ուներ:

Ինչպես տեսնում ենք, տեսակետների մեծ զանազանություն կա: Ոմանք կրակ են թափում հայերի հասցեին, ուրիշները քննարկումների կոչ են անում, իսկ երրորդ խմբի հետևորդները գտնում են, որ հարցը շատ է առաջ գնացել, որպեսզի հնացած միջոցներով կարելի լինի պայքարել, անհրաժեշտ է առավել համագործակցված քաղաքականություն վարել: Կան դեռ չորրորդ խմբի ներկայացուցիչներ, որոնք ցեղասպանության անհապաղ ճանաչման կողմնակիցներն են, քանի դեռ «հայերը չեն դիմել հաջորդ քայլին և փոխհատուցման պահանջ չեն ներկայացրել»:

Բազմաթիվ թուրքեր, որոնք երբեք չէին լսել հայերի դեմ իրագործված ցեղասպանության մասին, զարթնել են վերջին իրադարձությունների ցնցումից և հարց են տալիս, թե արդյոք իրենք ոճրագործ մի ազգ են: Այնպես որ, ինքնազննման, ինքնաճանաչման մի պրոցես է սկսվել Թուրքիայում: Թուրքիան իր ինքնությունը հաստատելու ճգնաժամի մեջ է: Ժխտողական արտահայտություններով հանդերձ, հարցը Թուրքիայում դարձել է ազգային քննարկման առարկա: Սթափ մտածողները Թուրքիայում գտնում են, որ եթե Թուրքիան չլուծի, այլ ուժեր աշխարհում կարող են լուծել այդ խնդիրը, գուցե նաև ի վնաս Թուրքիայի ազգային շահերի:

Չնայած առայժմ փոքրաթիվ, սակայն կան մարդիկ, ովքեր գտնում են, որ հարցը պետք է որոշեն երկու պետությունները՝ Հայաստանն ու Թուրքիան: Դա իրոք առողջ մոտեցում է: Ցեղասպանությունն իրագործողների և տուժած կողմի միջև երկխոսությունը կարող է հարցը դնել ճիշտ հունի մեջ և վերջնականապես լուծել հաջորդող սերունդների համար:

Նրանք, ովքեր Թուրքիայում պնդում են, թե պատմությունը պետք է թողնել պատմաբաններին, կամ թե ճշմարտությունը գտնելու համար անհրաժեշտ է հավելյալ ուսումնասիրություններ կատարել, պետք է իմանան, որ աննկատ ծկելու ժամանակներն առհավետ անցել են: Ճշմարտությունը վաղուց է հայտնի և ընդմիշտ դրոշմված է բոլոր վերապրողների հիշողության մեջ:

Ցեղասպանությունն, ամեն տրամաբանական կասկածից դուրս, ապացուցված է դեռ 1919-ին, երբ թուրք ջարդարարների նկատմամբ դատավարություններ տեղի ունեցան, և փաստաթղթեր կազմվեցին թուրքական դատարաններում:

Ցեղասպանությունն, ամեն տրամաբանական կասկածից

դուրս, ապացուցված է, երբ Լոզանի պայմանագրի բանակցություններում Անգլիայի ներկայացուցիչ լորդ Քերզոնը հարց տվեց թուրք ներկայացուցիչ Իսմեթ Ինոնուին. «Ո՞ւր անհետացան պատերազմից առաջ Անատոլիայում բնակվող 3 մլն հայերը»:

Եթե Թուրքիայում ներկայումս ընթացող ազգային համընդհանուր քննարկումները վերածվեն խղճի արթնացման աննախադեպ երևույթի, ապա կարող ենք հուսալ և ակնկալել, որ թունելի վերջում լույս ի վերջո կհայտնվի: Թուրքիան կկարողանա մաքրել իր խուսնացած պատմական իմիջը, իսկ մեր անմեղ զոհերը կկարողանան հանգիստ ննջել՝ իմանալով, որ Թուրքիան վերջապես հաշտվել է իր նողկալի անցյալի հետ»:[5]

2001թ. հունվարի վերջին օրերին Թուրքիայի զինված ուժերի գլխավոր շտաբի ինտերնետային ուեբ սայթում որպես «Առաջին էջ», հայտնվեց «Հայկական հարց» վերնագիրը կրող նյութը: Թուրքերի հակահայկական կրքերն էլ ավելի բորբոքելու համար ուեբսայթի առաջին էջի կենտրոնում զետեղվել է մի մեծ լուսանկար, որի մակագրությունն ամեն ինչ ասում է. «Սուբատան գյուղում հայերի կողմից (1918թ., ապրիլի 25-ին) նահատակված կանայք և փոքրերը ճեղքելով արգանդներից հանված երեխաներ»:

Շուրջ 7 էջից բաղկացած «Հայկական հարց» հոդվածը բաղկացած է ութ բաժնից: Դրանցում Թուրքիայի զինված ուժերը մոբիլիզացրել են թուրքական հակահայկական պատմագիտությունը, որի տեսակետները հայտնի են մեզ: Այսուհանդերձ, թուրքական գլխավոր շտաբի այն նյութի մեջ կան որոշակի նրբերանգներ, որոնք հնչում են առաջին անգամ:

«Մուտք» բաժնում թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբը պատմագիտական նյութի մեջ մտցնում է ռազմական գիտությանը հարիր բառեր ու մոտեցումներ: Այսպես, տեղեկացվում է, որ 1960-ական թթ. երկրորդ կեսից հայերը ծրագրված հակաթուրքական աշխատանք են տանում, որը, ըստ թուրքական գլխավոր շտաբի, ունի «4T» կոդային անունը: Պարզվում է, որ այդ խորհրդավոր կոդը թուրքերը կարողացել են գաղտնազերծել. հայոց «փուլ առ փուլ» պայքարի հերթական փուլերի թուրքերեն անունների լատինական սկզբնատառերն են: Այդ փուլերն են «տանիտիլմա, տանինմա, տազմինաթ, տոբրակ», այսինքն Հայոց ցեղասպանության քարոզչություն (ի դեպ, ըստ թուրքերի, «ահաբեկչության միջոցով»), այդ ցեղասպա-

[5] Տես «Ազգ», 30 հունվարի 2001թ.:

նության համընդհանուր ճանաչում, հատուցումներ և Թուրքիայից հողերի պահանջ:

Երկրորդ բաժնում թուրք զինվորականությունը, իր խնդիրները թողած, խորանում է հայ ժողովրդի ծագման, հայկական պետությունների գոյության (ավելի շուտ՝ չգոյության) և հայ-թուրքական շուրջ հազարամյա պատմության բավիղների մեջ: «Ըստ հանրագիտարանային աղբյուրների», իսկ իրականում, ըստ այս թուրք կեղծարարների, պարզվում է, որ հայ ժողովրդի կազմավորման տարածքն են եղել Երևանի ու Սևանա լճի շրջակայքը, Ուրմիա լճի հյուսիսն ու Մակուի մերձակայքն ընդգրկող տարածքը: Մի խոսքով՝ հայությանը լռելյան կոչ է ուղղվում իրենց պահանջատիրական պայքարի սլաքն ուղղել Իրանի դեմ՝ ազատագրելու Պարսկահայքը: Այս տեսակետը, մեր կարծիքով, առաջին անգամ է երևում թուրքական պաշտոնական և ոչ պաշտոնական շրջանակներում, ինչը մտորումների տեղիք է տալիս և առնվազն կոչված է փչացնելու հայ-իրանական ռազմավարական նշանակության հարաբերությունները:

Թուրք զինվորականների համաձայն, հայ պատմաբաններն իսկ միակարծիք չեն հայ ժողովրդի ծագման մասին. մի մասը հայերին համարում է հիթիթների ժառանգորդներ, մի ուրշ մասը՝ «Նոյի որդիներից Հայկի» հետնորդներ: Այստեղից, գեներալ-պատմաբանները եզրակացնում են, որ «տրևէ մի վայրում հայերի «սա մեր հայրենիքն է» հայտարարությունն անհիմն է»: Այսինքն՝ հայերը թեև ունեն բնօրրան (վերոնշյալ տարածքը), սակայն հայրենիք չունեն:

Շարունակելով իրենց պատմագիտական պրպտումները, թուրք գեներալները հայտարարում են, որ պատմության ամբողջ ընթացքում հայերը պետություն չեն ունեցել, այլ ընդամենը՝ «դերիբեյիություններ» (կիսանկախ իշխանություններ) ու մշտապես գտնվել են պարսիկների, մակեդոնացիների, արաբների, թուրքերի, և այլնի տիրապետության տակ: Պարզվում է, որ 1071թ. Մանազկերտի ճակատամարտում հաղթելով բյուզանդացիներին, սելջուկ թուրքերը հայերին ոչ միայն փրկել են «Բյուզանդիայի զուլում կառավարչությունից», այլև նրանց «մարդավայել ապրելու իրավունք են շնորհել»: Իսկ օսմանցի թուրքերը հայերի նկատմամբ իրենց վարած քաղաքականությամբ ստվերի մեջ են թողել նույնիսկ այս սելջուկներին: Հայերը երախտապարտ են եղել թուրքերին ու իրենց ծառայասիրությամբ արժանացել են «միլլեթի սադիկա» («հավատարիմ համայնք») կոչումին:

Երրորդ, Հայկական հարցի էությանը նվիրված բաժնում այդ հարցի ծագումն ամբողջովին կապվում է օտար մեծ պետությունների, մասնավորաբար Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի տարածաշրջանային շահագրգռությունների հետ, որոնց համար հայերը պարզապես որպես խաղալիք են գործածվել: Հայկական հարցը հայտարարվում է «Օսմանյան կայսրությունը փլուզելու և բաժանելու կայսերապաշտական քաղաքականության» մի գործիքը:

Չորրորդ բաժինը վերնագրված է «Հայոց ապստամբություններն ու նրանց կատարած ցեղասպանությունները»: Գլխիվայր շրջելով փաստերը, թուրք գեներալ-պատմաբանները հայերին ամբաստանում են ամենուրեք ապստամբություններ բարձրացնելու և թուրք խաղաղ բանկչությանը կոտորելու համար: «Հայերը թուրք ժողովրդին ամենից մեծ վնասը հասցրել են Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ իրենց իրականացրած ցեղասպանություններով»: Թուրք բարձրաստիճան զինվորականության համաձայն, հայերը ռուսների օգտին լրտեսություն են արել, փախել են զինվորագրումից, իսկ զինվորի շինել հագածներն էլ իրենց զենքով փախել ու միացել են ռուսական զորքին և ամենուրեք կոտորել թուրք բնակչությանը:

Հայերի այս «զրբությանը» սահման դնելու համար «Օսմանյան կառավարությունը, որպես մարդկայնական վերջին քայլ», ստիպված է եղել 1915թ. մայիսի 27-ին «աքսորի օրենք» անունով ծանոթ «տեղահանության և վերաբնակեցման» հրահանգ արձակել: Այս տեղահանության ու հայերի առաջ քաշած «այսպես կոչված» ցեղասպանության մասին է հոդվածի ամենաընդարձակ՝ 5-րդ բաժինը: Այս բաժնում թուրք գեներալները, մի կողմ դնելով պատմաբանի գրիչը, իրենց առաջն են դնում հաշվապահական մեքենան ու «ապացուցում», որ թուրքերը չէին կարող 1,5 մլն հայ կոտորել, քանի որ պարզապես այդքան հայ չէր էլ ապրում Օսմանյան կայսրությունում: Դեռ ավելին՝ որպես մարդկային էակ իրենց գոյատևման համար հայերը հազար փառք պետք է տան թուրքերին, որովհետև «Օսմանյան տերությունը եթե իր հայ հպատակներից փրկվել ցանկանար, դա կարող էր ձուլման ճանապարհով լուծել»: Այս տեսակետը առաջին անգամ է հնչում թուրքական պաշտոնական շրջանակների ամբիոնից:

Վերոհիշյալներից թուրքական կեղծագրի հեղինակները հանգում են այն հայտնագործությանը, որ «այսպես կոչված Հայոց ցեղասպանությունը հիմնովին հերյուրանք է, ... իրականությունից դուրս, ցնորք», որը «հաստատելու» համար մեջբերում են 1982թ. Մյունխենում պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանի ելույթից «Հայոց ցեղասպանությունն ապացուցված չէ» արտահայտությունը:

Թուրքական զեղծարարության 6-րդ բաժնում սահմանվում է

«Ցեղասպանություն» եզրը և բերվում են նորագույն պատմությունից ցեղասպանության օրինակներ՝ կարմիր խմերների, Ռուանդայի հուտուների և Բոսնիա-Հերցեգովինայում և Կոսովոյում «սերբերի վայրագության պատճառով սպանված հազարավոր մուսուլմանների» ցեղասպանությունները:

Արևմուտքի մեծ տերությունները շարունակում են Թուրքիան տարանջատելու իրենց քաղաքականությունը, որի դրսևորումն էլ նրանց կողմից «այսպես կոչված Հայոց ցեղասպանությանը» տիրություն անելն է:

7-րդ բաժինը նվիրված է «Հայկական ահաբեկչությանը». «Այս ստրատեգիան առաջին անգամ գործի է դրվել 1905թ. Աբդուլ Համիդ Բ-ի դեմ կիրառված ռմբահարումով»: Նկատի ունենալով վերջին ամիսներին թուրք-սիրիական հարաբերությունների բարելավումը, թուրք գեներալները Սիրիային չեն ընդգրկել «հայկական ահաբեկչությանն» օժանդակող երկրների շարքում՝ այդ պատիվը շնորհելով միայն կիպրացի և Հունաստանի հույներին:

Իրենց կեղծագիր-քարոզչաթերթիկը թուրք զինվորականներն ավարտում են «Այսօրվա իրավիճակը և եզրակացություն» բաժնով: Նրանք խիստ վրդովված են, որ Հայոց ցեղասպանության ճանաչման հետապնդումը Հայաստանում պետական քաղաքականության մակարդակի է բարձրացվել: Նրանք հատկապես դժգոհ են, որ Լ. Տեր-Պետրոսյանի «հարաբերականորեն խելամիտ» կեցվածքից հետո 1998թ. ընտրված Քոչարյանն ազատ գործունեություն է թույլատրել ծայրահեղ ազգայնական շարժումներին և Թուրքիայի նկատմամբ կոշտ քաղաքականություն է որդեգրել: Այսօրվա ՀՀ իշխանություններին թուրք գեներալիտետը երեք մեղադրանք է հորում. PKK-ի՝ թեկուզ անբացահայտ նեցուկ, Թուրքիայի հարևան, բայց ոչ բարեկամ պետությունների հետ դաշինք կազմելու աշխատանք, Լեռնային Ղարաբաղի հարցում կոշտ դիրքորոշում:

Թուրք գեներալները եզրակացնում են, որ Օսմանյան կայսրության փլուզումը հետապնդած նույն պետությունների ստեղծած Հայկական հարցն այսօր նույն շրջանակների կողմից նորից է բարձրացվում: Այս խաղում տուժողը միայն թուրքերն են: Արևմուտքը հետապնդում է Թուրքիան մասնատելու իր վաղեմի ծրագիրը, իսկ հայերը ձգտում են հատուցում ստանալու, ապա և հողեր ձեռք բերելու: Այս «փուլում» եզրակացությանը հասած թուրք գեներալները այսքանով էլ բավարարվում են ու չեն տալիս դասական ու հավիտենական հարցը՝ «ի՞նչ անել...»:[6]

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգների նոր նախագահի և Կոնգրեսի անդամների ընտրությունը ժամանակավորապես կարծես մեղմեց ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության դատապարտմանն ուղղված կրքերի դրսևորումը:

ԱՄՆ-ի Կոնգրեսի անդամները պատրաստվում են նոր պայքարի: Դրա մասին են վկայում կոնգրեսականների կողմից ընտրություններից հետո արված հայտարարությունները:

Կասկած չկա, որ 2000 թվականի ապրիլ ամիսը կդառնա հուզումների մի նոր պոռթկման վկա:

Միաժամանակ Վաշինգտոնը խորապես շահագրգռված է Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կայացմանը, ձգտելով նվազեցնել Ռուսաստանի ազդեցությունը Հայաստանում, այդ թվում նաև Հարավային Կովկասում:

Վերջին ամիսների քաղաքական կացությունը վկայեց այն, որ հայ-թուրքական հարաբերությունների հաստատման ճանապարհին էական խոչընդոտ է Հայոց ցեղասպանության փաստը: Այն խոչընդոտ է հավասարապես Թուրքիայի և Հայաստանի համար: Կասկած չկա, որ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների հաստատումը միմիայն ժամանակի խնդիր է, որի իրականացումը, անխուսափելի է:

Սակայն Թուրքիան հավատարիմ մնալով իր կեցվածքին, դիմում է կոշտ քայլերի:

2001թ. հունվարի կեսերին Թուրքիան չեղյալ համարեց իր համար առաջին լրտես-արբանյակ արտադրելու Ֆրանսիայի հետ կնքված պայմանագիրը, որի համաձայն 149 միլիոն դոլար արժողությամբ արբանյակի պատրաստումը իրականացվելու էր «Ալկատել» ֆրանսիական ընկերությանը:

Թուրքիայի ռազմական գերատեսչության ղեկավարը միաժամանակ հաղորդել էր, որ «Ժպիտ» ֆրանսիական ֆիրման նույնպես կարող է հանվել նոր սերնդի հազար տանկ արտադրելու՝ Անկարայի կողմից անցկացվող միջազգային հայտամրցույթից: Այդ նա-

[6] Գևորգ Յազըճյան, Թուրքիայի զինված ուժերը մոբիլիզացված են հայոց «4Т» ծրագրի դեմ, «Ազգ», 10 փետրվարի , 2001թ.:

խագիծը գնահատվում է 5-6 միլիարդ դոլար:

Ստամբուլում թուրքերը հրապարակավ այրեցին Ֆրանսիայի ազգային դրոշը, իսկ Թորքիայի խորհրդարանը ձեռնարկեց Ֆրանսիայի դեմ օրենսդիրների անելիքների քննարկման գործը: Փաստորեն Թուրքիայի հակաֆրանսիական հիստերիան սպառնալիքների հերթական դրսևորում է ընդդեմ Հայաստանի՝ հերթական ճնշում գործադրելու փորձ:

Թուրքական մամուլը իր դժգոհությունը հայտնեց Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության առնչությամբ Ադրբեջանի արձագանքից, նկատի ունենալով այն փաստը, որ Բաքուն որևէ պաշտոնական հայտարարությամբ հանդես չեկավ:

«Հուրիեթ» թերթը այդ կապակցությամբ հայտարարեց, որ «Թշնամին տնից է լինում», իսկ թերթերից մեկը իր հրապարակումներից մեկը վերնագրեց՝ «Բա ձեզ սազե՞ց պարոն Ալիև»:

Սպառնալիքների և շանտաժի քաղաքականությունը, որին հաճախ դիմում է Անկարան Հայոց ցեղասպանությունը ճանաչելու կապակցությամբ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Շվեյցարիայի և Իտալիայի դեմ, փաստորեն սպառել է իրեն: Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը հանդես եկավ հայտարարությամբ, որով իր պատրաստակամությունն էր հայտնում պաշտպանել ամերիկյան ապահովագրական ընկերությունների շահերը, որոնց դեմ ազգությամբ հայ 3000 ամերիկյան քաղաքացիներ հայցեր են ներկայացրել՝ պահանջելով վճարել այն գումարները, որոնցով ապահովագրված են եղել 1915-1923թթ. Օսմանյան Թուրքիայում ցեղասպանության հետևանքով զոհված իրենց պապերի և նախապապերի կյանքը:

Հաջողություն չունեցավ և ընդունելության չարժանացավ հայ-թուրքական երկխոսության գաղափարը, որի իրականացման համար ջանք չէին խնայում ԱՄՆ-ի և Թուրքիայի ղեկավարները: Թուրքիան դիմեց ծայրահեղ քայլի, փորձելով փակուղու մեջ դնել Հայոց ցեղասպանության ճանաչման հետ կապված հետագա գործընթացը:

2001թ. փետրվարի 20-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը հավանություն տվեց Ցեղասպանության ճանաչմանն ի պատասխան ընդունելիք օրինագծին: Ըստ «Թյուրքիե» օրաթերթի, օրինագծով Թուրքիան մերժում է պատմականորեն իբր չապացուցված և չընդունված «Հայոց ցեղասպանության» վերաբերյալ պնդումները և դրանք որակում որպես «թշնամական»: Հանձնաժողովի նախագահ Քյամրան Ինանը

հայտարարել է, որ Ֆրանսիայից հետո օրինագիծը թափանցել է այլ պետություններ և «դրա վնասը Հայաստանն է տեսնելու»: Թուրքական օրինագիծը դատապարտում է նաև Լեռնային Ղարաբաղի և ադրբեջանական տարածքների բռնազավթումը, տեղի բնակչության բռնագաղթը և մերժում ուժային մեթոդով տարածքների ընդարձակման սկզբունքը:

Թուրքիան սխալվում է իր հաշվարկներում: Անհուսալի ճիգերը նրան չեն փրկում 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում իրագործած ոճրագործությունը ուրանալու և ժխտելու համար:

21-րդ դարի առաջին իսկ տարում Հայոց ցեղասպանությունը իր ճանաչումը կստանա Շվեյցարիայի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ավստրիայի, Իտալիայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից:

Հերթը Թուրքիայինն է:

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԼԱՎՐԵՆՏԻ ԱՇՈՏԻ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ, ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Հանձնված է շարվածքի 16.03.2001թ.: Ստորագրված է տպագրության 20.04.2001թ.: Չափսը 60x84 1/16: Թուղթ № 1, տպագրական 7,2 մամուլ: Տպաքանակը 250: Պատվեր № 5: Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տպարան, Երևան, Աբովյան 15